ԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆ

ՅԲԲԵՆԱՐԱՆ ՅԵՎ ԸՆԹԵՐՑՄԱՆ ԱՌԱՋԻՆ ԳԻՐՔ

ՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆՆԵՐԻ և ՆԱԽԱԿՈԶԻԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

491.99-8
Կ-33

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ — 1932

20.05.2013
3-33
1005-10

Դաս

Դ ա ս

սա
դա

ասա

դաս ասա

Դդ Աա Սս

դաս

Դդ Աա Սս

1613
1613
20387-59

Սա դասակ է

սա դա-սակ է
դա-սակ է սա
ասա դաս կա
դասակ սա դաս է

Կկ Եե

Դասակ դաս կա
Սա դաս է.
Կկ Եե

Սա պահակ է

Սահակ, դաս կա:

Սա դաս է, հապա:

Ահա դաս կա—

ապա պահակ կա:

Պպ Հհ

Սահակ, հապա դաս կա
Պպ Հհ

Սա նավ է

Վասակ, տես նավ։

Սահակ տես սա նավակ է։

Սևա՛կ, նա Վահանն է։

— Դաս կա հա՞, Վասակ։

— Դաս կա, հայրա՛ Վահան։

— Ես ե—հասա։

Նն Վվ

Վասակ, սա նավ է:

Նավակն ես է, Վահան:

Նն, Վվ



Տանկ

— Վահե, տես—սա տանկ է։

— Տեսա, դա տանկ է, հայրա։

— Հասանն ասավ Վահեն վատ պահակ է հա՞։

— Դա կատակ է, տնավեր։

Տտ

Աս վատ տանկ է:

Վահան տես—սա տանկ է:

Տ-տ



Զրահապատ

Զավեն՝ զրահապատն ես է, տես։
Տեսա՞ր։
Տեսա, հապա, Արա։ Նրա վրա հրազեն կա։
Արդեն դա՞սն է։ Ես է վազեվազ հասա։
— Զավեն, ասա, Արան տա՞նն է։
— Ահա Արան։

Զզ Րր

-Զավեն, սա զրահապատ է։
-Լիրա, տես, նրա վրա հրա-
զեն կա:

Զզ Րր



Ոդանավ

Սա ոդանավն է։
Ոդանավի վրա պահակ կա։
Կարոն ոդանավորդ է։
Վաստակ, արի նավի վրա։
Զավեն, վազելով արի, վոր հասնես նավին։

Ոո Իի

Կարոն ոդանավորդ է:
Վաստակ, արի նավի վրա:

Ոո Իի



Օդապարիկ

Սա օդապարիկ է։

Կարո, արի դասի։

Արա, դաս կա նոր։

Պապիկ, օդապարիկ է սա։

Սա օդապարիկ է

Պապիկ նոր դաս կա, արի

1 2 3 4 5

I II III IV V



Սա սավառնակ է

Սա սավառնորդն է։
սա—ռադիո,
սա—նռնակ։
Վահե, նռնակն առ արի։
—Զավեն, դաս առա՞ր նոր։
—Իհարկե առա։
Սավառնակի վրա ռադիո կա։

Ռռ

Սա սավառնակ է։

Սավառնակի վրա ռադիո կա։

Ռռ

6 7 8 9 10

VI VII VIII IX X

Ողաչու Ավոն

—Դանչո, ուր է ողաչուն, կանչի։

—Ինչու, ինչ կա։

—Նա պիտի սավառնակ նստի։ Զորս որ ունի։ Պիտի հասնի Ռոստով ու դառնա։ Կարևոր է։

—Ողաչու Ավոն ինչ առնի իր հետ։

—Նա պիտի առնի իր հետ ռադիո ու 10 նռնակ։

—Ավոն ի՞նչ զինվոր է. նա ունի դիպուկ կրակ։

Չչ, Ու ու

Դանչոն ողաչու չէ։
Ավոն ունի դիպուկ կրակ
ու կտրուկ սուր։
Նա վարպետ ողաչու է։ Ինչ
ասես, կանի։

Չչ, Ու ու



Կարմիր մարտիկներն ինչ են անում

—Մամիկոն, Մուրադն ի՞նչ է անում։

—Չեմ իմանում, սովորում է։

—Մենակ է սովորում։

—Չէ, Մեսրոպի, Մինասի, Հովակիմի ու Մարտիրոսի հետ։

Սիրով է սովորում։ Հիմա արդեն ազատ կարդում է։

—Ապրի Մուրադն, ապրի։ Իսկական կարմիր ռազմիկ է։ Վոչ մի որ զուր չի վատնում։ Նա մի չորս տարի հետո պիտանի հրամանատար պիտի դառնա։ Իզուր չէ, վոր կարմիր մարտիկի անունն է կրում։

Մմ

Ով չի սովորում, նա պիտա-
նի ռազմիկ չէ։ Կարմիր մար-
տիկն ամեն որ պիտի սովորի։

Մմ

10. 20, 30. 40, 50, 60, 70. 80, 90

Մեր հրամանատարը

—Ընկեր Մինաս, էն ով է։

—Մեր հրամանատարը։

—Ինչ է անունը։

—Անունը Վահան է։ Ընտիր հրամանատար է։ Անընդհատ կարդում է։ Նա մեզ ասում է.—կարմիր ռազմիկը պիտի սովորի, սովորի, սովորի։ Ով սովորում է, նրա կրակը դիպուկ է, իսկ սուրը կտրուկ։ Ով չի սովորում, նա չի դիմանա հակառակորդին, նա կպարտվի։ Իսկ կարմիր մարտիկը չպիտի պարտվի։

Ըը

Ընկեր կարմիր մարտիկ, անընդհատ սովորիր: Ով սովորում է, նրա կրակը դիպուկ է ու սուրը կտրուկ: Ով ունի ուսում ու սուր, կմնա ամուր ու կուռ:

Ը ը

11, 12 13, 14, 15, 16, 17, 18, 19



Կարմիր բանակը

Մեր բանակը հզոր է։ Նա ունի ուսում ու ուժ։ Նա բանվորի ամուր բազուկն է։ Մեր հակառակորդների բանվորները մեզ բարեկամ են։ Դրա համար ամուր է ու կուռ մեր բազուկը։ Մեր բազուկը պիտի ազատի բանվորներին։

Բբ

Կարմիր Բանակը բանվորի բանակն է: Մեր բազուկը պիտի ազատե բանվորներին:

Բ բ

20, 21, 30, 31, 40, 41, 50, 51



Մեքենան — Կարմիր բանակին

Ուսումը — Կարմիր բանակին։

Զինենք Կարմիր բանակը ռազմական մեքենաներով։

Տուր մեքենա.

Տուր մոտոր.

Մեքենան հաստ զենք է։

Կարմիր մարտիկներ, պետք է տիրապետեք ռազմական մեքենաներին։

Մեր հակառակորդները քանի՜ տեսակ ռազմական մեքենաներ ունին։ Ինչու մենք չունենանք։ Ով ունի ուսում ու մեքենաներ, նա հզոր է ու անպարտ։

Քք

Զինենք Կարմիր Բանակը մեքենաներով: Մենք պետք է տիրապետենք մեքենաներին:

Քք

12, 23, 34, 45, 56, 67, 78, 89, 91

Իմ հրացանը

Տեսեք՝ ինչպես մաքուր եմ պահում իմ հրացանը։ Չէ՞ որ նա իմ հավատարիմ ընկերն է։ Հրացանիս համարը միտս եմ պահում, որ բնավ չմոռանամ։ Ամեն որ հենց որ վեր եմ կենում, սրբում եմ ու սարքին պահում իմ հրացանը։

Սարքին հրացանից դիպուկ է կրակվում։

Մենք ցարի զինվոր չենք։ Մեր հրացանը բանվորի դեմ չէ։ Մենք բանվորի համար ենք կռվում։ Մեր հրացանը ամեն տեսակի ցեցերի ու ցարերի դեմ է։ Հենց դրա համար է որ սիրում եմ իմ հրացանը։ Հրացանով է, որ ցիրուցան պիտի անենք ցեցերին, սարդերին ու նրանց ցանցերը։

Ցց

Ցեցերի ու ցարերի դեմ է մեր հրացանը: Աշխատավորի մենք ավելի ու ավելի կառուցում ենք. վարում ու ցանում:

Կկ

ՍԱՐՔԻՆ ՀՐԱՑԱՆԻ ԿՐԱԿԸ ԴԻՊՈՒԿ Է



Գնդացիր

Գուրգենը գնդացրորդ է։ Նա գիտե գնդացիրի մասերը. քանդում ու նորից սարքում է։ Գագիկը նրա ընկերն է։ Գագիկը նորակոչիկ է։ Նա դեռ չգիտե գնդացիրի կազմը։ Գուրգենը սիրով բացատրեց Գագիկին գնդացիրի ամեն մի մասը։ Գնդացիրը հրացանից հզոր է։ Հրացանի մեկ գնդակի դիմաց նա 50 գնդակ է նետում։ Մի ամիս հետո Գագիկն արդեն սովորեց գնդացիրի մասերը, հրացանի մասերն ու ամեն տեսակ զենքերի մասերը։ Նա գոհ է իր ուսուցիչ Գուրգենից։

Գագիկը հիմա գրում կարդում է։ Նա Կարմիր բանակում սովորեց։ Հիմա նա կարգին գրագետ է։ Արդեն նամակ է գրում իրենց տուն։

Գ·գ

Գուրգենը գիտե գնդացիրի մասեր: Նա Գագիկին սովորեցնում է: Գագիկը գոհ է Գուրգենից:

Գ գ

ԴԱՎԱԴԻՐՆԵՐԻ ԴԵՄ ՄԵՐ ՎԱՌՈԴԸ ՉՈՐ Է

Թնդանոթ

Կարմիր բանակն ունի բազմաթիվ թնդանոթներ։ Բացի թնդանոթից կան բազմաթիվ հրացաններ, սավառնակներ, գնդացիրներ, զրահապատներ, տանկեր ու ամեն տեսակի մեքենաներ։

Կարմիր մարտիկ, պահպանի՛ր Կարմիր Բանակի ռազմական մեքենաները։

Թե Թորոսը, թե Թոմասը թեթևամիտ վերաբերմունք ունեն դեպի մեր մեքենաները։ Ամոթ նրանց։ Նրանք դրանով թև ու թիկունք են դառնում մեր հակառակորդների համար։

Կարմիր Բանակում բազմաթիվ ազգեր կան— թուրք, քուրդ, թաթար, չեչեն, ռուս, վրացի... Ամենքը մի ընտանիք են, մի սիրտ, մի հոգի։

20387-59

Թթ

Կարմիր Բանակն ունի բազմաթիվ թնդանոթներ:

Թորոսն ու Թոմասը թեթևամիտ են: Ամոթ նրանց:

Թ թ

100, 200, 300, 400, 500, 600, 700, 800, 900

Կարմիր դրոշի շքանշան

Աշոտն ու Շավարշը գիտակից կարմիր մարտիկ են։ Նրանք հրաշալի գիտեն, թե ինչի համար են կռվում, թե ինչ է նշանակում կարմիր դրոշը։

Շավարշը կարմիր գվարդիական է։ Շատ հին հերոս է նա։ Հիմա նա ունի կարմիր դրոշի շքանշան։

Աշոտը 1920 թվի հերոսներից է։ Աշոտը միշտ ասում է. «Կարմիր դրոշի շքանշանից բացի ուրիշ պատվո նշաններ ունիմ. դա իմ սպիներն են»։

Մինչև 1917 թիվը Շավարշը բանվոր էր Տուստովի գավոդում։ Իսկ Աշոտը մինչև 1920 թիվը բատրակ էր Շամշադինում։

Հիմա նրանք կարմիր հրամանատար են։

Մենք նրանց շատ ենք սիրում։

Շշ

Շավարշն ու Աշոտն ունեն կարմիր դրոշի շքանշան: Նրանք շատ հին հերոսներ են:

Շ շ

110, 120, 130, 340, 570, 690, 750, 990

Ընկեր Լենինը

Ընկեր Լենինը պրոլետարիատի ուսուցիչն է։

Լենինիզմը մեր դրոշն է. վեր պահենք Լենինի դրոշը։ Լենինը կտակել է ամրացնել պրոլետարիատի դիկտատուրան։ Լինենք հավատարիմ լենինիզմի ըսկզբունքներին. կատարենք նրա բոլոր պատգամները։ Լենինը կտակել է ամրացնել Կարմիր Բանակը։

Ամրացնենք պրոլետարիատի դիկտատուրան.

Պաշտպանենք սոցիալիզմի կառուցումը.

Լլ

Լենինը հեռանալով մեզանից, կտակել է ամրացնել պրոլետարիատի դիկտատուրան: Լենինիզմը մեր դրոշն է:

Լ լ

101, 708, 906, 1000, 1100, 1270, 1932

Ղեկավարը

Ընկեր Ստալինը Համկոմկուսի քարտուղարն է։ Լենինի մահից հետո մեր ղեկավարը ընկ. Ստալինն է։ Նա Լենինի ամենահմուտ և հավատարիմ աշակերտն է։ Լենինի նշած ուղիղ ուղիով նա մեզ տանում է դեպի սոցիալիզմի հաղթանակը։ Ցարի օրով քանի՜ անգամ բանտարկվել ու աքսորվել է։ Քաղաքացիական կռիվներին մասնակցել է ղեկավար պոստերում. դրա համար էլ պարգևատրվել է Կարմիր Դրոշի շքանշանով։ Գաղափարական ասպարիզում կռվել է ամեն տեսակի թեքումների ու լենինիզմի աղավաղումների դեմ։ Միշտ անաղարտ է պահել լենինիզմի դրոշը։ Նրա կուռ կամքը, կարող միտքը հավատ են ներշնչում պրոլետարիատին։

Ղղ

Ընկեր Ստալինը Լենինի նշած ուղիղ ուղիով մեզ տանում է դեպի սոցիալիզմի հաղթանակը։

Ղ ղ

1001, 1011, 1111, 2080, 4807

Ժամանակի արժեքը

Ամեն ռազմիկ լավ պետք է ըմբռնի ժամանակի արժեքը։ Մարտի ժամանակ րոպեն անգամ խիստ թանկ արժի։

1920 թվին Կարմիր բանակը պատերազմում էր սպիտակ լեհերի դեմ.

Մեր 511-րդ գունդը դիրքերումն էր.

Լուր ստացանք թե լեհերը մտադիր են գրոհի անցնել.

Ստուգելու համար մարդ ուղարկեցինք.

Գնացողները 10 րոպե ուշացան.

Թշնամին անակնկալ կերպով վրա տվեց.

Մենք շատ կորուստ ունեցանք.

Պետք է ուղիղ բաժանել ժամանակը մի օրում.

Պետք է ժամանակին վեր կենալ, ժամանակին ուտել, ժամանակին պարապմունքի գնալ, ժողովներին լինել առանց րոպե անգամ կորցնելու.

Ժամանակի ռեժիմը շատ խիստ պետք է պահպանել.

Ժժ

Մեր գործարանները

Մենք շատ գործարաններ ունենք։ Տարեց տարի մեծ ծավալ են ստանում մեր գործարանները։

Հիմա մենք ունենք մանածագործարան, կաբելի գործարան, կոնսերվի գործարան, մետաքսագործարան, կաշեգործարան ու շատ ուրիշ գործարաններ։

Գործարաններին կից մենք բաց ենք անում ակումբներ, բանվորական հանրակացարաններ, մանուկների համար մսուրներ ու հրապարակներ։

Ծծ

Ծնողները ծծկերներին տանում են մանկամսուր կամ հրապարակ, իսկ իրենք գնում են գործարան իրենց գործին։

Գործարանն ունի ակումբ, բանվորական հանրակացարան, մանկամսուր, մանկահրապարակ։

Ծեր բանվորին կենսաթոշակ ենք տալիս։

Ծ ծ

ՄԵՐ ԿՈԼԽՈԶԸ

Անցած ուրբաթ մեր հանգստի օրն եր։ Վորոշեցինք բրիգադ կազմել և գնալ օգնելու «Անաստված» կոլխոզին։ Մեզ հետ եր դասակի հրամատար Խորենը, փաշտի հրամատար Աշխենը ու վաթսունից ավելի ուրիշ ընկերներ։

Վաղ առավոտ եր, մենք արդեն կոլխոզումն ենք։ Բաժանվեցինք խմբակների։ Աշխատանքը բաշխեցինք խմբակների վրա։ Բամբակ չանաքելու ժամանակն եր։ Խմբակ խմբակի հետ, նահատ անհատի հետ մրցում եր։

Աշխատանքը պրծանք կանխորոշված ժամանակից մի ժամ շուտ։ Էլ ուրախ կատակներ, էլ ծիծաղ.

— Խաչիկին լավ խաղից հանեցիք, — ասում էր Խորենը։

— Խոխա խոմ չեմ, վոր խաղից հանեք։ Իմ մազերը վաղուց է բռնել վառոդի ծըխի մեգ, — պատասխանում է Խորենը։

Կոլխոզնիկները ուրախ խնդում են ու ասում.

— Կեցցեք, ախպեր։ Առաջիկա աշխատանքին կսպասենք։

Խ խ

Թեյ

Չինաստանում թեյ շատ են մշակում: Կուլիները (չին բանվորները) օրական 10—15 ժամ բանում են, բայց ստանում են միայն կոպեկներ: Կապիտալիստների համար այդ շատ շահավետ է: Դրա համար էլ նրանք բոլորն աչք են տնկել Չինաստանի վրա:

Մեզ մոտ թեյ մշակում են Վրաստանում: Բազմաթիվ ռուս, հայ, թուրք, վրացի, մինչև անգամ չին բանվորներ զբաղվում են դրանով:

եյ, այ

Ցեյլոնը, Աֆրիկան, Ավստրալիան, Հնդկաստանը, Ճապոնիան ու Չինաստանը թեյ են մշակում:

Նայեք գիրքը, որ ամեն տեղ թեյ են բուսեր:

եյ, այ

Կարմիր մարտիկ, կարմիր պետ
Ընկերներ են իրար հետ.
Գիտակից են, մարտունակ,
Միշտ կտանեն հաղթանակ:

Նախակոչիկը

Յալդուզ տատը մի օր հարցնում է իր թոռ Յեբեմին.

—Եդ ինչու յես ամեն օր զինվոր խաղում: Յեթե զինվոր ես, ինչու յես տանը քնում, ինչու զինվորի շոր չես հագնում:

—Յես նախակոչիկ եմ, Յալդուզ տատի:

—Նախակոչիկն ինչ է, այ տղա: Յարալենց Յեգսանի թոռն էլ է նախակոչիկ, Յեգորենց Յաշան էլ, Յեգանենց Յեսթերի տղան էլ. քա յես ինչ իմանամ: Եդ ինչ նոր բան է:

—Նախակոչիկն, այ, ինչ բան է. դու լսիր, յես քեզ բացատրեմ, տատի: Դու գիտես, որ յես այժմ ազատ եմ: Պարապ-սարապ ման գալու տեղ լավ չէ՞, որ յես հիմա սովորեմ ու աշխատանքի ժամանակ գործից չկտրվեմ: Այս մեկ: Յերկրորդ. յեթե յես սովորած գնամ Կարմիր Բանակ, յերկու տարվա ընթացքում յես հեշտ կսովորեմ ռազմական ու քաղաքական գիտելիքները: Յերրորդ՝ նախակոչյան աշխատանքը պակասեցնում է պետության ծախսերը: Տնտեսած գումարը կարելի յե ծախսել մեր սոցիալիստական տնտեսության վրա.

Յա, յա, Յե յե

Բատրակ Յեղոն

Յեղոն Յուվայում յերկար տարիներ բատրակ եր յեղել: Յերբ Կարմիր Բանակ մտավ, դեռ անգրագետ եր:

Նոր վոր յեկել եր, դեռ ոտարություն եր քաշում: Տխրում եր: Կարոտում եր գյուղը, կին ու յերեխաներին:

Բայց մի քանի որ չանցած՝ ընտելացավ նոր կյանքին: Մտերմացավ ընկերների հետ: Մի որ գյուղից նամակ եր ստացել և ուզում եր պատասխանել: Յես գրեցի: Յեղոն այնպես կարոտով նայում եր տառերին:

Դրանից հետո Յեղոն համառությամբ սկսեց աշխատել: Յեվ ահա յերկու և կես ամիս հետո հետևյալ նամակն եր գրել իր ամուսնուն.—

ՍԻՐԵԼԻ ՅԵՎԱ,

Յես գոհ եմ իմ կյանքից: Կարմիր Բանակը մի մեծ դպրոց ե: Յես սովորում եմ և՛ (յեվ) ռազմական գիտելիքներ, և՛ քաղաքական գիտելիքներ, և՛ գրել կարդալ: Գրագիտությունը շատ դժվար բան չե: Միայն պետք ե աշխատել: Դու ես դյուրությամբ կսովորես: Գնա լիկկայան, յերեկոյան դպրոցները: Քեզ մրցության եմ հրավիրում: Յերկու տարի հետո մենք կհանդիպենք գյուղում. տեսնենք ով շատ բան ե սովորել:

Մյուս անգամ հուսով եմ քո գիրը կարդալ:

Գրիր մեր կոլխոզի կյանքից:

ՅԵ. ՀՅՈՒՍՅԱՆ

Յեվ և, յու

Նոյեմբերի 29-ը

Դաշնակների՝ ժամանակ Յերևանը և ամբողջ Հայաստանը վատ որեր եյին ապրում:

Ալան-թալանը, սովը քայքայել եյին յերկիրը· խուլ անկյուններով անկարելի յեր անցնել: Ամեն տեղ վտանգ եր սպառնում:

Դա բուրժուական Հայաստանն եր, Դաշնակների Հայաստանը:

Բանվորներն ու գյուղացիներն ապստամբեցին: Կարմիր Բանակը Հայաստանը մաքրեց խմբապետներից և բուրժուներից:

Հայաստանը խորհրդային դարձավ:

Հայաստանում սկսվեց սոցիալիստական շինարարություն:

Գյուղացիները կոլտնտեսություններ, արտելներ են հիմնում: Սկսվում ե նոր կյանք:

Դա նոր Հայաստանն ե. Խորհրդային Հայաստանը, յեղբայրացած մյուս հանրապետությունների հետ:

ե, յի

Հայաստանի խորհրդայնացումը տեղի ունեցավ 1920 թվի նոյեմբերի 29-ին:

Կարմիր Բանակի մուտքը Երևան

Ժամը յոթին, յերբ լույսը նոր էր բացվել, Գարուշը յեկավ մեզ մոտ։

Յերբեք յես նրան այդպես այլայլված չէի տեսել։ Արդյոք բա՞ն է պատահել։ Նա թեև գույնը գցել էր, բայց տխրության նշույլ չկար յերեսին։ Նայեց չորս կողմը, մոտեցավ և կամաց ասաց.

—Աչքդ լույս, շուտով մերոնք գալու յեն։

—Այո՞, վո՞րտեղից իմացար,—հարցրի յես։

—Գարաժում աշխատողներից իմացա։ Մարդու չասես, նույնիսկ քույր Յեսթերին էլ։ Լսող-նայող չկա՞։

—Չէ՛, մի՛ վախենա։ Հանգիստ գործիդ յեղիր։

Գարուշը գնաց։

Անցավ յոթ օր, յերբ յեկան մերոնք։

Կարմիր դրոշակները ծածանվում եյին Յերևանում։ Բանվորներն ու գյուղացիներն ուրախությամբ դիմավորում եյին Կարմիր բանակին։

ու. յ., յո

ՋՐԱՆՑՔՆԵՐ

Նոր կառուցված ջրանցքները շատացնում են մեր ջրովի հողերը։ Մինչ այժմ Հայաստանում կառուցվել են Եվջիլարի, Շիրակի, Եջմիածնի, փոքր Սարդարաբադի, Շահումյանի, Այղր-գյոլի և մի շարք այլ ջրանցքներ։ Այժմ կառուցվում են մի ամբողջ շարք նոր ջրանցքներ։

Մեծ Սարդարաբադի ջրանցքը ջրելու է 45,000 հեկտար հող։

Ջջ

Հեյ ջա՛ն

Հեյ ջա՛ն, ինչ սիրո՛ւն է մեր յերկիրը սովետի

Ռազմական անկյուն

Փիրումենց Փանոսը նախկին կարմիր բանակային էր։ Փարաքար դառնալուց մի ամիս չանցած, նա ռազմական անկյան գործը գլուխ բերեց։ Հարց հարուցեց գյուղխորհրդում, կուսակցական և կոմյերիտական կազմակերպությունների առաջ։ Իր ջանքերը զուր չանցան։ Խորհրդային հասարակայնության աջակցությամբ ամեն ինչ նախապատրաստեց։ Բացումը նշանակված էր փետրվարի 23-ին, Կարմիր բանակի օրը։

Հանդեսին ներկա յեր ամբողջ գյուղակտիվը։ Փանոսի ընտանիքը, մեծ ու փոքր, այնտեղ եյին։ Կինը, Փեփրոնեն, վոր փոստումն էր աշխատում, օգնում էր մարդուն։ Նույնիսկ փոքրիկ Փիլոսը, Փանոսի 6 տարեկան տղան օգնում էր ծնողներին։ Բոլորի դեմքն ուրախությունից փայլում էր։

Սկսվեց մրցությունը։ Նշան եյին խփում և՛ հին կարմիր բանակայինները, և՛ կոմյերիտականները, և՛ նախակոչիկները։

Կանանցից առաջին մրցանակը տարավ Փեփրոնի փոքրիկ քույր կոմյերիտուհի Փիուրը։

Փ. փ.

Ճիշտ նշանը

Ճամբարում կարմիր բանակայինները վիճում էյին։

— Ով գիրք չի բռնում նա հրացանն էլ ճիշտ չի բռնի, — ճգնում էր ապացուցել Ճուղուրյանը։

Ճուղուրյանին ընկերները ճանաչում էյին իբրև սրամիտ տղա։ Ճարտար լեզու յել ուներ։ Շատ էր կարդում։

— Դու յել բան ասացիր, էլի, — մեջ ընկավ Տաճատը։ — Յես մարդիկ գիտեմ, վոր կարդալ չեն կարող, բայց լավ նշան են խփում։ Ա՛յ օրինակ ցարական բանակի զինվորները։ Նրանք անգրագետ էյին։ Ով էր ուսման մասին մտածում։ Բայց թե ճարպիկ նշան բռնողներ կային մեջները։

— Չէ, սիրելիս, նրանք սխալ էյին նշան բռնում։ Ա՛յ, մեկը հենց յես։ Յես սպիտակ բանակում յեղել եմ։ Ճակատում հաճախ պահակ եմ յեղել։ Կարծում էյի իմ տեղումն եմ։ Բախտի բերմունքով քիչ-միչ կարդալ գիտեյի։ Մի օր կարմիրները «Կարմիր մարտիկ» թերթը թողել էյին ճակատում։ Կարդացի իհարկե թաքուն։ Վոնց վոր հանկարծ լույս բացվեր ինձ համար։ Այնուհետև ծածուկ գրքեր էյի ճարում ու կարդում։ Հետզհետե գլխի ընկա, վոր յես մինչ այդ սխալ եմ նշան բռնել։ Հրացանս չեմ ուղղել նրանց դեմ, վոր պետք էր։ Յես չգիտեյի՝ ով է մեր իսկական թշնամին։ Փախա անցա կարմիրների կողմը։ Հիմա, սիրելի Տաճատ, յես նշանը ճիշտ եմ բռնում։ Վայ նրան, վոր կընկնի իմ նշանի տակ։

Ճ Ճ

Ձորում

Ձմեռ էր։ Դաշտ ու ձոր ձյունով պատած էր։

19 հոգի կտրվել էյինք մեր զորամասից և փակվել ձյունապատ ձորում։ Ձյունը բոլոր հետքերը ծածկել էր։ Կորցրել էյինք ճանապարհը։ Չգիտեյինք՝ ինչպես հասնենք մեր զորամասին։

Թշնամին առաջանում էր։ Շուտով ձորը նրա ձեռքն էր անցնելու։ Մեզ մնում էր կամ անձնատուր լինել, կամ մեռնել։ Ի՞նչ կարող էյինք անել ընդամենը 5 հրացանով և մի գնդացիրով։ Արդեն ձեռք էյինք քաշել ամեն բանից։ Լուռ, անձայն չորս կողմն էյինք դիտում։ Ձիերի և մարդկանց դիակներ, ձախ ու աջ արյան հետքեր...

Հանկարծ տեսնում ենք մի ձիավոր։ Ձիու սանձը բաց թողած շտապում է դեպի մեզ։ Հեռվից ձայն է տալիս, նշաններ է անում։

Մերոնցից էր։ Յեկավ հասավ։ Ձորագետցի Ընձակ բիձեն էր։ Փորձված պարտիզան։ Պղնձաձուլարանի հին բանվոր. անձնվեր հեղափոխական։ Կարծես նրա դեմքն էլ պղնձից ձուլված լիներ։

Ընձակ բիձայի յերևալը մեզ սիրտ տվեց։ Նա լավ ծանոթ էր այդ կողմերին։ Նա միակն էր, վոր գիտեր դեպի մերոնք տանող ճանապարհը։

Բայց գնալ այդ նեղ ճանապարհով առանց պաշտպանվելու — անհնար էր։ Կարող էյինք գերի ընկնել։ Անհրաժեշտ էր, վոր մեկը կանգնեցներ թշնամուն, մինչև մյուսներն ազատվեյին։ Բայց ով էր ձեռք քաշել իր կյանքից։ Ուզում էյինք վիճակ ձգել։ Թշնամին շատ էր մոտեցել։ Մեկ էլ տեսնենք Ընձակ բիձեն արդեն գնդացիրը ճարճատում է թշնամու վրա և ձախ ձեռքով մեզ ազատվելու ճանապարհն է ցույց տալիս։

— Էլ վոչ մի րոպե չկորցնե՛ք, շտապեցե՛ք, ազատեցե՛ք ձեզ բարձր ձայնով գոռում էր նա։

Ձ Ձ

Յերկրային զորամասեր

Մեր Կարմիր բանակի թիվը միայն 562 հազար է։ Մեր հարեվանների՝ Լեհաստանի և Ռումինիայի բանակներն ունեն 500 հազարից ավել մարդ։

Բնակչության ամեն մի 1000 մարդուն ընկնում է՝

Մեզ մոտ — մոտ 4 կարմիր բանակային։
Ֆինլանդիայում — 10 զինվոր։
Ռումինիայում — 10 »
Լեհաստանում — 10 »
Լատվիայում — 11 »
Եստոնիայում — 13 »
Ֆրանսիայում — 17 »

Մեր թշնամիները շատ են։ Յեթե հարձակվեն մեզ վրա, մենք մեծ բանակ պետք է ֆրոնտ դուրս բերենք։ Մեզ հարկավոր է պահեստում ունենալ մեծ քանակով լավ պատրաստված մարդիկ։

Վորտեղ սովորեցնենք նրանց։

Կադրային բանակը փոքր է։ Դրա համար մենք ունենք յերկրային զորամասեր։

Ցարական բանակում։

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ—ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՅԻ ԲԱՆԱԿՆ Է

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ ՅԵՎ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿՆԵՐԸ

(ԸՍՏ ԼԵՆԻՆԻ)

Ցարական բանակը ծառայել է կալվածատերերին և բուրժուաներին։ Նրանց հրամանով ցարական բանակը ճնշել է բանվորների և գյուղացիների ապստամբությունները։ Ցարական բանակը նոր յերկրներ գրավելու և բազմաթիվ ժողովուրդների ճնշելու համար է ծառայել։

Այդպես են կառուցված և մնացած բանակները, վորտեղ իշխանությունը գտնվում է կալվածատերերի և ֆաբրիկանտների ձեռքում։ Միայն Կարմիր բանակն է, վոր ծառայում է աշխատավոր ժողովրդին։

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՅԻ ԲԱՆԱԿՆ Է

(ԸՍՏ. ԸՆԿ. ՍՏԱԼԻՆԻ)

Կապիտալիստական յերկրներում ժողովուրդը վախենում է բանակից։ Մեզ մոտ բանակին սիրում և հարգում են, Կարմիր բանակի համար հոգում են։

Ի՞նչու։ Վորովհետև Կարմիր բանակը չի ծառա-

յում պարոններին, այլ ծառայում է ազատագրված բանվորներին և աշխատավոր գյուղացիներին։

Մեր բանակը բանվոր դասակարգի դիկտատուրայի բանակն է։

Կարմիր բանակը, աշխատավոր ժողովրդի յեղբայրության բանակն է. նա պաշտպանում է ազատագրված ժողովուրդների ազատությունն ու անկախությունը։

Կարմիր բանակը պաշտպանում է Խորհրդային Միության սոցիալիստական շինարարությունը։

Կապիտալիստական յերկրներում զինվորքն ատելում են ուրիշ-յերկրների բանվորներին և գյուղացիներին։ Մեր Կարմիր բանակը սեր ու հարգանք է տածում դեպի բոլոր յերկրների բանվորները։ Կարմիր բանակը միջազգային հեղափոխության բանակն է։

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ ԲԱՆՎՈՐԱ—ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԲԱՆԱԿ Է

Կարմիր բանակում ծառայում են միայն աշխատավորները։ Կարմիր բանակում տեղ չունեն կուլակները, նեպմանները, տերտերները, ձայնի իրավունքից զրկվածները։ Մեզանում զենք կրելու պատվավոր իրավունքը պատկանում է միայն աշխատավորներին։

Մեր բանակը Բանվորա-Գյուղացիական բանակ է։

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆԸ ՄԻԱԺԱՄԱՆԱԿ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՔԱՂԱՔԱՑԻ Է

Կարմիր բանակայինը Խորհրդային Միության մեջ, մյուս աշխատավորների հետ միասին իրավա-

հավասար քաղաքացի յէ։ Նա ընտրում և ընտրվում է խորհուրդների մեջ։

Կապիտալիստական բանակում զինվորը վոչ մի իրավունք չունի մասնակցելու յերկրի քաղաքական կյանքին։ Նրանք իրավունք չունեն մասնակցելու յերկրի կառավարման գործին։

ՄԵՐ ՀՐԱՄԱՏԱՐՆԵՐԸ

Կապիտալիստական բանակների սպաները կապիտալիստների և կալվածատերերի տղաներ են։

Կարմիր բանակի հրամատարները բանվորների և աշխատավոր գյուղացիների զավակներ են։ Կապիտալիստական բանակներում սպաները ծառայում են բուրժուազիայի շահերի համար։ Կարմիր բանակում հրամատարները ծառայում են բանվորա—գյուղացիական պետության շահերի համար։

ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿՈՒՄ

Ում են յենթարկվում զինվորները կապիտալիստական բանակներում։—Պարզ է սպաներին։ Ովքեր են սպաները։ Նրանք կալվածատերեր և կապիտալիստներ են, կամ թե նրանց կամակատարները։ Կապիտալիստական բանակներում կարգապահությունը դասակարգային ճնշման հիմունքով է կառուցված։ Զինվորները, վորոնց հսկայական մասը աշխատավոր զավակներից են, յենթարկվում են իրենց դասակարգային թշնամուն։

Կարմիր բանակում այդպես չէ։ Մեզ մոտ Հրամատարը և կարմիր բանակայինը մի յեղբայրական ընտանիքից են դուրս յեկած։ Մեզ մոտ գո-

յություն ունի հեղափոխական գիտակցական կարգապահություն։

Կարմիր բանակում կարգապահությունը հիմնված է մարտիկի դասակարգային համախմբվածության և գիտակցության վրա։ Նա, ով թուլացնում է Կարմիր բանակի հեղափոխական կարգապահությունը, ոգնում է մեր դասակարգային թշնամուն՝ կուլակին, նեպմանին և դաշնակին։

Ամուր հեղափոխական կարգապահությունը հանդիսանում է Կարմիր բանակի մարտական հզորության հիմքը։ Կարմիր բանակի հզորությունը միաժամանակ նրա յերկաթյա կարգապահության մեջ է։

Առանց կարգապահության չկա բանակ։

ՀԱՄԿՈՄԿՈՒՍԸ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ԱՌԱՋՆՈՐԴՆ Է

Լենինյան կուսակցությունը Կարմիր բանակի առաջնորդն է։ Լենինի ղեկավարությամբ կուսակցությունը ստեղծեց Կարմիր բանակ։

Կարմիր բանակը յետ մղեց ոտարյերկրյա կապիտալիստների ու սպիտակ գեներալների հարձակումը։ Կուսակցությունը առաջնորդեց կարմիր բանակին դեպի հաղթանակներ։

Ընկեր Լենինը ավանդեց մեզ ամրացնել Կարմիր բանակը։ Կուսակցությունը կատարում է Լենինի այդ ավանդը։ Կուսակցության ղեկավարությամբ Կարմիր բանակն ամրանում է, ստանում է նոր տեխնիկա։

Լենինի լավագույն աշակերտները,—Ստալինը, Մոլոտովը, Վորոշիլովը,—շարունակում են Լենինի գործը։

Կարմիր բանակը ահեղ ուժ է։ Նա կջախջախի կապիտալիստներին, յեթե նրանք համարձակվեն հարձակվել մեզ վրա։

Կուսակցությունը կլինի Կարմիր բանակի նոր հաղթանակների կազմակերպիչը կապիտալիստների դեմ։

Ընկ. Ստալինը ասել է կուսակցության 16-րդ համագումարում.—

«Ուրիշի վոչ մի թիզ հող մենք չենք ուզում։ Բայց և մեր հողից վոչ մի վերշոկ չենք տա վոչ վոքի»։

ՄԱՐՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿՈՒՄ

ՏԻՐԱՊԵՏԵԼ ՌԱԶՄԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻՆ

(ԸՍՏ. Կ. ՅԵ. ՎՈՐՈՇԻԼՈՎԻ)

ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Գալիք պատերազմը կլինի մեքենաների պատերազմ։ Պատերազմում կգործեն վոչ միայն մարդը, այլև մարդու ձեռքով ղեկավարվող մեքենան։

1914-1918 թվականների համաշխարհային պատերազմն արդեն իսկ մեքենաների պատերազմ եր։ Համաշխարհային պատերազմի վերջում ճակատներում կար մոտ 60 հազար հրանոթ, 15 հազար սավառնակ, 5 հազար տանկ։

Գալիք պատերազմը ճակատ կուղարկի ավելի շատ մեքենա։

ԲԱՆԱԿԻ ՄԵՔԵՆԱՅԱՑՈՒՄՆ ՈՒ ՄՈՏՈՐԱՑՈՒՄԸ

Կարմիր բանակը պետք է ունենա առաջավոր տեխնիկա։ Կարմիր բանակը պետք է ունենա բարդ մեքենաներ։

Կարմիր բանակը մեքենայացվում է։ Մեքենայացումն ու մոտորացումը դառնում է բանակի հիմքը։

Բացի սովորական հետևակից մենք ունենք այժմ հետևակ, որը փոխադրվում է մեքենաներով ու մարտ է մղում մեքենաների վրայից։ Կա այդպիսի հրետանի ևս։

Ինչպիսի մասերն են կոչվում մոտորացված և ինչպիսի մասերը՝ մեքենայացված։

Մոտորացված մասերը փոխադրվում են մեքենաներով։ Մեքենայացված մասերը ոչ միայն փոխադրվում են մեքենաներով, այլ և մարտ են մղում մեքենաների վրայից։

ՏԻՐԱՊԵՏԵԼ ՏԵԽՆԻԿԱՅԻՆ

Ինչպես գործարանում ու ֆաբրիկայում, այնպես էլ պատերազմում կպահանջվեն գիտակ, լավ պատրաստված աշխատողներ։ Կպահանջվեն մեխանիկներ, տեխնիկներ, փորձված վարպետներ։

Կարմիր բանակայինը պետք է տիրապետի պատերազմի տեխնիկային։ Նա պետք է վարժվի ղեկավարել ռազմական մեքենաներին։ Նա պետք է կարողանա օգտագործել իր զենքն ու տեխնիկան թշնամու դեմ։

Նա պետք է կարողանա կռվել թշնամու տեխնիկայի դեմ։

Թնդանոթը, գնդացիրը, ականանետը, տանկը, սավառնակը—բոլորն էլ շատ բարդ մեքենաներ են։ Պետք է սովորել ղեկավարել նրանց։ Կարմիր բանակայինը պետք է լավ ուսումնասիրի մոտորը, այսինքն՝ ավտոմոբիլի, տանկի, զրահապատ մեքենայի շարժիչը։

Այժմ սոցիալիստական հայրենիքի պատրաստակամությունը քիչ է։ Ամեն մի մարտիկից պահանջվում է նաև հմտություն ռազմական տեխնիկան տիրապետելու գործում։

Մենք պատերազմ չենք ուզում։ Մենք բոլոր ուժերով կռվում ենք պատերազմի դեմ։ Բայց կապիտալիստներն ամեն րոպե կարող են հարձակվել մեզ վրա։

Պատերազմում հաղթելու համար մենք պետք է սովորենք ճիշտ վերաբերվել ռազմական մեքենայի ամեն մի պտուտակի հետ։ Մենք պետք է սովորենք խնամել ռազմական մեքենան։

Հաղթելու համար մենք պետք է տիրապետենք ռազմական տեխնիկային։

ՋՈԿԱՏԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Ջոկատային ուսուցման միջոցով մարտիկը պետք է տիրապետի մարտական գործողությունների զանազան պայմաններում աշխատելու լրիվ ունակություն։ Նա պետք է տիրապետի զորքերի բոլոր տեսակների հետ գործելու տեխնիկային։ Կարմիր բանակայինը պետք է լավ տիրապետի թշնամու զրահաուժերի, սավառնակների, հեծելազորի, հետևակի և այլ կռվելու միջոցներին։

Մարտական պատրաստության տեսակետից կարևոր նշանակություն ունեն զորական տակտիկական պարապմունքները։ Այդ պարապմունքներում գործում են զորքերի բոլոր տեսակները։ Մարտիկը պետք է իմանա, որ հետևակը հանդիսանում է զորքերի հիմնական տեսակը։ Զորքերի մնացած բոլոր տեսակները օգնում են հետևակին, հաջող կռ-

պով կատարելու համար խնդիրը: Ջոկատային ուսուցումն անց է կացվում թե գիշերը և թե ցերեկը:

Հատկապես մեր դիվիզիան պետք է վարժվի լեռներում գործելու համար, վորովհետև մենք կռվի ժամանակ ավելի շատ գործելու յենք լեռնային պայմաններում:

Ջոկատային պարապմունքներին ամեն մի բանակային պետք է հայտաբերի վճռականություն, հաստատակամություն, արագաշարժություն, ուժեղ կամք և դիմացկունություն:

Ինչպես ուսուցման մնացած ասպարեզներում՝ նույնպես և ջոկատային պարապմունքների ժամանակ պետք է վողջ բանակային մասսան ընդգրկված լինի սոցմրցման ու հարվածայնության մեջ:

«Սովորիր տիրապետել քո տեխնիկային և պայքարել հակառակորդի տեխնիկայի դեմ»:

ԱՄԵՆ ՄԻ ՄԱՐՏԻԿ ՊԵՏՔ Է ԼԻՆԻ ՀԱՐՎԱԾԱՅԻՆ

«Սոցիալիստական մրցակցությունը և հարվածայնությունը աշխատանքի սոցիալիստական մեթոդըն է, միլիոնավոր աշխատավորների ամենամեծ ակտիվության հիման վրա»:

Աշխատանքի այդ լավագույն ձևը պետք է դառնա Կարմիր բանակայինի սեփականությունը:

Կարմիր բանակայիններից վոչ մեկը չպետք է դուրս մնա առաջավոր հարվածային մարտիկների շարքերից: 2-րդ գնդի մարտիկները քաղաքական պատրաստության ասպարեզում ցույց տվին լավագույն ցուցանիշներ 1930/31 տար. ուսուցման մեջ և արժանացան Բագվի խորհրդի պանծալի դրոշին:

Ծնքեցեք սոցմրցման պայմանագրերը հետևյալ խնդիրների շուրջը:

Ո՞վ լավագույն ցուցանիշներ ցույց կտա ռազմական և քաղաքական ուսուցման մեջ:

Ո՞վ կարճ ժամանակամիջոցում կտիրապետի իրեն հանձնված տեխնիկական միջոցներին:

Ո՞վ կարգապահության ասպարեզում կլինի առաջավորների շարքերում. Ո՞վ ավելի լավ կսովորի խնամել զենքը

Հարվածային կարգով կատարեք և գերակատարեք մարտական ուսուցման պլանները:

Կոմունիստներ և կոմյերիտականներ, յեղեք հարվածայինների առաջավոր շարքերում:

ՊԵՏ-ԿԱԶՄԸ ՀԱՆԴԻՍԱՆՈՒՄ Է ՄԱՐՏԻԿԻ ՄԱՐՏԱԿԱՆ ՅԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐԸ

Հրամատարը — զորամասի մարտական պատրաստության և քաղաքական աշխատանքի ղեկավարն է: Հրամատարը և քաղաքական աշխատողը—Կարմիր բանակայինների ռազմական և քաղաքական դաստիարակիչներն են:

Հրամատարի և քաղաքական աշխատողի ղեկավարությամբ են բանակայինները ստանում ռազմական և քաղաքական պատրաստականություն: Նրանց ղեկավարությամբ է զորամասում կազմակերպվում սոցմրցումը:

Կուս-կազմակերպությունը պետք է ամեն կերպ աջակցի հրամատարության այդ մեծ գործում:

Հրամատարի հրամանները պետք է կատարել: Կարմիր բանակի զորամասերում պետք է լինի յերկաթյա, հեղափոխական կարգապահություն:

Հիշիր, մարտիկ, վոր հրամատարը և քաղաշխատողը քո ավագ ընկերն են։ Նրանք քո պետերն ու դաստիարակիչներն են։ Նրանց պարտականությունները շատ բարդ են։ Ոգնիր նրանց զորամասում ռազմական և քաղաքական աշխատանքը բարձր աստիճանի վրա դնելու համար։

ԵՎ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՑՆԵԼ ՄԱՐՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

ԳՐՈՀԻՐ, ԳՐՈՀՈՎ ՏԱՊԱԼԻՐ ԹՇՆԱՄՈՒՆ

Գրոհիր կրակով, նռնակով ու սվինով։ Հարձակվիր համարձակ, «ուռա» գոչելով։

Գրոհով տապալիր թշնամուն ու քշիր նրան։ Քշիր նրան կրակով ու սվինով։ Գրավիր նրա զենքն ու մարտական պաշարները։

Զրահապատ մեքենաներն ու տանկերը կոգնեն հետևակին ու հեծելազորին քշելու թշնամուն։ Խիզախ արշավով նրանք կկտրեն թշնամու նահանջի ճանապարհները։ Նրանք կմտնեն թշնամու թիկունքը։

Լավ պահիր փամփուշտներդ։ Անտեղի մի ծախսիր։ Նրանք պետք են գրոհի ժամանակ։ Նրանք պետք են, յերբ քշում ես թշնամուն։

Յերբ ծախսեցիր փամփուշտներիդ կեսը—զեկուցիր հրամատարիդ։ Շուտ արա լրացրու պաշարդ։ Տեսար, վոր ընկավ հարևանդ, վերցրու նրա փամփուշտները։ Նրան փամփուշտ այլևս պետք չէ։

ԹԻՐԱԽՆԵՐԻ ՎՐԱ ՎԱՐԺՎԻՐ ՀԱՐՎԱԾԵԼ ԹՇՆԱՄՈՒՆ

Մրցակցությամբ ու հարվածային աշխատանքով ձեռք բեր գերազանց կրակելու հմտություն։ Մրցակցեք կրակի պատրաստվելու արագության ու ճշտության մեջ։

Սովորիր հրացանդ լցնել պառկած։ Միշտ ստուգիր, թե ինչու վրիպեց գնդակդ։ Սովորիր նշան դնել հաստոցից ու ձեռքից։ Վերցրու ճիշտ հատիկ։ Մի ցնցիր ձգանը։ Հանգիստ իջեցրու հրահանը։

ՀՐԱՁԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՈՐ ԿՈՒՐՍԵՐԸ

I. ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՀՐԱՁԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Քննական հրաձգություն մանրակալիբր հրացանով (վարժություն № 4)։

Հեռավորությունը 25 մետր (36 քայլ)։

Հրաձգություն պառկած, ձեռքից, ոգտագործելով փոկը։

Թիրախ № 6

Առաջադրանք, 10 գնդակով խփել ամենապակասը 40 աչկո։

2. Քննական հրաձգություն մարտական հրացանով (վարժություն № 6)։

Հեռավորությունը 70 մետր (100 քայլ)։

Հրաձգությունը պառկած, ձեռքից, ոգտագործելով փոկը։

Նշանոց—4

Թիրախ—№ 5

Առաջադրանք. 5 գնդակից 4 գնդակ չպետք է դուրս գան 7 շրջանից։

II. ՎԱՐԺԱԿԱՆ ՀՐԱՁԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՐԱՑԱՆՈՎ

Քննական հրաձգություն (№ 7 վարժություն)։

Հեռավորությունը 300 (400 քայլ)։

Հրաձգությունը պառկած, ձեռքից, օգտագործելով փոկը։

Նշանոցը հրաձգի ընտրությամբ։

Փամփուշտը՝ 7. նրանցից 2-ը փորձնական, որոնք հաշվի մեջ չեն մտնում։

Թիրախ № 9 (կենտրոնում կրծքաչափ թիրախ)։

Առաջադրանք ու գնահատական։ Հինգ գնդակով խփել.

30 աչկո — գերազանց.

25 աչկո — լավ.

20 աչկո — բավարար։

III. ԱՆՀԱՏԱԿԱՆ ՄԱՐՏԱԿԱՆ ՀՐԱԶԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Վարժություններ №№ 1 և 3։ Պահպանություն ու հետախուզություն։

Հեռավորությունը՝ 200—300 մետր (300—400 քայլ) և 250—350 մետր (350—500 քայլ)։

Փամփուշտները՝ 4։

Թիրախ՝ №№ 11 և 12, որոնք իրար յետևից յերևում են 20—30 վայրկյանով և անհայտանում։

Հրաձգության գնահատականը։ Գերազանց—հարվածել յերկու նշանը, ծախսելով 3 փամփուշտից ոչ ավել, լավ —հարվածել յերկու նշանը (4 փամփուշտ)։ Բավարար հարվածել նշաններից մեկը (4 փամփուշտ)։

2. Վարժություն № 5։ Պաշտպանություն։

Հեռավորությունը—300—400 մետր (400—600 քայլ)։

Փամփուշտները՝ 6

Թիրախները №№ 15 և 12։

Ընդամենը 3 նշան. յերկու նշան № 15, որ յերևում են 15—25 վայրկյանով և մեկ նշան № 12, որ յերևում է 20 վայրկյանով. նշանները յերևում են մեկը մյուսի յետևից։

Հրաձգության գնահատականը։ Գերազանց—հարվածել յերեք նշանը։ Լավ—հարվածել յերկու որևէ նշան։ Բավարար—հարվածել նշաններից մեկը։

3. Վարժություն № 9։ Հարձակում։

Հեռավորությունը 200—350 մետր (300—500 քայլ)։

Փամփուշտները—6

Թիրախները—№№ 19 և 4։

Ընդամենը յերեք նշան. № 19 նշանն անհայտացող. յերկու նշանը՝ № 14—մեկը՝ յերևացող, մյուսը՝ շարժվող։

Հրաձգության գնահատականը գերազանց—հարվածել բոլոր նշանները։ Լավ—հարվածել յերկու նշան։ Բավարար—հարվածել մեկ նշան։

ՈՉ ՄԻ ԳՆԴԱԿ ՆՇԱՆԱԿԵՏԻՑ ԴՈՒՐՍ

Ամեն մի հետևակային և հեծյալ գնդում կան գերազանց հրաձիգներ։

1-ին գնդի դպրոցի գերազանց հրաձիգները ցույց տվին տեսչական հրաձգություններին, որ արժանի յեն այդ կոչմանը։

Նորեկ բանակայինը պետք է ուշի ուշով ուսումնասիրե հրաձգային գործը։ Նա պետք է Գեղամի պես գերազանց հրաձգից սովորի թե ինչպիսին պետք է լինի հրաձիգը։

Գերազանց հրաձիգը 1000 քայլի վրա նպատակը կատարում է, իսկ պատերազմի ժամանակ թշնամու դեմ գործելիս հաղթանակի պայմաններից մեկն է դա։

Հրաձգության ժամանակ ով շուտ գտնի նպատակը նա կհարվածի թշնամուն։ Յեղիր աչալուրջ ունեցիր դիպուկ կրակ։

Ավելի բարձր աստիճանի վրա դնենք կարմիր հրաձիգների պատրաստման գործը։

ՔՐԴԱԿԱՆ ԴԱՍԱԿԸ ՄԵՐ ՊԱՐԾԱՆՔՆ Է

Քրդական դասակը հայկական դիվիզիայի փառք ու պարծանքն է։ Մանյովրաներում դասակը տվեց մարտական հարվածային աշխատանքի մի շարք փայլուն օրինակներ։

Ահա դասակի հրամատար ընկ. Ռոջայեվը։ Նա գնդի հրամատարից ստացավ բարդ խնդիր,—տապալել գնդի շտաբը գնդակոծող «կարմիրներին»։ Նա անում է բարդ մանյովր, դեպի իր վրա յե գրավում կարմիրների կրակը, կաշկանդում է նրանց ճակատից, իսկ ջոկի հրամատար Հարությունյանը աննկատելիորեն սողում է թևից, նետվում է գրոհի և վերցնում է կարմիրների դասակին։

Ջոկի հրամանատար Մուսա Ջանգոյեվը իր նախաձեռնությամբ հարձակման ժամանակ կտրվում է դասակից, անցնում է հաստոցավոր գնդացրի աջ թևը և գերի յե վերցնում գնդացիրը։ Ջոկի հրամատար Թեմուր Բալաշյանը, ինքնուրույն ղեկավարելով ջոկը, հարձակման ժամանակ հմտորեն սողոսկեց կարմիրների թիկունքը և գերի վերցրեց հեծյալ դասակին։ Գլխավոր միջնորդը ընկ. Բալաշյանին

ու նրա ջոկին օրինակելի աշխատանքի համար հայտնեց շնորհակալություն։

Կարմիր բանակային Ավդոյեվ Ահմատը և Ավդոյեվ Ազիզը նահանջի ժամանակ կորցնելով կապը ջոկի հետ ինքնուրույն նահանջեցին, կառչելով յուրաքանչյուր թփից, մի տեղ դուրս յեկան հետապնդող կարմիրների ջոկի թևը։ Միջնորդը հմուտ գործողությունների համար նրանց հայտնեց շնորհակալություն և շարքից հանեց յերեք մարտիկ կարմիրներից։

Քրդական դասակը մայիս ամսից մինչև այժմ, ինչպես և մանյովրաների ընթացքում չունի կարգապահության վոչ մի խախտում, վոչ մի յետ մնացող, վոտքերի վոչ մի հարում, չունի գույքի կորուստ, մինչդեռ յեղել են չափազանց դժվարին յերթեր, չափազանց ծանր պարագաներ։

ՀԱՐՎԱԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՈՎ ԱՄՐԱՑՆԵՆՔ ՌԱԶՄԱ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

ԱՐՍԵՆԻ ԴԱՍԱԿԸ

№ գունդը 1931 թվի հուլիսի 20-ին անց եր կացնում տակտիկական պարապմունք։ 5-րդ վաշտից Արսենի դասակին խնդիր եր տրված հետախուզել թշնամուն Վ. գյուղի ուղղությամբ։

Դասակը կազմ ու պատրաստ եր վորոշված ժամին դուրս գալու։

Բոլոր մարտիկները գիտեյին իրենց խնդիրը, նրանք կազմել եյին սոց-մրցման պայմանագիր, լավագույն կերպով կատարելու իրենց վրա դրված խնդիրը։ Առավոտյան ժամը 7-ն եր, յերբ Սարգսի ջոկը կռվի բռնվեց «հակառակորդի» դիրքերի հետ

գրավելով անանուն բարձունքը։ Պարզված են թշնամու պաշտպանության առաջին յեզրը, ուսումնասիրված են տեղանքը։ Դասակը կատարեց իր խնդիրը, գնդի հրամանատարության կողմից արժանացավ գովասանքի։

Գործենք Արսենի դասակի օրինակով։

ԶԵՆՔԻ ՑՈՒՑԱԿ

ԼԵՆՀԵԾԳՆԴԻ 1-ԻՆ ԵՍԿԱԴՐՈՆԻ, 2-ՐԴ ԴԱՍԱԿԻ 2-ՐԴ ՋՈԿԻ

	Հրացանի № ը	Հակագազի № ը	Թրի № ը
1. Աբրահամյան Հ.	91616	27	247
2. Բարսեղյան Վ.	27440	48	319
3. Գեորգյան Դ.	80070	50	505
4. Թադևոսյան Խ.	51008	79	1.217
5. Հակոբյան Մ.	60005	37	8.027
6. Սարգսյան Վ.	75489	86	515

ԲԱՐՁՐԱՑՆԵԼ ՍԱՊՅՈՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

Սապյորը հարկավոր ե ամեն մի քայլափոխում։ Նա պետք ե օգնի իր զորքերին մարտ մղել հակառակորդի դեմ։

Նա պետք ե դժվարացնի հակառակորդի աշխատանքը։

Սապյորը աշխատանք շատ կունենա պատերազմում։ Նորոգել ավերված կամուրջներն ու ճանապարհները։ Կառուցել նոր կամուրջներ ու ճանապարհներ։ Անցկացնել գետից իր զորքերին նավակներով։ Աշխատել մթության մեջ նույնքան լավ,

որքան ցերեկով։ Աշխատել թունավորված վայրում հակագազերով։

ԼՍԻՐ, ՍԱՊՅՈՐ

Հարվածային աշխատանքով բարձրացրու մարտական պատրաստությունդ։

Կարողացիր թաքցնել քո աշխատանքը հակառակորդից։

Քողարկիր աշխատանքներդ վերերկրյա և օդային թշնամուց։

Կասեցրու թշնամու շարժումը։ Արգելքներ պատրաստիր փայտից ու քարերից։ Ավերիր ճանապարհներն ու կամուրջները։

Կռվիր հակառակորդի տանկերի դեմ։ Խափանիր նրանց ճանապարհը։

Կարողացիր աշխատել մեքենաներով։ Խնամիր մեքենաները։

Յետ մի մնա հրաձգության մեջ հետևակի լավ հրաձիգներից։

ՀՐԱՄԱՆՆԵՐԸ ՊԵՏՔ Ե ԿԱՏԱՐԵԼ

Մեր զորամասը մարտ եր մղում։ Մենք խրամատավորվեցինք։ Թշնամին հարձակվում եր։ Ահա նրա շղթաները մեզանից արդեն 700—800 քայլի վրա յեն։

Մեր փամփուշտը քիչ ե։ Մեր հրամանատարը փորձված մարդ ե։ Նա գիտե, որ 700 քայլից դիպուկ կրակել չի կարելի։ Նա հրամայեց կրակ բանալ, յերբ թշնամին կհասնի 400 քայլի վրա։

Բայց մեր զորամասում կային շատ նորեկ կարմիր բանակայիններ։ Լավ տղաներ եյին, բայց կար-

գաղտնապահությունը նրանց մոտ կաղում էր։ Ահա նրանք վոր փորձանքի մեջ գցեցին մեզ։

Նրանք կրակել սկսեցին ավելի վաղ։ Գնդակները անտեղի եյին գնում։ Հրաձգությունը դիպուկություն չուներ։ Իսկ յերբ թշնամին մոտեցավ մեզ, կարմիր բանակայինները այլևս փամփուշտ չունեյին։

Թշնամին վրա տվեց սվիններով։ Մարտը տանուլ տվեցինք։

*
* *

Հրամատարների հրամանների չկատարումը խախտում է բանակի ուժը։ Լավ կատարիր քո գործը։ Զորքը մեքենայի պես է, մի պտուտակի (վինտի) անսարքությունը կարող է կանգնեցնել մեքենան։ Մեկ հրաձգի վատ աշխատանքը կարող է վնաս հասցնել ամբողջ գնդին։

Ով ամբողջովին և անձնուրաց կերպով չի օգնում կարմիր բանակին, բոլոր ուժերով չի պահպանում նրա կարգն ու կարգապահությունը, նա դավաճան ու մատնիչ է։

Վ. Ի. ԼԵՆԻՆ

ՀԱՄԿՈՄԿՈՒՍԻ (Բ) ԲՋԻՋԸ ԶՈՐԱՄԱՍՈՒՄ

Կարմիր բանակային Հրանտը դիմում տվեց զորամասի բջիջին։ Նա խնդրում էր իրեն ընդունել կուսակցության շարքերը։ Անցավ մի քանի օր։ Հրանտին ընդունեցին թեկնածու։

Հրանտն սկսեց աշխատել առաջվանից էլ լավ։ Հրանտը հարվածային էր և մարտական պատրաստության մեջ օրինակելի։

Վաշտի բջիջը բաղկացած էր 12 հոգուց։ Կուսակցության ամեն մի անդամ ու թեկնածու ուներ իր կուսակցական բեռնավորումը։ Մեկը թեկնածուների հետ անցնում էր քաղգրագիտություն։ Մյուսն աշխատում էր լենանկյունում, պատի թերթում և այլն։

Կուսակցության բոլոր անդամները հարվածային եյին մարտական պատրաստության մեջ։ Բջիջում կար ամուր կուսակցական կարգապահություն և համերաշխ աշխատանք։

Կուսակցության բոլոր անդամներն ու թեկնածուները շատ եյին աշխատում և լավ եյին սովորում։

Հրանտը շատ էր կարդում։ Նա սովորում էր կուսակցական դպրոցում։ Նա ուսումնասիրում էր Լենինի ուսմունքը։

Զորամասի հարվածային կոմունիստները օրինակ եյին ծառայում անկուսակցական մարտիկներին աշխատանքի և ուսուցման մեջ։ Կոմունիստները բացատրում եյին անկուսակցականներին կուսակցության ու խորհրդային իշխանության վորոշումները։

Կոմունիստները օգնում եյին հրամատարներին ու քաղաշխատողներին՝ կարմիր բանակայինների քաղաքական ու մարտական ուսուցման մեջ։

Կուսակցականները շատ բան արին մեր զորամասի մարտական պատրաստության ամրացման համար։

Մենք չունենք վախկոտ, մորթեպաշտ, անգիտակից մարտիկներ։ Բարձր է կարգապահությունը մեր գնդում։

ՀԱՄԿՈՄԿՈՒՍՆ (Բ) ՈՒ ԿՈՄՍՈՄՈԼԸ

Զորամասի կուսակցական բջիջին օգնում ե կոմսոմոլը։

Կոմսոմոլն օգնում ե հրամատարներին ու կուսակցական բջիջին՝ զորամասի մարտական պատրաստությունը բարձրացնելու գործում։

Քաղաքացիական պատերազմի ճակատներում կոմյերիտականները յեղել են օրինակելի մարտիկներ։

Կոմյերիտականները քաջության օրինակներ են ցույց տվել 1929 թվին սպիտակ չինացիների դեմ մղած մարտերում։ Իրենց քաջությամբ նրանք վոգևորել են մյուս մարտիկներին։

Մարտական արժանիքների համար կոմսոմոլը պարգևատրված ե Կարմիր Դրոշի շքանշանով։

Կոմսոմոլը զորամասում աշխատում ե կուսակցական կազմակերպությունների ղեկավարությամբ։

Կոմյերիտականը պետք ե լինի հարվածային և օրինակելի մարտիկ։ Հրանտի վաշտի կոմյերիտականները բոլորն ել հարվածայիններ եյին։ Նրանք շատ եյին սովորում և կարդում Լենինի գրվածքները։ Նրանք կատարում եյին սոցմրցակցության պայմանագիրը։

Կոմսոմոլն օգնում ե Համկոմկուսին (բ) և Խորհրդային իշխանությանը՝ ամրացնելու մեր ծովային նավատորմը։ Կոմսոմոլը ծովային կարմիր նավատորմի շեֆն ե։ Կոմսոմոլն օդային կարմիր նավատորմի շեֆն ել ե։

ԿՈՄԻՆՏԵՐՆ

1. Ցելեք զավոդներ հեյ
Սեղմեք ձեր շարքերը
Դեպ մարտ դուք արշավեք,
Արշավեք արշավեք
Ստուգեք հրացանները առեք ճիշտ նշան
Առաջ բանվորներ դեպի մարտ անսասան
Դեպ մարտ անսասան
Դեպ մարտ անսասան։

2. Խոնավ բանտերումը
Տանջվող ընկերներ մեր
Մեզ հետ եք մեզ հետ եք
Թեկուզ բացակա յեք
Սպիտակ տեռորի դեմ անահ յեվ առույգ
Ամբողջ մեր յերկիրը վառել ե խարույկ
Վառել ե խարույկ
Վառել ե խարույկ։

3. Յերբ վոր Կոմինտերնը
Կանչի դեպի մարտ մեզ
Կարմիր դրոշակի տակ
Կարմիր սովետների
Պատրաստ ենք մարտի, մենք պատրաստ ենք կանչի
Կռվի ճակատիցը մենք չենք նահանջի
Պատրաստ ենք կանչի
Մենք չենք նահանջի։

4. Լենինիզմն ե շողում
Մեր ճամբին լուսավոր
Հանում ե բուրժուի դեմ
Բանակներ ահավոր
Բանվոր դասակարգը կռվում ե համառ
Համաշխարհային մեծ սովետի համար
Համաշխարհային
Սովետի համար։

Ծեղենք զավոդներ ձեյ
Սեղմենք ձեր շարքերը
Դեպ մարտ դուք արշավենք,
Արշավենք արշավենք
Ստուգենք հրացանները առնենք ճիշտ նշան
Առաջ բանվորներ դեպի մարտ անսասան
Դեպ մարտ անսասան
Դեպ մարտ անսասան։

ԻՆՉՔԱՆ ԱՆԳՐԱԳԵՏ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆ Է ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՍՈՎՈՐԵԼ

1919 թ.— 60.000	1925 թ.—32.000
1920 թ.—100.000	1926 թ,—36.000
1921 թ.—120.000	1927 թ.—22.000
1922 թ.— 82.000	1928 թ.—34.000
1923 թ.— 40.000	1929 թ.—25.000
1924 թ.— 29.000	1930 թ.—30.000

Ընդամենը 12 տարվա մեջ,-1919 թվից մինչև 1930 թիվը կադրային զորամասերում գրագիտություն է սովորել 610 հազար կարմիր բանակային։

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ ԴԵՄ Է ԿՐՈՆԻՆ

Կրոնը, յեկեղեցին միշտ էլ յեղել են շահագործող դասակարգերի ձեռքին մի զենք, կեղեքելու և շահագործելու համար աշխատավոր մասսաներին։

Ինչպես ուրիշ յերկրներում, նույնպես և մեզ մոտ Հայաստանում կրոնը, յեկեղեցին ծառայել է հայ բուրժուազիայի, նրա կուսակցության դաշնակցության շահերին։ Հայ բուրժուազիան կրոնի միջոցով մթագնել է հայ աշխատավորության դասակարգային գիտակցությունը։

Կրոնը հսկայական դեր է կատարել և այժմ էլ կատարում է բուրժուական բանակում, բանակը շահագործող դասակարգի շահերին յենթարկելու և զինվորի դասակարգային գիտակցությունը մթագնելու գործում։

Ցարական բանակում ծառայում եյին բազմաթիվ հոգևորականներ, վորոնք զինվորներին ներշընչում եյին «սեր դեպի ցարը և հնազանդություն դեպի իշխանությունները»։ Հոգևորականները հըսկայական գումարներ եյին ստանում։ Միայն 1915 թ. հոգեվորականներն ստացել են 400 միլլիոն ռուբլի։

Հոկտեմբերյան հեղափոխության ժամանակ Ռուսաստանում, Նոյեմբերյան հեղափոխության ժամանակ Հայաստանում հոգեվորականները ակտիվ կերպով մասնակցում եյին հակահեղափոխության բանակներում։

Մոսկվայում համարյա բոլոր յեկեղեցիների գըմբեթների վրա գնդացիրներ եր դրված, վորով սպանում եյին բանվորներին։

1919 թ. մի Պոկրովկի անունով տերտերի ղեկավարությամբ մեկ գիշերում սպանել են 27 չքավոր ու միջակ գյուղացիների։

Կոլչակի բանակում կազմակերպվել է հատուկ գնդեր Հիսուսի անվան։

Հոգեվորականությունը սոցիալիզմի ամենակատաղի թշնամին է։

Մեզ մոտ Հայաստանում, հայ բուրժուազիան նրա կուսակցություն դաշնակցությունը, իրենց հակախորհրդային աշխատանքը միաժամանակ տանում

են կրոնի, սուրբ հոգու և յեկեղեցու ազատության նշանաբանի տակ:

Կուլակները, դաշնակները և տերտերները աշխատում են ավելի հետամնաց տարրերի մեջ սրսկել կրոնական թույնը: Դրանով նրանք ուզում են թուլացնել սոցիալիստական շինարարության վերելքը, կոլխոզշարժման ծավալումը մեր յերկրում:

Կուլակները բացարձակորեն ասում են «աստված դեմ է կոլխոզներին»: Հետևապես կոչ են անում պայքարելու կոլխոզի դեմ: Արմավիրի շրջանում տերտերները թերթիկներ են ցրել, վորտեղ ասված է «արդեն աշխարհի վերջն է, մոտենում է ահռելի դատաստանը, չքավոր և միջակ գյուղացիներ, քանի ուշ չէ դուրս յեկեք կոլխոզներից»:

Կարմիր բանակը պրոլետարիատի դիկտատուրայի սուրն է, նրա զինված բռունցքը: Նա գիտե, վոր կոչված է պաշտպանելու հոկտեմբերյան հեղափոխության նվաճումները: Դրա համար էլ մեզ մոտ ամեն մի կարմիր բանակային վոչ միայն պետք է գիտակցի կրոնի հակահեղափոխական էությունը, այլ և ակտիվ կերպով պետք է պայքարի կրոնի դեմ: Ամեն մի կարմիր բանակային պետք է հանդիսանա «Մարտնչող Անաստվածների» միության ակտիվ աշխատող, լավագույն պայքարողը կրոնական թույնի դեմ:

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՄԱՐՏԱԿԱՆ ՈՒՂԻՆ

ԻՆՉՈՒ ՍԿՍՎԵՑ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

1917 թվի հոկտեմբերին մեր յերկրի բանվոր դասակարգը թոթափեց կալվածատերերի ու կապիտալիստների լուծը և հաստատեց իր իշխանությունը: Հոկտեմբերյան հեղափոխությունը խլեց կալվածատերերից ու կապիտալիստներից հողը, ֆաբրիկները գործարանները, տները և հանքերը:

Բոլոր յերկրների կապիտալիստները ռուս կալվածատերերի ու գործարանատերերի հետ միասին դուրս յեկան Խորհրդային իշխանության դեմ: Կուլակներն էլ կալվածատերերի ու կապիտալիստների կողմումն էյին: Այսպես սկսվեց քաղաքացիական պատերազմը:

Կալվածատերերն ու կապիտալիստներն ուզում էյին յետ վերցնել իրենցից խլած հարստություններն ու իշխանությունը:

Պատերազմը մղվում էր մեծ համառությամբ ու դաժանությամբ: Նա տևեց յերեք տարի: Օտարերկրյա կապիտալիստները չէյին խնայում փող, զենք, հանդերձանք: Նրանք առատ մատակարարում էյին ցարական գեներալներին ու կուլակային բանդաներին: Նրանք ուղարկում էյին իրենց զորքերը:

Կոմկուսակցության ղեկավարությամբ բանվոր դասակարգը ստեղծեց ուժեղ Կարմիր բանակ: Կարմիր բանակ ստեղծելու մասին դեկրետը ստորագրել է ընկ. Լենինը 1918 թվի հունվարի 15-ին:

Իրենց կրծքով կարմիր բանակայինները պաշտպանում էյին Հոկտեմբերյան հեղափոխության նվաճումները: Անվախ կռվում էր կարմիր բանակը խորհրդային հանրապետության համար, համաշխարհային պրոլետարական հեղափոխության համար: Առջևից գնում էյին կոմունիստները:

Բանվոր դասակարգի ու կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ աշխատավորները ջախջախեցին սպիտակ գվարդիական զորքերին ու կուլակային բանդաներին։

ԼԵՆԻՆԸ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՄԱՍԻՆ

«Առանց սոցիալիստական հանրապետության զինված պաշտպանության մենք գոյություն ունենալ չենք կարող: Խորհրդային հանրապետության գոյությունը իմպերիալիստական պետությունների կողքին յերկար ժամանակի ընթացքում անկարելի յե: Վերջիվերջո կամ մեկը կամ մյուսը կհաղթի։ Իսկ մինչ այդ մի շարք սոսկալի ընդհարումներ Խորհրդային հանրապետության յեվ բուրժուական պետությունների միջեվ անխուսափելի յեն: Դա նշանակում, է վոր պրոլետարիատը, վորպես տիրող դասակարգ, յեթե միայն նա ուզում է տիրել, յեվ տիրելու յե, այդ պիտի ապացուցի իր ռազմական կազմակերպությամբ»:

ԼԵՆԻՆ

«ՄԻՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՄԵՆՔ ԿԱԶՄ ՈՒ ՊԱՏՐԱՍՏ ԵՆՔ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՐՈՊԵ»

ՎՈՐՈՇԻԼՈՎ

ԿՈԼՉԱԿԻ ԴԵՄ

ՄԱՐՏ ՈՒՖԱՅԻ ՏԱԿ

1919 թվի գարնանը ծովակալ Կոլչակը սև ամպի պես կախվեց Վոլգայի վրա։

Կոլչակը վճռել եր հասնել մինչև Մոսկվա։ Կարմիրները վճռեցին յետ քշել Կոլչակին և խլել նրանից Ուֆան։

Որ ու գիշեր Ֆրունզեյի շտաբում յեռում եր աշխատանքը։ Ֆրունզեն հեռագրի մոտ ե։ Ֆրունզեն թելադրում ե հրամաններ։ Ֆրունզեն չի քնում գիշերները։

Յեվ ահա հասան վերջին որերը։ Կոլչակն անցել ե գետը։ Ֆրունզեն մարտի առաջնորդեց գնդերին։ Գիշերը հասնելուն պես մեր զորամասերն անցան գետի մյուս ափը։ 4 ժամ տևեց տաք կռիվը։

Մեր զորամասերի փամփուշտները պակասեցին։ Թշնամին զոռում եր։ Մերոնք սկսեցին յետ քաշվել։

Այդ րոպեյին մեզ հասան ձիավորներ։ Նրանք ցած թռան ձիերից և վազեցին դեպի մեր շարքերը։

— Բերում ենք փամփուշտներ. հառաջ. ուռա՜։

Այդ մեր հրամատարներն ու կոմիսարներն եյին շտաբից և ինքը Ֆրունզեն եր։

— Ֆրունզեն մեզ հետ ե,—տարածվեց մեր զորամասերում։

Մերոնք առաջ նետվեցին։ Տաք կռիվը տևեց մինչև յերեկո։ Առավոտյան մենք մտանք Ուֆա։

ԿԱՏԱՐԵՑ ԻՐ ՊԱՐՏՔՆ ՈՒ ՀՐԱՄԱՏԱՐԻ ՀՐԱՄԱՆԸ

Մեր 28-րդ գունդը նահանջում եր Զամայեվո գյուղից։ Մարտն ու սառնամանիքները հալումաշ եյին արել կարմիր բանակայիններին։ Անունն եր գունդ, գնդում հազիվ մի 110 մարտիկ եր մնացել։

Կոլչակի բանդաները ճնշում եյին արևելքից։ Գնդում կար յերկու գնդացիր. մեկը Կունգեցովի մոտ, մյուսը՝ Շչերբակովի։ Շչերբակովը հրաման ստացավ իր գնդացրով պաշտպանել գնդի նահանջը։

Շչերբակովը տեղ ընտրեց ձյունի մեջ, կաղնու յետևին և սպասեց։ Ամենից առաջ անտառից դուրս թռան ճանապարհի վրա կազակները։ Քարացավ Շչերբակովը գնդացրի հատիկի վրա։ Շատ մոտ թռ-

ղեց կազակներին և հետո բաց թողեց գնդացիրը՝ տրա-տա-տա։ Վայր թափվեցին ձիերն ու ձիավորները։ Վողջ մնացածները յետ փախան։ Անցավ մի տաս րոպե։ Նորից ձյունի վրա յերևացին կետեր։ Առաջ է շարժվում հրաձիգների շղթան։ Սուլեցին գնդակները Շչերբակովի չորս կողմում։

Յեվ նորից նշան բռնեց Շչերբակովը։ Վոչինչ չեր տեսնում ու չեր լսում, բացի թշնամու գնդացրի հատիկից։ Միայն թե դողել եյին ուսը և արյունը հոսում եր գրատի վրա։

Յերբ մթնեց, Շչերբակովը վեր թռավ, վերցրեց գնդացիրը և վազեց դեպի գյուղը։ Այնտեղ նա գնդացիրը դրավ ձեռնասահնակի վրա ու վազեց։ Նա ուզում եր հասնել գնդին...

Չի հիշում, թե յերկար վազեց արդյոք։ Ուշքի յեկավ միայն հիվանդանոցում։ Առաջին հարցն եր.

— Ո՞ւր է գնդացիրը։

Նրան ասացին, վոր գնդացիրը վողջ է։ Առողջացավ Շչերբակովը, յեկավ իր գունդը և իր հերոսության համար ստացավ Կարմիր Դրոշի շքանշան։

ԴԵՆԻԿԻՆ

1919 թվի ամառն եր։ Ցարական գեներալ Դենիկինը հավաքել եր Դոնում կուլակ-կազակներին ու աղաների զավակներին։ Նրանք հավաքվել եյին ամեն կողմից։ Նրանք գնում եյին խորհուրդների իշխանության դեմ։ Նրանք ուզում եյին վերադարձնել իրենց գործարանները, տներն ու հողը։ Նրանք ուզում եյին վոչնչացնել Խորհրդային հանրապետությունը։

Յեվրոպայի ու Ամերիկայի կապիտալիստները ոգնում եյին Դենիկինին դրամով, զենքով ու մարտամթերքներով։

Դենիկինն ամրացավ Դոնի վրա և սկսեց նեղել Ուկրայնայի մեր գնդերին։ Կարմիր բանակի ուժերը Ուկրայնայում քիչ եյին։ Մեր գնդերից շատերը գտնվում եյին Սիբիրում։ Այնտեղ նրանք ջախջախում եյին Կոլչակի բանդաներին։

Դենիկինը հարձակվեց Պոլտավայի ու Խարկովի վրա։ Ուկրայնայի կուլակները ոգնում եյին Դենիկինին։ Մախնոյի և այլ ատամանների բանդաները գալիս եյին մեր դեմ։ Այդ բանդաներում կային շատ կուլակներ և զանազան թափթփուկներ։

Կարճ ժամանակամիջոցում Ուկրայնան ընկավ Դենիկինի լծի տակ։ Կապիտալիստներն ուզում եյին կրկին ստրկացնել մեր յերկիրը։ Նրանք յետ եյին խլում գործարաններն ու հողը։

Բայց յերկար չտևեց Դենիկինի հաջողությունը։ Ճիշտ է, նա քիչ մնաց հասներ Տուլային, բայց մենք նրան շուտով յետ քշեցինք։

ԴԵՆԻԿԻՆԻՆ ՅԵՏ ՔՇԵՑԻՆՔ

1919 թիվն ամենադժվար տարին եր։ Մենք սովում եյինք։ Շատերը մեռան տիֆով։ Վոջիլը տարածում եր վարակը։

Քայլ առ քայլ սպիտակները վերցնում եյին մեր քաղաքները։ Դենիկինը գրավեց Կուրսկը և Որյոլը։ Նա մոտենում եր Տուլային և սպառնում եր Մոսկվային։

Մոսկվայի, Լենինգրադի և այլ քաղաքների պրոլետարները համալրում եյին կարմիր գնդերը։ Մենք

կանգնեցրինք Դենիկինի բանդաների առաջշարժումը: Մարտերից հետո Դենիկինը նահանջեց: Սպիտակ բանդաների մնացորդները փախան:

ՄՈՍԿՎԱ—ՊԱՐԻԶ

— Հե՜յ ադյուտանտներ,—կանչեց գոռոզ Դենիկինը, ձեզ տեսնեմ, յերկու շաբաթվա մեջ վերցրեք Մոսկվան. յես կամենում եմ այնտեղ հանգըստանալ:

— Ձերդ գերազանցություն,—ասացին ադյուտանտները,—լավ չի՞ լինի Ղրիմ գնաք. այնտեղ օդը հրաշալի յե, ծաղիկները հոտավետ...

— Վո՛չ,—գոռաց գեներալը,—ձեզ ինչպես հրամայում եմ, այնպես ել արեք. յերկու շաբաթից հետո յես Մոսկվա պիտի մտնեմ:

— Իհա՛րկե, իհա՛րկե, ձերդ գերազանցություն, այդպես ել կանենք, յերկու շաբաթվա մեջ Մոսկվան կվերցնենք:

Անցավ մի ամիս...

Դենիկինը կրկին դիմեց ադյուտանտներին.

— Ե՞յ դուք, դդումներ, վերջապես Մոսկվան վերցնելու յեք, թե վոչ:

— Այո՛, այո՛, ձերդ գերազանցություն. մենք այնտեղ «Կարմիր» ճաշարանում ձեզ համար ճաշ ենք պատվիրել:

Անցավ ելի մի ամիս, բայց Մոսկվան չկա ու չկա:

Դենիկինը գոռում ե. «Մոսկվա՛ն Մոսկվա՛ն»:

Բայց ավա՜ղ, Մոսկվա մտնելու փոխարեն նա՝ պոչը հավաքած՝ փախավ Պարիզ:

ԼԻՆԵՆՔ ՄԻՇԱՅԻ ՆՄԱՆ

Մեր 28-րդ գունդը նահանջում եր Զամայեվից:

Անդադար գրոհներից և ցրտից բանակայինները ուժասպառ եյին յեղել: Գնդում մնացել եր միայն 100 հրաձիգ:

Կոլչակի բանդաները մեզ նեղում եյին: Գնդում կար միայն 2 գնդացիր, մեկը Սիմյոնի մոտ, մյուսը Միշայի:

Միշան հրաման ստացավ իր գնդացրով ծածկել գնդի նահանջը:

Միշան ընտրեց գնդացրի տեղը և սկսեց սպասել:

Առաջինը յերևացին կոզակները: Միշան սպասեց մինչև նրանք մոտեցան. ապա սկսեց իր գընդացրից արճիճե կարկուտ թափել նրանց գլխին: Ընկան ձիեր և մարդիկ: Վողջ մնացողները հետ փախան:

Անցավ 10 րոպե:

Դարձյալ ձյան վրա սև կետեր յերևացին: Այդ հրաձիգներն եյին առաջ սողում: Միշայի չորսկողմը սկսեցին գնդակներ թափվել:

Միշան փոխում ե ժապավենը և նորից գնդացիրն սկսում ե հնձել: Սպիտակներից շատերը ընկան: Հետ նահանջեցին ապա հարձակվեցին: Միշան նորից սկսեց հնձել:

Իսկ գունդն արդեն չեր յերևում:

Միշան, բացի թշնամուց և գնդացրի հատիկից, վոչինչ չեր տեսնում: Միայն ձախ ուսն եր այրվում և հոսող արյունից կարմրում սպիտակ ձյունը:

Յերբ մթնեց, Միշան վեր թռավ, վերցրեց գընդացիրը և սկսեց վազ տալ գնդի ուղղությամբ:

Ցանկանում էր հասնել գնդին։ Թե ինչքան էր վազել, չի հիշում։ Խելքը գլուխն յեկավ միայն հիվանդանոցում։ Նրա առաջին հարցը յեղավ՝

— Իսկ ուր է իմ գնդացիրը։

Նրան հայտնեցին, վոր գնդացիրը սարքին է։

Միշան առողջացավ և գնաց իր գունդը։ Միքանի որից հետո, նա կրծքին կարմիր դրոշի շքանշան ուներ։

ԼԻՆԵՆՔ ԱՅՆՊԵՍ, ԻՆՉՊԵՍ ՅԵՂԵԼ ԵՆ ՄԵՐ ԱՎԱԳ ԸՆԿԵՐՆԵՐԸ

ԲԱՆՎՈՐՆԵՐՆ ՈՒ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԸ ՄԻՇՏ ՊԵՏՔ Է ՀԻՇԵՆ 1920 Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 20-Ը՝ ՎՐԱՆԳԵԼԻ ՊԱՐՏՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՂՐԻՄԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ ՕՐԸ

ՅՈՒԴԵՆԻՉԻ ՋԱԽՋԱԽՈՒՄԸ

1919 թվի աշնանն էր։ Սիբիրում մենք ջախջախում եյինք ցարական ծովակալ Կոլչակին։ Գեներալ Դենիկինը հարձակվում էր Մոսկվայի վրա։ Յերկրում սով էր։

Սպիտակներն ուզեցին ոգտագործել մեր դժվարությունները։ Կապիտալիստների վարձկանը, ցարական գեներալ Յուդենիչը շարժեց իր բանակը Լենինգրադի դեմ։ Նա ուներ 200 հազար սվին և 2 հազար թուր։ Նրան ոգնում եյին ֆրանսիացի ու անգլիացի կապիտալիստները։

Լենինգրադի բանվորները վոտքի յելան մի մարդու պես։ Նրանք յերդվեցին.

— Կմեռնենք մարտում, բայց չենք հանձնի կարմիր Պիտերը։

ԼԵՆԻՆԳՐԱԴԸ ՊԱՇՏՊԱՆԵՑԻՆՔ

Յուդենիչը հարձակվում էր։ Սպիտակները գտնըվում եյին քաղաքից 25 կիլոմետրի վրա։ Լսվում

էր թնդանոթների վորոտը։ Քաղաքում տիրում էր կարգ ու կանոն։ Ամեն տեղ յեռում էր աշխատանքը։ Կառուցում եյին ամրություններ։ Փորում եյին խրամատներ։ Հյուսում եյին լարափակոցներ։ Գործարանները նորոգում եյին զրահամեքենաներ, թընդանոթներ, գնդացրեր։ Բանվորները ցույց եյին տալիս տոկունություն և անվախություն։

Հենց քաղաքի տակ սկսվեցին համառ մարտերը։ Կոմունիստներն ու կարմիր հրամատարները միշտ էլ առջևից եյին գնում։ Շատերն ընկան մարտում։ Յուդենիչի բանդան ջախջախված էր։

Մենք թշնամուն չհանձնեցինք Լենինգրադը։

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՈՒ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ԶԻՆՎԱԾ ԴԱՇԻՆՔՆ Է

(Վ. Ի. ԼԵՆԻՆԻ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻՆ ՈՒՂՂԱԾ ԴԻՄՈՒՄԻՑ)

Ընկեր կարմիր բանակայիններ։ Անգլիայի, Ամերիկայի, Ֆրանսիայի կապիտալիստները պատերազմ են մղում Ռուսաստանի դեմ, նրանք վրեժ են լուծում Խորհրդային բանվորա-գյուղացիական հանրապետությունից նրա համար, վոր նա տապալեց կալվածատերերի ու կապիտալիստների լուծը և ոբինակ տվեց յերկրագնդի բոլոր ժողովուրդներին։

Անգլիայի, Ամերիկայի ու Ֆրանսիայի կապիտալիստներն ոգնում են դրամով ու մարտապաշարներով ռուսական կալվածատերերին, վորոնք տանում են իրենց զորքերը խորհրդային Ռուսաստանի դեմ, կամենալով վերականգնել ցարի իշխանությունը, կալվածատերերի իշխանությունը, կապիտալիզմի իշխանությունը, վոչ այդ չի լինի։ Կարմիր բա-

նակը համախմբվեց, վոտքի կանգնեց, քշեց կալվածատերերի զորքերին ու սպիտակ գվարդիական պաներին։ Ելի մի փոքր ջանքեր, ելի թշնամու դեմ պայքարի մի քանի ամիս և հաղթանակը մերըն է։

Կարմիր բանակն անհաղթ է, վորովհետև նա համախմբել է միլիոնավոր աշխատավոր գյուղացիներին բանվորների հետ, վորոնք սովորել են այժմ կռվել, վարժվել են ընկերական կարգապահության, չեն ընկճվում, կոփվում են... Համարձակ ու համարձակ թշնամու դեմ են գնում և գիտեն, վոր մոտ է նրա պարտությունը։

Բանվորների ու գյուղացիների դաշինքը,—Կարմիր բանակը,—ամուր է, սերտ է, անխզելի յե։ Կուլակները և շատ հարուստ գյուղացիները աշխատում են ապստամբություններ սարքել խորհրդային իշխանության դեմ, բայց նրանք չնչին փոքրամասնություն են կազմում։ Կարճ ժամանակով և սակավ դեպքերում է հաջողվում նրանց խաբել գյուղացիներին։ Գյուղացիները գիտեն, վոր իրենք միայն դաշնակցած բանվորների հետ կհաղթահարեն կալվածատիրոջը...

Ընկեր կարմիր բանակայիններ. կանգնեցեք ամուր, կանգնեցեք միահամուռ։ Հառաջ համարձակ ընդդեմ թշնամու։ Ձերը կլինի հաղթանակը։ Կալվածատերերի ու կապիտալի իշխանությունը, վոր տապալված է ռուսաստանում, կպարտվի ամբողջ աշխարհում։

ՀԱԿԱՀԱՐՎԱԾ ՍՊԻՏԱԿ ԼԵՀԵՐԻՆ

ՉՏԵՍՆՎԱԾ ՌԱԶՄԱԿԱՆ ՅԵՐԹ

(Վ. Ի. ԼԵՆԻՆԻ ՃԱՌԻՑ)

Գլխավոր ուժը, վորը Լեհերին դրդում եր մեր դեմ պատերազմի, իհարկե միջազգային և առաջին հերթին, ֆրանսական կապիտալի ուժն եր...

Սկզբում լեհերը հաջողություն ունեցան, և հարավ-արևմուտքում նրանք գրավեցին Կիևը։

Հետո անցավ շատ ժամանակ, մինչև վոր Կարմիր բանակը կարողացավ համախմբել իր ուժերը և սկսել հարձակում։

Յեվ այստեղ լեհերը սկսեցին կորցնել իրար յետևից գրաված կետերը...

Մենք կատարեցինք համարյա ռազմական պատմության մեջ չլսված յերթ։

Կարմիր բանակը անդադար անցավ 500, մինչև անգամ 600 կիլոմետր, իսկ շատ տեղերում՝ մինչև 800 վերստ և հասավ Վարշավային...

Կարմիր բանակը ստիպեց Լեհական պաներին հաշտվել մեզ հետ և հրաժարվել իրենց հափշտակիչ պլաններից։ Կարմիր բանակը լավ դաս տվեց սպիտակ պաներին ու միջազգային կապիտալիստներին։

ՎՐԱՆԳԵԼԻ ՋԱԽՋԱԽՈՒՄԸ

Դենիկինի ամբողջ բանակը ջախջախվեց, նրա զորքերի մի մասը թագնվեց Կրիմում։

Այդ մնացորդներից պարոն Վրանգելը ստեղծեց սպիտակ գվարդիական նոր բանակ։ Ֆրանսական

ու անգլիական կապիտալիստները Վրանգելին տվեցին փող, լավ զինավորում, ռազմական պաշարներ։

1920 թվի ամառը Կարմիր բանակը զբաղված եր սպիտակ լեհերի դեմ մարտ մղելով։ Վրանգելն օգտվեց այդ հանգամանքից։ Նա հարձակման անցավ։ Ամառվա ընթացքում նրան հաջողվեց գրավել Խորհրդային Ուկրաինայի հարավը։ Աշնանը մենք զինադադար կնքեցինք Լեհաստանի հետ։ Կարմիր բանակն անցավ հարձակման Վրանգելի դեմ. մի քանի օրում նա յետ մղեց Վրանգելին դեպի Կրիմ։

Ֆրանսական ճարտարապետները Կրիմը դարձրին անմատչելի ամրոց։ Կրիմի թերակղզու բոլոր մուտքերը խիստ ամրացված եյին։

Բայց Կարմիր բանակը վճռեց վերցնել Կրիմը գրոհով։ Ընկեր Ֆրունզեյի հրամանատարությամբ նա հերոսությամբ կատարեց այդ խնդիրը։

Ո՛Վ ԵՐ ՆԱ

Քաղաքացիական կռիվների ամենադժվարին ժամանակն եր։ Թշնամիները չորս կողմից հարվածում եյին խորհրդային յերկրին։

Մի վճռական մարտից հետո 19 կարմիր մարտիկներ՝ կտրված իրենց զորամասից՝ հավաքվել եյին անտառում։ Ձյունը կորցրել եր նրանց հետքերը և փակել ճանապարհը։

Թշնամին առաջանում եր։ Անտառը շուտով անցնելու յեր նրա ձեռքը։

Յեվ այդ 19 կարմիր բանակայինները մտածում եյին իրենց փրկելու մասին։ Բայց ինչպես։ Նրանք չգիտեյին ճանապարհը և չունեյին պաշտպանու-

թյան միջոցներ։ Նրանց զենքն ու զինամթերքն եր 5 հրացան և մի գնդացիր՝ միայն մի ժապավենով։

Այդ ժամին գալիս ե քսաներորդը՝ մի նիհար ու հոգնած կարմիր բանակային։ Նա միակն եր վոր գիտեր դեպի կարմիր զորամասերը տանող ճանապարհը։

Բայց գնալ այդ նեղ ճանապարհով, առանց պաշտպանվելու, հնարավոր չեր։ Թշնամին կարող եր, գերել։ Պետք եր մեկը ժամանակավոր կանգնեցներ թշնամուն, վորպեսզի մյուսները կարողանային անվտանգ տեղ հասնել։

Յեվ ահա նրանք վիճակ են գցում՝ թե ով մնա գնդացրի մոտ։

Չկար մեկը, վոր հոժարակամ մնար և զոհեր իր կյանքը մյուս 19-ի համար։

Մինչդեռ նրանք վիճակ եյին գցում, նորեկ ընկերը արդեն պառկած եր գնդացրի մոտ և ձեռքով ճանապարհն եր ցույց տալիս։

19 մարտիկները լուսաբացին արդեն կարմիր ջոկատումն եյին։

Բայց նրանք անվերջ մտածում եյին, թե ով եր այն ընկերը, վորը զոհեց կյանքն իրենց համար։

Յեվ հանկարծ մեկը հայտնեց՝ «Նա, նա կոմունիստ եր, ընկերներ»։

ԿՈՄՈՒՆԻՍՏՆԵՐԸ ԻՐԵՆՑ ՆՎԻՐՎԱԾՈՒԹՅԱՄԲ, ԻՐԵՆՑ ԱՐՅԱՆ ԳՆՈՎ ՇԱՏ ԿԱՐՄԻՐ ՋՈԿԱՏՆԵՐ ԵՆ ՓՐԿԵԼ ՎՏԱՆԳԻՑ։ ԿՈՄՈՒՆԻՍՏՆԵՐԸ ԻՐԵՆՑ ԽԻԶԱԽՈՒԹՅԱՄԲ ՎՈԳԵՎՈՐԵԼ ԵՆ ՄՅՈՒՍ ՄԱՐՏԻԿՆԵՐԻՆ, ՄՂԵԼ ՆՐԱՆՑ ԴԵՊԻ ՎՃՌՈՂԱԿԱՆ ՄԱՐՏ, ՀԱՍՑՐԵԼ ՄԵԾ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԻ։

ՊԵՐԵԿՈՊԻ ԳՐԱՎՈՒՄԸ

Ամենից ուժեղ ամրությունները Պերեկոպի մոտն եյին։ Ֆրունզեն հրաման տվեց ճեղքել Պերեկոպի ամրոցները։

Նոյեմբերի լույս 10-ի գիշերը Կարմիր բանակը սկսեց գրոհը։ Առաջին գրոհը յետ եր մղված։ Ֆրունզեն հրամայեց սկսել յերկրորդ գրոհը։ Մեր զորամասերը ճեղքեցին լարափակոցները։ Բայց հակառակորդի մրրկային կրակը կասեցրեց մեր գրոհը։ Ֆրունզեն մռայլ դեմքով լսեց զեկուցումը և հրամայեց.

— Սկսել յերրորդ գրոհը։

Ֆրունզեն չկամեցավ սպասել յերրորդ գրոհի արդյունքներին։ Նա պատրաստվեց գնալ հեծյալ բրիգադը և անձամբ մասնակցել վերջին գրոհին։

Լուռ եր սենյակում։ Ներքևում ծովի վրա վորոտում եր մարտը։

Շտաբի լռությունը խախտեց հեռախոսի զանգը։

— Ժամի 3-ից անց 50 րոպե 51-րդ դիվիզիայի զորամասերը և կրակային բրիգադը ճեղքեցին Պերեկոպի պատնեշը,—գոչեց մեկը հեռախոսով։

— Կրկնեցեք,—բացականչեց շտաբի պետը, սրբելով ճակատից քրտինքի խոշոր կաթիլները։

— Ճեղքեցինք Պերեկոպը. ճեղքվածքով ուղարկված ե հեծելազորը։

ԿՈՎԿԱՍՅԱՆ ԿԱՐՄԻՐԱԴՐՈՇ ԲԱՆԱԿԻ ՄԱՐՏԱԿԱՆ ՈՒՂԻՆ

ԻՆՉՊԵՍ ԾՆՈՒՆԴ ԱՌԱՎ ԲԱՆԱԿԸ

ԿԿԲ Բանվորագյուղացիական Կարմիր բանակի փառապանծ ջոկատներից մեկն ե։

Մեր բանակը (մինչև 1923 թ. նա կոչվում եր 11-րդ բանակ) կազմակերպվեց Հյուսիսային Կովկասում 1918 թվին։ Նրա ծնունդ առնելու պաշտոնական օրը համարվում ե օգոստոսի 14. 1918 թ. 11-րդ բանակի կազմի մեջ մտան բանվորների, հեղափոխական կազակների, զինվորների ու գյուղացիների զինված ջոկատները, 1918 թ. սկզբին, վորոնք հաստատեցին Խորհրդային իշխանությունը Հյուսիսային Կովկասում։

ԱՆԶՈՒԳԱԿԱՆ ԱՐՇԱՎԱՆՔ

Ծանր պայքարում, հերոսությամբ համակված 11-րդ բանակի մասերն անձնազոհությամբ կռվում եյին չորս կողմից հարձակվող սպիտակ գվարդիական զորամասերի դեմ։ 11-րդ բանակին չեր բավականացնում պարենը, հանդերձանքը, հրապաշարը, բանակը կտրված եր կենտրոնից։

Արյունաքամ և ուժասպառ 11-րդ բանակի զորամասերը 1919 թ. ձմեռն սկսեցին իրենց դժվարության անօրինակ նահանջը դեպի Աստրախան՝ անջուր տափաստանների միջով, պաշտպանվելով

հետապնդող թշնամուց։ Բազմահազար մարտիկներ կորստի մատնվեցին տիֆից, քաղցից, սառնամանիքից։ 1919 թ. մարտին նահանջող 11-րդ բանակի մնացորդները մտան Աստրախան։ Այսպես վերջացավ Խորհրդային իշխանության համար պայքարի պատմության առաջին էտապը։

ԿՈՐԾԱՆԻՉ ՀԱՐՎԱԾ ՍՊԻՏԱԿ ԳՎԱՐԴԻԱԿԱՆՆԵՐԻՆ

11-րդ բանակը, վոր դեռ չէր կազդուրվել Հյուսիսային Կովկասում ստացած իր ծանր վերքերից՝ ամբողջ 1919 թվի ընթացքում անողոք պայքար է տանում Աստրախանի համար բազմաթիվ ու լավ զինված թշնամու դեմ։ Սեպտեմբերի 27-ից մինչև նոյեմբերի 7-ը (1919թ.) շրջապատված չորս կողմից 11.-րդ բանակի փոքրաթիվ զորամասերը հաջողությամբ պաշտպանում են Զորնի Յարը։ 1919 թվի վերջին 11-րդ բանակը կործանիչ հարված հասցրեց սպիտակ գվարդիականությանը կատաղի մարտերում վերցնելով Ցարիցինը։ Միաժամանակ 11-րդ բանակի զորամասերը հարձակում գործեցին Հյուսիսային Կովկասի վրա, վորտեղ հավաքվել եյին ջախջախված սպիտակ գվարդիականության մնացորդները։ Համառ կռիվները Ստավրոպոլի տակ գործը վճռեցին և, վերջապես, 1920 թ. գարնանը Հյուսիսային Կովկասը մաքրված էր հակահեղափոխությունից։

ԳԼՈՒԽ ԵՆ ԲԱՐՁՐԱՑՆՈՒՄ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԸ

Այդ շրջանում Անդրկովկասում գոյություն ունեյին 3 բուրժուական հանրապետություններ.— Վրաստան, Հայաստան և Ադրբեջան։ Այդ հանրապետությունների տերրիտորիայում ապաստան գտան Խորհրդային իշխանության թշնամիները, վորոնք Կարմիր բանակից ստացած հարվածներից խելքները գլուխներն եյին բերել Խորհրդային Հանրապետությունների վրա նոր հարձակում գործելու համար։

Համաշխարհային բուրժուազիան այդ ժամանակ Անդրկովկասում իրեն զգում եր ինչպես իրեն տանը։ Իշխանության գլուխն անցած մենշևիկները, դաշնակներն ու մուսավաթիստները նրանց լիակատար ստորադրյալներն եյին և թույլ եյին տալիս, վոր այդ բուրժուազիան անխնայորեն թալանի Անդրկովկասի բնական հարստությունները։

Լիակատար քայքայումով, քաղցով, իրավազրկությամբ, բռնությամբ բուրժուազիայի և նրա կամակատար՝ մենշևիկների, դաշնակների ու մուսավաթիստների կող մից հրահրվող ազգային թշնամանքով՝ համբերության մինչև ծայր աստիճանը հասցրած— Անդրկովկասի բանվոր դասակարգն ու աշխատավոր մասսաները սկսում են կազմակերպել իրենց ուժերը պայքար մղելու Խորհրդային իշխանության համար։

Բանի գնում ավելի հաջող է ընթանում Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի ազգային կոմկուսակցությունների ընդհատակյա աշխատանքը։

ԿՈՎԿԱՍՅԱՆ ԿԱՐՄՐԱԴՐՈՇԱՎՈՐԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ

1920 թ. ապրիլին 11-րդ բանակի մասերը ապստամբած Բաքվի պրոլետարիատի կանչելով ջախջախելով մուսավաթիստների բանակը՝ մտան Բաքու։ Կարճ ժամանակից հետո Ադրբեջանն ազատագրված էր մուսավաթիստներից։

1920 թ. նոյեմբեր ամսին, 11-րդ բանակի զորամասերը հրավիրվեցին Դիլիջանի գավառում ապստամբած աշխատավորների կողմից, վորոնք ոգնեցին նրանց վոչնչացնելու դաշնակների իշխանությունը և մաքրելու նրանցից Հայաստանը։

1921 թ. փետրվար ամսին, փլչեց համաշխարհային իմպերիալիզմի վերջին հենակետը Անդրկովկասում—մենշևիկյան իշխանությունը Վրաստանում։ Լոռվա գավառի ապստամբած գյուղացիները զինաթափ արին մենշևիկյան ժողովրդական գվարդիան, ստեղծեցին Վրաստանի Հեղկոմ և դիմեցին 11-րդ բանակի ոգնությանը։

Մի շարք համառ կռիվներից հետո—Փոյլի կամուրջի, Թիֆլիսի, Սուրամի լեռնանցքի տակ—մենշևիկյան բանակը ջախջախված եր։ Մենշևիկների առաջնորդները, իրենց հետ վերցնելով թալանած թանկարժեք իրերը նստելով Բաթումում շոգենավերը, փախան Կոստանդնուպոլ։

ԿԿԲ վերջացրեց իր մարտական աշխատանքը և անցավ խաղաղ շինարարության։ Իր մարտական արժանիքների համար նա պարգևատրված ե Կարմիր դրոշի շքանշանով։

Սկսվեց սոցիալիստական շինարարության բուռն շրջանը տնտեսական և կուլտուրական ճակատներում։ Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի Խորհրդային հանրապետությունները միանալով, Անդրկովկասյան Ֆեդերացիա կազմելով, ամրացրին ազգային խաղաղությունը, պայմաններ ստեղծեցին Անդրկովկասի բոլոր ազգությունների տնտեսական ու կուլտուրական արագ աճման համար։

ԿԿԲ հերոսական անցյալում հսկայական դեր ե

խաղացել Կոմունիստական կուսակցությունը, վորն իր լավագույն ուժերին ամենածանր բոպեներին ճակատ եր ուղարկում, բարձրացնում եր մարտիկների վոգին, կազմակերպում եր նրանց կամքը՝ Խորհրդային իշխանության թշնամիների դեմ անխնա պայքար մղելու համար

ԿԿԲ ԱԶԳԱՅԻՆ ԶՈՐԱՄԱՍԵՐԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ԿԿԲ կան Վրացական, Հայկական և Ադրբեջանյան ազգային զորամասեր։ Այդ բացահայտորեն ցույց ե տալիս թե ինչպես գործով, բայց վոչ թե խոսքով, Կոմունիստական կուսակցությունը լուծում ե ազգային հարցը։

Խորհրդային Միության յուրաքանչյուր աշխատավոր, ինչ ազգության ել նա պատկանելիս լինի, Խորհրդային սահմանների պաշտպանի պատվավոր պարտավորությունն ունի։ Կարմիր բանակի ինտերնացիոնալ բնույթը ավելի պայծառ կերպով տեսանելի յե ԿԿԲ բանակի որինակով, վորի բազմազգի զորամասերը միացել և կազմել են մեկ մարտական ինտերնացիոնալ ընտանիք։ Դրանումն ե ինչպես ԿԿԲ, այնպես և ամբողջ Կարմիր բանակի խոշորագույն ուժն ու հզորությունը։

ԱԴՐԲԵՋԱՆԻ ԴԻՎԻԶԻԱՆ

Ադրբեջանի դիվիզիան հպարտությամբ իր սկիզբն ե առնում Բաքվի կոմունայի կարմիր գվարդիայի ջոկատներից 1918 թ.։ Կոմունայի խորտակումից հետո—կազմալուծվեցին նաև Ադրբեջանյան առաջին կարմիր զորամասերը։

Խորհրդային իշխանության վերականգնումից

հետո, սկսվեց Ադրբեջանյան դիվիզիայի մասերի շինարարությունը։ Արդեն 1920 թվի վերջում Ադրբեջանյան կարմիր զորամասերը ցույց տվին իրենց մարտական, հեղափոխական հզորությունը, դուրս գալով ոգնելու ապստամբած պարսկական գյուղացիությանը։ Մինչև 1921 թ. կեսերը Ադրբեջանյան զորամասերը հաջողությամբ գործում էյին անգլիական զորքերի և պարսկական կազակների դեմ։ Բաքվի 26 կոմունարների անվան 1-ին գունդը մարտական քաջության համար պարգևատրվեց պատվավոր դրոշով Իրանի հանրապետության կողմից։ 1921 թվի կեսերից Ադրբեջանյան դիվիզյան անցնում է խաղաղ դրության։

ՀԱՅԿԱԿԱՆ ԴԻՎԻԶԻԱՆ

11-րդ բանակի կողմից Հայաստանի ապստամբված աշխատավորներին ոգնություն ցույց տալուց անմիջապես հետո—քշելու համար դաշնակներին և Խորհրդային իշխանություն հիմնելու—սկսվեց Կարմիր բանակի հայկական զորամասերի շինարարությունը։ Արդեն իրենց գոյության յերրորդ ամսում Հայկական յերիտասարդ կարմիր զորամասերը ծանըր մարտական քննություն տվին։ Ոգտվելով նրանից վոր 11-րդ բանակի գլխավոր ուժերը զբաղված են մենշևիկյան Վրաստանի դեմ պայքարով, դաշնակները Հայաստանում ապստամբություն բարձրացրին։ 45 որվա ընթացքում հայկական զորամասերը կռվում էյին սառնամանիքում, դաշնակների հարձակման դեմ անբավարար հրապաշարով։ Դիմացան մինչև ոգնական ուժերի հասնելը, հետո մաքրեցին Հայաստանը դաշնակցական բանդաներից։

Այս պայքարում աճեց ու կոփվեց Հայկական հրաձիգ դիվիզիան։

ՎՐԱՑԱԿԱՆ ԴԻՎԻԶԻԱՆԵՐԸ

Վրացական ազգային զորամասերի կազմակերպումն սկսվեց ընկ. Լենինի անձնական ցուցումի համաձայն, «Անհրաժեշտ է շտապով զինել բանվորներին ու չքավորագույն գյուղացիներին վրացական կարմիր բանակ ստեղծելու նպատակով»,—ուղիղ հեռագրով հանձնարարեց ընկ. Լենինը Թիֆլիս, մարտի 3-ին, 1921 թ.։ Վրաստանի Կոմկուսակցության անմիջական ղեկավարությամբ վրացական ազգային զորամասերն արագորեն աճեցին ու ամրացան։ Արդեն 1922 թվին նրանց բաժին ընկավ պատասխանատու խնդիր՝ լիկվիդացիայի յենթարկել իշխանների ու ազնվականների հակահեղափոխական ապստամբությունը, վոր կազմակերպել եր նացիոնալ—դեմոկրատների բուրժուական կուսակցությունը՝ Վրաստանի ամենադժվարին ու հետամնաց անկյունում—Սվանետիում։ Ապստամբությունը ճնշվեց։ Միևնույն թվին վրացական զորամասերը ջախջախեցին և հակախորհրդային բանդիտիզմը Խևսուրեթում և Գուրիայում։ Վերջապես 1924 թ. նրանք կործանիչ հարված հասցրին մենշևիկներին, վոր փորձում էյին ապստամբություն բարձրացնել, վերջ դրին մենշևիկների ցանկությանը—զինված ձեռքով Խորհրդային իշխանությունը տապալելու փորձերին։

ԱԶԳԱՅԻՆ ԶՈՐԱՄԱՍԵՐԻ ՄԱՐՏԱԿԱՆ ԱՃՈՒՄԸ

Խաղաղ շինարարությանն անցնելով, ԿԿԲ ազգային զորամասերը արագորեն կատարելագործելով

իրենց մարտական ու քաղաքական պատրաստությունը, կոփվում դառնում են ամուր մարտական օրգանիզմներ։ Վերջին տարիներում ԿԿԲ ազգային զորամասերը մարտական ու քաղաքական պատրաստությամբ միատեսակ մակարդակի վրա յեն կանգնած համեմատած ավելի առաջ կազմակերպված քաղաքացիական պատերազմի տարիներին անցկացրած համարային զորամասերի հետ։

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԽՍՀՄ ԲՈԼՈՐ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ Է

Կարմիր բանակը — Խորհրդային Միության բոլոր ժողովուրդների աշխատավորների խաղաղ աշխատանքի հավատարիմ ու հուսալի պահապանն է։ Կարմիր բանակի ամուր պաշտպանությամբ Խորհրդային Միության մեջ մտնող յուրաքանչյուր ազգային հանրապետություն կամ մարզ կարող է հանգիստ ու անվրդով զարգանալ։

Թեկուզ ինչ սահմանից էլ Խորհրդային Միության վրա հարձակվելու լինեն իմպերիալիստները, այդ միևնույն է, ամեն տեղ նրանց հարձակումը հարված կլինի ամբողջ Խորհրդային հանրապետությունների վրա՝ ամբողջությամբ վերցրած։

Այդ պատճառով Խորհրդային Միության սահմանի ամեն մի մասում Կարմիր բանակը պետք է պատրաստ լինի հակահարված տալու մեր թշնամիներին, յեթե նրանք փորձ կանեն հարձակվել մեզ վրա՝ թեկուզ այդ լինի մոտիկ — արևմտյան սահմանում, Ուկրայնայում, կամ հեռավոր — Սիբիրում, անսահման տարածության վորևէ տեղում։

Խորհրդային Միության սահմանն Անդրկովկա-

սում շատ կարևոր մասերից մեկն է։ Անդրկովկասում կան անթիվ — անհամար բնական հարստություններ, մանավանդ նավթ, մարգանեց և այլն։ Համաշխարհային իմպերիալիզմը շատ անգամ է փորձել իր ձեռքը վերցնել այդ հարստությունները։ 1918 թվից մինչև 1920 թիվը, մենշևիկների, դաշնակների և մուսավաթիստների Անդրկովկասում տիրապետության ժամանակ, անգլիական բուրժուազիան արդեն իրեն Բաքվի նավթի տերն էր համարում։ Խորհրդային իշխանությունը մենշևիկների, դաշնակների ու մուսավաթիստների հետ քշեց նաև անգլիական գիշատիչներին։

Սակայն, համաշխարհային բուրժուազիան Բաքվի նավթին ու Չիաթուրի մարգանեցին տիրելու իր հույսը չկտրեց։ Ամենից ավելի դեպի Խորհրդային իշխանությունը անհաշտ են հատկապես նավթային «արքաները»։ Կապիտալիստների համար ամեն հարմար դեպքում նրանք անկասկած փորձում են իրենց «բախտը»։

Այդ պատճառով ԽՍՀՄ սահմանը, Անդրկովկասում պետք է առանձնակի ամուր պաշտպան ունենա։

Ահա թե ինչու, բացի ազգային զորամասերից, վոր թվով անբավարար են Անդրկովկասը պաշտպանելու համար, ԱՍՖԽՀ մեջ կան և համարային զորամասեր, վորոնք համարվում են ԽՍՀՄ ներքին շրջաններից։ Նրանք վրացական, հայկական և ադրբեջանական զորամասերի հետ միասին իրենց պատվավոր պարտքն են կրում Խորհրդային Միության առաջ-պահպանելով Խորհուրդների յերկրի կարևորագույն սահմաններից մեկը — սահմանը Անդրկով-

կասյան ֆեդերացիայում։ Նրանք վայելում են միատեսակ ուշադրություն, սեր և հոգատարություն բանվոր դասակարգի, բազմազգի Անդրկովկասի լայն աշխատավոր մասսաների կողմից։ Բազմազգի ՆԿԲ յեղբայրական սերտ կապերով կապված է բանվոր դասակարգի հետ, Անդրկովկասի ժողովուրդների աշխատավոր մասսաների հետ։

«ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՊԱՆԹԵՈՆԻՑ»

ԼԻՊԱՐԻՏ ՄԽՉՅԱՆԸ

Մեր յերիտասարդ Կարմիր բանակն իր պայքարի ու հաղթանակների վոսկե եջերն ունի և բանվորական դիկտատուրայի համար ընկած վեհ հերոսների ՊԱՆԹԵՈՆԸ։

Քաղաքացիական կռիվներում ընկած ամենափայլուն հերոսներից մեկը բոլշևիկ կոմիսար Լիպարիտ Մխչյանն է։

Մի կրակոտ, յեռանդուն, գործունյա, քաղցրախոս, հմայող, ուժեղ կամքով, տոկուն, անվեհեր, մասսայիկ, մի խոսքով բոլշևիկ բառիս բուն իմաստով, յերիտասարդ եր։

Նա Ղամարլուի ֆրոնտի կարմիր բանակայինների, պետն եր ու վոգևորությամբ յերևում եր բոլոր զորամասերում։

Մարտի 22-ի կռվում Խորվիրապի շրջանում, ընկ. Մխչյանն անձամբ ղեկավարում եր վաշտի գրոհը թշնամու վրա։

Նա տեսնելով մեր ձախ թևի ծանր դրությունը, վոր թշնամին փորձում է կտրել մեր թիկունքը, նետվեց մարտի դաշտ դրությունը վերականգնելու։

Միանգամայն հաջող տանելով գրոհը, վոգևորելով մասսաներին, նա խուճապի մատնեց թշնամուն։ Դրությունը վերականգնվեց, սակայն ինքը ստացավ ծանր մահացու վերք։

Իսկույն տեղափոխվում է Արարատ կայարանը։ ապա Նախիջևան և վիրահատության ընթացքում ապրիլի 16-ին վախճանվում է։

Վիրավորվելուց նրա վերջին խոսքերն են լինում՝ «ԱՓՍՈՍ ԱՆԺԱՄԱՆԱԿ ՎԻՐԱՎՈՐՎԵՑԻ»։

ՅԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ

ԻՄ ԸՆԿԵՐ ԼԻՊՈՅԻՆ

ԸՆԿ. ԼԻՊԱՐԻՏ ՄԽՉՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Լուսաբացին մենք անցանք գրոհի,—
Լուսաբացին խփեցին Լիպոյին...
Լուսաբացին նա ընկավ կռվում,
Յերբ հաղթանակն եր վառվում, փռվում։
Ընկավ կռվում մեր զինկոմն արի,
Ընկավ Լիպոն։
Յերևանի
Ճանապարհին...
...Լուսաբացին Յերևանը յերևաց։
Լուսաբացին մենք մտանք Յերևան։
Լուսաբացին մեր բանակը հաղթական
Քաղաք մտավ հետո կարմիր մի դագաղ...
Լուսաբացին—վոչ մի ախ.—
Սակայն—
Լուսաբացին դրոշակներ հուրհուրան
Իջան ընկեր Լիպարիտի
Վրա...

Ծածանվեցին դրոշները բանակի—
Ու պառկած էր իմ ընկեր Լիպոն
Ռազմի կարմիր իր զգեստները հագին։
— Փա՜ռք քեզ, փա՜ռք քեզ,
Մեր զինկոմ
Արի—
Փառք վոր ընկար
Հաղթանակի
Ճանապարհին...
Հիմա Լիպոն իմ չկա, նա չկա՛ հիմա—
Ո՞վ չի սակայն յերազում այդպիսի մի մահ
Նա պառկած է
Կոմունարների
Այգում.—
— Փառք քեզ ընկած
Մեր քաջերի
Զինկոմ։
Դու պայքարի
Դրոշ յեղար
Վառ մի
— Թե տեսնեյիր ինչ է հիմա
Մեր բանակը
Կարմիր.—
Նա աշխարհում բանակն է, առաջին,
Յեվ վոչ մի ուժ չի դիմանա առաջին.
Ննջիր խաղաղ
Կոմունարների
Այգում,—
Փա՜ռք քեզ ընկած
Մեր քաջարի
Զինկոմ։

Յերեվան 1928 թ.

ՈՎՔԵՐ ԵՆ ՄԵԶ ՈԳՆԵԼ

Մենք միայնակ չեյինք կարող ջախջախել մեր դասակարգային թշնամիներին։ Միայն Միջազգային պրոլետարիատի ոգնությամբ մեր պայքարը հաջողությամբ պսակվեց։

Գերմանիայի, Ֆրանսիայի, Անգլիայի, Լեհաստանի, Չեխոսլովակիայի և այլ յերկրների բանվորներն ու աշխատավոր գյուղացիները մեզ ցույց տվին միանգամայն գործնական ոգնություն։

Յեթե նրանց ոգնությունը չլիներ, մենք չեյինք հաղթանակի քաղաքացիական կռիվներում։

Մեր գալիք կռիվներին՝ իմպերիալիստների դեմ մեզ հետ են լինելու վողջ աշխատավոր մասսաները։

ՎՈՐՈՇԻԼՈՎ

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ԱՌԱՋՆՈՐԴ Կ. ՅԵ. ՎՈՐՈՇԻԼՈՎ

ՌԱԶՄԾՈՎԺՈՂԿՈՄ Կ. ՅԵ. ՎՈՐՈՇԻԼՈՎ

Կլիմենտիյ Յեֆրեմովիչ Վորոշիլովը ծնվել է 1881 թվին։ 6 տարեկանից նա սկսել է աշխատել հանքահորերում։ Կլիմը ստանում էր որական 10 կոպեկ։ Տասը տարեկան հասակից նա հոր հետ միասին արածացնում է կալվածատիրոջ հոտը։ Միայն տասներկու տարեկան հասակում Կլիմը դպրոց է ընկնում։

1896 թվին նա մտնում է գործարան։ Գործա-

բանում բանվորներն աշխատում էին որական 14 ժամ։

Այդ գործարանում գործադուլ կազմակերպելու համար Վորոշիլովին բանտ նստեցրին։

1903 թվին Վորոշիլովը մտավ բոլշևիկների կուսակցության մեջ։

1905 թվին Կլիմն աշխատում էր Լուգանսկի գործարանում։ Գործարանում գործադուլներ էին տեղի ունենում։ Վորոշիլովն անցել էր բանվորների գլուխը։ Վոստիկանությունը ձերբակալեց Կլիմին։ Վոստիկանությունն այնչափ խիստ ծեծեց Կլիմին, վոր նա հասավ կիսամեռ դրության։ Կլիմին նորից բանտ նստեցրին։

1905 թվի դեկտեմբերին բանվորներն ապստամբեցին։ Նրանք ազատեցին ընկեր Կլիմին բանտից։ Բայց 1905 թվի հեղափոխությունը ճնշեցին։ Վորոշիլովը շարունակում է իր հեղափոխական աշխատանքը բանվորների մեջ, չնայած ցարական կառավարության դաժան հալածանքներին, նա իր ամբողջ կյանքում կռվել է ցարական հասարակակարգի դեմ։ Նա աշխատել է բոլշևիկների կուսակցության առաջավոր շարքերում։ Վոստիկանությունն ու ժանդարմներն ամբողջ ժամանակ հալածել են Վորոշիլովին, նրան բանտ են նստեցրել, աքսոր են ուղարկել։

* * *

1917 թվին հեղափոխությունը հաղթեց։ Վորոշիլովը մնաց պրոլետարական հեղափոխության հավատարիմ զինվորը։

Ընկեր Ստալինի հետ միասին Վորոշիլովը 1918

թվին պաշտպանեց Կարմիր Ցարիցինը (այժմ Ստալինգրադ)։ Սպիտակները շրջապատել էին Ցարիցինը նեղ ողակով։ Նրանք ուզում էին սովամահ անել քաղաքի բնակիչներին։

Ընկեր Ստալինի և ընկեր Վորոշիլովի ղեկավարությամբ թշնամին ջախջախվեց։ Սպիտակները յետ շպրտվեցին դեպի Դոնը։

1919 թվին ընկեր Վորոշիլովն ընտրվեց Ուկրաինայի Կոմունիստական Կուսակցության Կենտրոնական կոմիտեյի անդամ։ Իսկ 1921 թվից նա Համկոմկուսի (բ) Կենտկոմի անդամ է։

Ամբողջ քաղաքացիական պատերազմը Վորոշիլովն անց է կացրել ճակատներում։ Ընկեր Բուդյոննու հետ միասին նա ղեկավարել է Առաջին հեծյալ բանակը։ Առաջին հեծյալ բանակը շատ հաղթանակներ է տարել։ 1925 թվից ընկեր Վորոշիլովը ռազմական ու ծովային գործերի ժողովրդական կոմիսար է։

ՎՈՐՈՇԻԼՈՎԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՔԱՋՈՒԹՅՈՒՆԸ

Խորհրդային իշխանության համար մղած կռիվներում Վորոշիլովը շատ անգամ է իր կյանքը վտանգի յենթարկել։

Մի անգամ նա հետախուզության էր գնացել զրահապատ ավտոմոբիլով։ Ճանապարհին զրահապատը շրջապատեցին թշնամիները։ Վորոշիլովն ամբողջ մի ժամ կրակով յետ էր մղում թշնամուն։ Վերջապես նա դուրս պրծավ ու սլացավ։

Մի անգամ էլ սպիտակ գվարդիականները գիշերային հարձակումով գրավեցին գյուղը։ Այդ

գյուղում էր Առաջին հեծյալ բանակի շտաբը Վորոշիլովի ու Բուդյոննու հետ։

Վորոշիլովն արագ վրան գցեց յափնջին ու թռավ ձիու վրա։ Բայց կատաղած ձին նրան տարավ ուղիղ թշնամու մեջ։ Նիզակները ցցած սպիտակ գվարդիականները հարձակվեցին Վորոշիլովի վրա։

Մթության մեջ Վորոշիլովը յետ էր մղում նրանց հարձակումները, մինչև վոր ոգնության հասավ Բուդյոննին մի եսկադրոն հեծելազորով։

Անձնական քաջությամբ, խիզախությամբ ու ճարտարամտությամբ Վորոշիլովն որինակ էր ծառայում կարմիր բանակայիններին։

1921 թվին Վորոշիլովը մասնակցում էր Կրոնշտադի բերդի գրավմանը, վորտեղ սպիտակ գվարդիականներն ապստամբություն եյին բարձրացրել։ Հրացանը ձեռքին, Վորոշիլովը գնում է դեպի բերդը սառույցի վրայով, առաջավոր շղթայի հետ, թշնամու մրրկային կրակի տակ։

Ընկ. Վորոշիլովը իր հերոսությունների համար պարգևատրվել է Կարմիր դրոշի չորս շքանշանով, վոսկե ու մարտական զենքով։

ՎՈՐՈՇԻԼՈՎԸ ԳԵՐԱԶԱՆՑ ՀՐԱՁԻԳ

1931 թվի աշնանը Կ. Յե. Վորոշիլովը գնաց Բարանովսկու պոլիգոնը։ Պոլիգոնում հրաձգություններ եյին կատարում։

Հրամանատարներն վարժվում եյին նագանով հրաձգության։ Ահա կրակում է հրամանատարներից մեկը։ Նա արձակում է յոթ գնդակ և յոթն էլ, վրիպում են։ Հրամանատարը շփոթվում է, նա ասում է, վոր հանցավոր է նագանը։

Ընկեր Վորոշիլովը վերցնում է նագանը անհաջող հրաձգից և արձակում է յոթ գնդակ։ Հաշվում են։ Ժողկոմը ավել է 59 աչկո։

Ընկ. Վորոշիլովն ասում է.

— Ով չի կարողանում կրակել, նա ընդունակ չէ իրեն պաշտպանելու թշնամուց։

ՅԵՐԻՏ ԳՎԱՐԴԻԱ

(ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ՄԱՐՏԱԿԱՆ ՅԵՐԳ)

Հառաջ դեպի արփին հուր,
Դեպի պայքար, ընկեր,
Ձամբա բանանք սվինով սուր
Հարթենք սար—քար, ընկեր։

Անվախ հառաջ ու համարձակ,
Միշտ բարձր մեր կարմիր դրոշակ,
Յերիտ մենք գվարդիա բան-գեղջկի,
Հառաջ, ոն, շեշտակի։

Կանգնած քուրա—բովի մոտ,
Քրտինք թափինք ծոր-ծոր,
Տանջվել ենք մենք, ճարպոտ
Հարուստն ապրի անդորր։

Յեվ փորձն այդ դժվար, սաստիկ։
Մեզնից կոփեց հզոր մարտիկ.
Յերիտ մենք գվարդիա բան-գեղջկի,
Հառաջ, ո՞ն, շեշտակի։

ԼԵՆԻՆՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՄԲ ԿԱՌՈՒՑՈՒՄ ԵՆՔ ՍՈՑԻԱԼԻԶՄ

Ընկեր Ստալինը կուսակցության 16-րդ համագումարում իր արած զեկուցման մեջ, համեմատելով մեր երկիրը կապիտալիստական երկրների հետ ասեց,—Նրանց, կապիտալիստների մոտ տնտեսական աճող ճգնաժամ է, արտադրական անկում, ինչպես արդյունաբերության ասպարիզում, այնպես էլ գյուղատնտեսության ասպարիզում։

Մեզ մոտ, ԽՍՀՄ-ում տնտեսական աճող վերելք և արտադրության աճում, ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում։

Նրանց, կապիտալիստների մոտ աշխատավորների նյութական դրության վատթարացում, բանվորների աշխատավարձի իջեցում, գործազրկության աննախնթաց աճում։

Մեզ մոտ, ԽՍՀՄ-ում աշխատավորների նյութական դրության սիստեմատիկ բարելավում, բանվորների աշխատավարձի բարձրացում, գործազրկության իսպառ վերացում։

Նրանց, կապիտալիստների մոտ գործադուլների և ցույցերի անընդհատ աճում, որն առաջ է բերում միլիոնավոր բանվորական օրերի կորուստ։

Մեզ մոտ, ԽՍՀՄ-ում գործադուլների բացակայություն, բանվորների և գյուղացիների աշխատանքային վերելքի աճում, որը տալիս է մեր երկրին միլիոնավոր լրացուցիչ բանվորական օրեր։

Նրանց, կապիտալիստների մոտ-ներքին դրության սրում, բանվոր դասակարգի հեղափոխական շարժման աճում՝ ընդդեմ կապիտալիստական ռեժիմի։

Մեզ մոտ, ԽՍՀՄ-ում ներքին դրության ամրապնդում, բանվոր դասակարգի միլիոնավոր մասսաների համախմբում Խորհրդային իշխանության շուրջը։

Նրանց մոտ, կապիտալիստների մոտ ազգային հարցի սրում, ազգային ազատագրական շարժման աճում Հնդկաստանում, Հնդկաչինում, Ինդոնեզիայում, Ֆիլիպյան կղզիներում և այլն, որը փոխվում է ազգային ազատագրական պատերազմի։

Մեզ մոտ, ԽՍՀՄ-ում ազգային եղբայրության հիմքերի ամրապնդում, ազգամիջյան խաղաղության ապահովում, ԽՍՀՄ ժողովուրդների միլիոնավոր մասսաների համախմբում խորհրդային իշխանության շուրջը։

Նրանց, կապիտալիստների մոտ—չփոթություն, դրության հետագա վատանալու հեռանկար։

Մեզ մոտ, ԽՍՀՄ-ում հավատ դեպի մեր ուժերը, դրության հետագա բարելավման հեռանկար։

ՎՈՐՏԵՂ ՓՆՏՌԵԼ ՄԵՐ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Մեր հաջողությունների պատճառները-նախ և առաջ պետք է փնտրել ԽՍՀՄ պետական սիստեմի, առավելությունների մեջ. մեր երկրի բանվորները և աշխատավորները տապալելով կապիտալիստների իշխանությունը, հիմնեցին իրենց իշխանությունը։

Հողը, ֆաբրիկաները և գործարանները խլեցինք կապիտալիստներից և հանձնեցինք բանվորներին և աշխատավոր գյուղացիներին։

Մեզ մոտ մեր տնտեսությունը պլանային կար-

գով է տարվում։ Այն ինչ կապիտալիստական յերկրներում անպլանային։ Նրանք իրար հետ մրցում են ավելի շահ ստանալու և աշխատավորներին շահագործելու համար։

Մեզ մոտ — խորհրդային տնտեսությունը, վոչ թե կապիտալիստների համար է, այլ մեր բանվորների և աշխատավորների նյութական կյանքի բարելավման համար։

Մեր ժողովրդական տնտեսության յեկամուտը վոչ թե գնում է կապիտալիստների գրպանը, այլ բանվորների և աշխատավորների կյանքի պայմանների լավացման և սոցիալիզմի կառուցման համար։

Մեզ մոտ բանվոր դասակարգն է հանդիսանում յերկրի տերն ու տնօրենը, իսկ կապիտալիստական յերկրներում մի խումբ ձրիակեր կապիտալիստներ։ Կապիտալիստական յերկրներում բանվորն աշխատում է կապիտալիստի համար, իսկ մեզ մոտ բանվորն աշխատում է իր սեփական դասակարգի համար։

Ահա թե վորտեղ պետք է փնտռել ընկեր Ստալինի ասածներն այն մասին թե ինչու, մեզ մոտ ԽՍՀՄ-ում տնտեսական վերելք է, իսկ կապիտալիստների մոտ տնտեսական քայքայում։

Կապիտալիստական աշխարհը ներկայումս ապրում է սուր ճգնաժամային դրություն, մի դրություն, վոր կապիտալիստներին տանում է դեպի կործանում։

Մեր յերկիրն աշխարհիս յերեսին մեկն է, վոր հաղթական կերպով առաջ է տանում սոցիալիզմի կառուցման հսկա գործը։

ՏՐԱԿՏՈՐՆ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ ՔԱՅՔԱՅՈՒՄ Է, ԻՍԿ ԽՍՀՄ-ՈՒՄ ՄԻԱՑՆՈՒՄ Է ՉՔԱՎՈՐ ՅԵՎ ՄԻՋԱԿ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(ՀԱՄ ԿԿ (բ) 16-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ ՏՎԱԾ ԸՆԿ. ՅԱԿՈՎԼԵՎԻ ԶԵԿՈՒՑՈՒՄԻՑ)

«1930 թվին Ամերիկայում կար մեկ միլիոն տրակտոր, իսկ մենք ունեյինք միայն 70 հազար։ Ամերիկայում 45 հազար կոմբայն, մեզ մոտ մեկ և կես հազար։ Ամերիկայում 800 հազար ապրանքատար ավտո, իսկ մերը մատերի վրա կարելի յե համարել, գյուղատնտեսության մեջ շատ քիչ ունենք այդպիսի ավտոներ»։

Այս թվերից կարելի յե յեզրակացնել այն, վոր Ամերիկայում ամեն ինչ լավ է, վոր նրանց գյուղատնտեսությունն ուժեղ թափով զարգանում է։ Առաջին հայացքից կարող է թվալ թե Ամերիկայի գյուղացին լավ դրության մեջ է և առանձին զրկանքներ չի կրում իր վրա։ Սակայն իրականության մեջ այդպես չէ։ Ամերիկայում գյուղացիության դրությունն անմխիթար է, նրա կյանքի նյութական պայմաններն որ օրի վրա վատանում են։

«Ամերիկայում ցանքերի տարածությունը համարյա չի աճում։ Գյուղատնտեսական մթերքների արտադրությունը համարյա չի ավելանում։ Մսի և հացի գործածությունը պակասում է։

Ֆերմերները (գյուղացիությունը) հարկվում են ծանր հարկերով։

1914 թ. մինչև 1928 թ. ֆերմերների վրա դրված հարկերը յերկու և կես անգամ ավելացել է։ Ֆերմերներից հարկ են վերցնում նրանց յեկամուտի մեկ յերրորդի չափից մինչև յերկու յերրորդը, մի

արք տեղերում գյուղացին 100 ռուբլի յեկամուտից 90 ռուբլին վճարում ե հարկ»։

Միանգամայն պարզ ե, վոր այս դրությունը քայքայում ե գյուղացիությանը, նրանք վերջի վերջո զրկվում են իրենց ունեցվածքից կուլ գնալով ավելի հարուստներին, թողնելով գյուղը գնում են քաղաք իրենց գոյությունը պահպանելու համար աշխատանք փնտռում։

Սրան լավագույն ապացույց կարող ե ծառայել այն, վոր 20 տարվա ընթացքում Ամերիկայի ֆերմերները 4 միլիոնով պակասել են։ Չորս տարվա ընթացքում 1000 ֆերմերական տնտեսությունից քայքայվել են 231 տնտեսություն։

ՎՈՐՈՆՔ ԵՆ ԱՅՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ՎՈՐ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ ԾԱՂԿԵԼՈՒ ՏԵՂ ՔԱՅՔԱՅՎՈՒՄ Ե ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Կապիտալիզմի որոք, գյուղացիության հիմնական մասը զուրկ ե հնարավորությունից ոգտվելու համար թե տրակտորներից և թե կոմբայներից։ Կալվածատերերը և կուլակները կարողանում են ձեռք բերել այդ մեքենաները, ավելի ուժեղ կերպով ճնշելու, քայքայելու համար աշխատավորական տնտեսություններին։

Ներկայումս վոր Ամերիկայում մեկ միլլիոնից ավելի տրակտոր կա, գյուղացիական տնտեսությունների չորս հինգերորդ մասը չեն ոգտվում դրանից։ Ուրեմն 100 տնտեսությունից միայն 20 տնտեսություն ե ոգտվում տրակտորներից և կոմբայներից, իսկ 80 տնտեսություն զրկված են այդ հնարավորությունից։ «Խոշոր տնտեսությունն Ամերիկայում ճանապարհ ե հարթում իր համար ֆերմերական հիմնական տնտեսությունները քայքայելով, ճնշելով և խեղդելով։

ԻՆՉՈՒ ՅԵ ՄԵԶ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԱԳ ԹԱՓԸ

Ահա ինչ ե պատասխանում ընկ. Ստալինը այս հարցին՝

«Ինդուստրիայի զարգացման արագ թափի հարցը, այսպես սուր կանգնած չեր լինի, ինչպես ներկայումս ե, յեթե մենք ունենայինք այնպես զարգացած արդյունաբերություն և տեխնիկա, ինչպիսին կա որինակ Գերմանիայում...։ Այդ պայմաններում մեր ինդուստրիան կարող եյինք զարգացնել ավելի պակաս թափով, չվախենալով կապիտալիստական յերկրներից հետ մնալուց և գիտենալով վոր մենք կարող ենք մի հարվածով անցնել նրանցից։ Բայց այն ժամանակ մեզ մոտ չեր լինի այն տեխնիկական-տնտեսական հետամնացությունը վորը կա ներկայումս։ Հենց դրանումն ե գործը, վոր մենք այդ ասպարեզում շատ հետ ենք մնացած Գերմանիայից...։

Ինդուստրիայի զարգացման արագ թափի հարցը այսպես սուր կանգնած չեր լինի այն դեպքում, յեթե մենք պրոլետարական դիկտատուրայի միակ յերկիրը չլինեյինք, այլ պրոլետարական դիկտատուրայի յերկրներից մեկը։ Յեթե մենք պրոլետարական դիկտատուրա ունենայինք վոչ միայն մեր յերկրում, այլ և մյուս առաջավոր յերկրներում, ասենք՝ Գերմանիայում և Ֆրանսիայում։ Այդ դեպքում կապիտալիստական շրջափակումը մեզ համար այն վտանգը չեր ներկայացնի, ինչպիսին ե հիմա։ Մեր յերկրի ինքնուրույնության հարցը կանգներ հետին ջաղքը։ Մենք կարող եյինք մտնել ավելի զարգա-

ցած պրոլետարական պետությունների շարքը, մենք կարող եյինք մեր արդյունաբերության ու գյուղատնտեսության համար ստանալ նրանցից մեքենաներ, մատակարարել նրանց հում նյութ և պարենավորման մթերքներ։ Ուրեմն, մենք կարող եյինք մեր ինդուստրիան զարգացնել ավելի պակաս արագ թափով։ Բայց դուք գիտեք, որ մենք այդ պայմանները դեռ չունենք, որ մենք դեռ պրոլետարական դիկտատուրայի միակ յերկիրն ենք հանդիսանում, շրջապատված կապիտալիստական յերկրներով, որոնք տեխնիկական—տնտեսական ասպարեզում մեզանից շատ բարձր են կանգնած»։

ՄԵԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Կուսակցությունը և Խորհրդային իշխանությունը հաստատեցին հնգամյա պլանը։ Այդ պլանն ընդգրկում ե 1929 թվից մինչև 1933 թ. ժամանակաշրջանի մեր մեծագույն աշխատանքները։

Յերբ մենք կազմում եյինք հնգամյա պլանը, շատերին ցնորք եր թվում։ Բացի արտասահմանյան կապիտալիստներից, որոնք կարծում եյին, որ Խորհրդային Իշխանության այդ պլանը կկործանվի, կային և մեր կուսակցության մեջ այնպիսի տարրեր, ոպորտունիստներ, որոնք նույնպես չեյին հավատում մեր հնգամյա պլանի ռեալ լինելուն։ Աջ ոպորտունիստների առաջնորդներ՝ Բուխարին, Տոմսկի, Ռիկով և այլն բարբաջում եյին հնգամյա պլանի անիրագործելի լինելու մասին։

Կյանքը շուտով ջախջախիչ հարված հասցրեց

բոլոր այն զառանցանքներին, որոնք մեր կործանման մահերգն եյին յերգում։

Կուսակցությունը լենինիզմի դրոշի ներքո, Լենինի հմուտ աշակերտ ընկեր Ստալինի առաջնորդությամբ առաջ տանելով սոցիալիզմի կառուցման հաղթական պլանի իրագործման քաղաքականությունը ձեռք բերինք մեծագույն հաջողություններ։

Սկսվեց հարվածային աշխատանք զավոդներում, ֆաբրիկաներում, հանքերում, շախտաներում և կոլխոզներում։ Սոց-մրցումն ու հարվածայնությունը դարձան բանվորական լայն մասսաների սեփականությունը, նրանց աշխատանքի լավագույն մեթոդը։

Հնգամյակի յերկրորդ տարում բանվորները հայտարարեցին, որ-հնգամյակը կկատարենք չորս տարում, և դա լոկ խոսք չեր, այլ ռեալ գործ։

Բագվի վիշկաների հերոսները առանձին կատարեցին նավթի հնգամյա պլանը յերկու և կես տարում։

Նույն հաղթանակին հասան և Մոսկվայի ելեքտրազավոդը։

Խորհրդային Միության բանվոր դասակարգի և աշխատավոր մասսաների ստեղծագործ աշխատանքի շնորհիվ մենք հնգամյակը կատարում ենք չորս, իսկ մի շարք գործարաններում 3 և $2\frac{1}{2}$ տարում։

Այսպիսով մենք 1931 թ. հնգամյակի 3-րդ վճռական տարում հաղթականորեն ավարտեցինք սոցիալիզմի հիմքի կառուցման պատմական աշխատանքը։

Մենք թևակոխել ենք սոցիալիզմի շրջանը։

Իրագործվում են աշխատավորների լավագույն առաջնորդներ՝ Մարքսի, Ենգելսի և Լենինի ավանդները։

Մենք մեր տնտեսությունը կառուցում ենք առանց կապիտալիստների, առանց մասնավորների, սոցիալիստական հիմունքներով։

Մենք համարյա առևտրական ասպարեզից դուրս ենք քշել մասնավորին։

Մենք հնգամյակի 3-րդ վճռական տարում մեծ հաղթանակներ ձեռք բերինք գյուղի կոլեկտիվացման ասպարեզում։ 1931 թ. վերջերին արդեն գյուղի աշխատավորական տնտեսությունները 60 տոկոսով ընդգրկվեցին կոլխոզների մեջ։

Հայաստանում 1931 թ, աշնանն արդեն կոլխոզնիկների տոկոսը հասնում է 40-ի։

Հայաստանի բամբակացան շրջաններում, ինչպիսին է Ղուրդուղուլին հիմնականում ավարտեց կոլեկտիվացումը։ Հայկոմկուսի Կենտկոմի դիրեկտիվի հիման վրա Հայաստանում կոլեկտիվացումը պետք է ավարտվի 1932-33 թվին։

«Համատարածի հիման վրա մենք վերացնում ենք կուլակությունը վորպես դասակարգ։ Մենք արմատախիլ ենք անում կապիտալիզմի վերջին մնացորդները»։

Այդպիսով արդեն ապահովված է սոցիալիզմի հաղթանակը մեր յերկրում։

ԻՆՉ ԵՆՔ ԿԱՌՈՒՑՈՒՄ ՄԵՆՔ

1931 թիվը Խորհրդային Միության մեջ սոցիալիզմի հիմքերի կառուցումն ավարտելու տարին եր։ Հնգամյակի այդ վճռական տարում գործի գցվեցին միայն 518 նոր ֆաբրիկաներ, գավոդներ և շախտեր։

Այդ նույն վճռական տարում 1040 մեքենա—տրակտորային կայաններ կառուցվեցին, վորը հնի հետ միասին հավասար է 1400-ի, վորից Հայաստանում 5 մեքենատրակտորային կայան։

Մետաղը, նավթը, քարածուխը և ելեքտրականությունը հնգամյակի սյուներն են, նրա հիմքը։

Հնգամյակի վերջին մեր չուգունի ձուլումը հավասար է լինելու 17 միլլիոն տոննի մեկ տարում։

Ուրալի Մագնիտոգորսկի գործարանը տարեկան տալու յե 2 ու կես միլ. տոնն չուգուն։ (Տոննը հավասար է մոտ 62-փթի)։ Այդ հսկա գործարանը պատրաստ կլինի 1933 թվին։

Կուզնեցկի գործարանը Սիբիրում և Զապորոժսկին Ուկրայինայում պետք է տան մեկական միլլիոն տոնն չուգուն։ Ուրալի Նովոտագելսկի գործարանը տարեկան տալու յե 2 ու կես միլլիոն տոնն չուգուն։

Մինչև հիմա չուգունի արտադրությունը մեր նեղ տեղերից մեկն է յեղել։ Մենք մեծ դժվարություններ ենք ապրել այդ ասպարեզում։ Այդ նոր կառուցված և կառուցվելիք հսկա գործարանները մեր յերկիրը կդարձնի առաջինն ամբողջ աշխարհում, չուգունի արտադրության գործում։

Մեր գյուղատնտեսության զարգացման համար հսկայական նշանակություն ունեցող գործարանն է Ռոստովի գյուղատնտեսական մեքենաշինարարական գործարանը։ Այդ գործարանը տարեկան տալու յե 114 հազար հնձող մեքենա, 20 հազար ցանող, 220 հազար գութան, 50 հազար գյուղական ֆուրգոն։ 1932 թվին գործարանը տալու յե 115 միլ. ռուբլու մեքենաներ։

Ստալինգրադում արդեն կառուցված է տրակտոր արտադրող գործարան, վորն այժմ օրական տալիս է 110-ից ավելի տրակտոր։

1931 թվի սեպտեմբեր ամսին գործի գցվեց Խարկովի տրակտորի գործարանը, վորը պետք է յերկրին տարեկան 40 հազար տրակտոր տա։ Նույնանման գործարան է շինվում և Չելյաբինսկում։ Սարատովում կառուցվող հսկա կոմբայնի գործարանը, վորը պետք է պատրաստ լինի 1932 թ. մայիսին տարեկան տալու յե 15 հազար կոմբայն, հետագայում 20 հազար։ Նույնանման կոմբայնի գործարան կառուցվում է Նովոսիբիրսկում։

Նիժնի Տագելայում, Ուրալում կառուցվում են նոր վագոնաշինարարական գործարաններ, վորոնց տարեկան արտադրությունը 2 անգամ ավելի յե լինելու, քան նույն տեսակի Ամերիկայի ամենախոշոր գործարանի արտադրությունը։ Գործարանը տարեկան արտադրելու յե 55 հազար ապրանքատար վագոններ։

Նիժնի Նովգորոդում կառուցվող ավտոմոբիլի գործարանը տարեկան 140 հազար ավտոմոբիլ է տալու։ 1931 թ. սեպտեմբերին Մոսկվայում գործի գցվեց նոր վերաշինված Ամո ավտոմոբիլի գործարանը վորն արտադրում է խորհրդային ավտոմոբիլ։

Խորհրդային Միությունը վառելանյութի տեսակետից տարեց տարի ավելի յե հզորանում։ Հնգամյակի վերջին տարում մենք արտադրելու յենք 46 միլ. տոնն նավթ, 145 միլ. տոնն քարածուխ։ Շնորհիվ Բաքվի վիշկաների հերոսների, նավթի աս-

պարիզում հնգամյակը կատարեցինք յերկու և կես տարում։

Անդրկովկասը Խորհրդային մեծ Միության հետ համընթաց զարգանալով դառնալու յե արդյունաբերական և տեխնիկական մշակույթների հարուստ վայր։

Կուսակցության լենինյան ազգային քաղաքականության կիրառման շնորհիվ, Անդրկովկասի ինդուստրացման ասպարիզում ձեռք ենք բերել աննախընթաց նվաճումներ։

Վերջին տարիների ընթացքում Անդրկովկասի բոլոր հանրապետություններում ինդուստրացման ասպարիզում ձեռք է բերվել նշանակալից հաջողություններ, ինչպես շինարարության թափի, այնպես ել վորակի բնագավառում։

Անդրկովկասի ինդուստրացման հետագա թափի համար խոշոր նշանակություն ունեն Բաքվի նավթը, գունավոր մետաղների մշակույթը (1-ին հերթին պղինձ, քարածուխ), յեվ այլ հարստությունների մշակույթը, վորի համար Համ. Կոմկուսը դիրեկտիվ է տալիս Անդրկովկասի կուսկազմակերպություններին ամբողջ ուժերով լծվել Անդրկովկասի ինդուստրացման աշխատանքներին։

Անդրկովկասը 2-րդ հնգամյակում դառնալու յե բամբակի մշակման յերկրորդ բազան ԽՍՀ-Միությունում։

Տեխնիկական մշակույթների մշակումն Անդրկովկասում ունի Համամիութենական նշանակություն։

Բամբակը, թեյը, ծխախոտը հիմնական մըշա-

կուլթներն են, որի հետագա լայնացման ու որակի բարձրացման մասին Համ. Կոմ. Կուսի Կենտրոնական կոմիտեն Անդրյերկոմի և հանրապետական կենտկոմների ուշադրությունն է հրավիրում բոլշևիկյան թափերով լծվելու այդ հսկա գործի կենսագործմանը։

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՖԵԴԵՐԱՏԻՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱԽՖՍՀ ՏԵՐԻՏՈՐԻԱՆ ՈՒ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

Անդրկովկասյան Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետությունը գտնվում է Կովկասյան պարանոցի վրա Կասպից ու Սև ծովերի միջև և բռնում է 185 հազար 191 քառակուսի կիլոմետր տարածություն։ Հարավից նրան սահմանակից են Պարսկաստանն ու Թյուրքիան։ Հյուսիսից գլխավոր Կովկասյան լեռնաշղթան Անդրկովկասն անջատում է Հյուսիսային Կովկասյան յերկրից։

ԱԽՖՍՀ մեջ մտնում են յերեք ազատ հանրապետություն.—

Ադրբեջանյան ԽՍՀ, որի կազմի մեջ մտնում է Նախիջևանի ԽՍՀ և Լեռնային Ղարաբաղի ավտոնոմ մարզը. Ադրբեջանի ընդհանուր տերիտորիան է 65 հազար 968 քառակուսի կիլոմետր և ունի 2 և կես միլիոն բնակիչ։

Վրաստանի ԽՍՀ՝ Աջարիստանի և Աբխազիայի ավտոնոմ ԽՍՀ և Հարավ Օսեթիայի ավտոնոմ մարզով, ընդհանուր տարածությունն է 69 հազար 259 քառակուսի կիլոմետր և ունի համարյա 3 միլիոն բնակչություն։

Հայաստանի ԽՍՀ, որի տարածությունն է 29 հազար 964 քառակուսի կիլոմետր և ունի 1 միլիոն բնակչություն։

Անդրֆեդերացիայում կան մի քանի տասնյակ ազգություններ։ Բնակչության ընդհանուր թիվը մոտ 6 միլիոն է, որից վրացիներ՝ մոտ 2 միլիոն, թուրքեր՝ մեկ ու կես միլիոնից ավելի, հայեր՝ մոտ մեկ ու կես միլիոն, ռուսներ՝ մոտ կես միլիոն, օսեր՝ հարյուր հազարից ավելի, թալիշներ ու աջարացիներ՝ յոթանասնական հազարից ավելի, հույներ ու աբխազցիներ՝ համարյա վաթսուն հազարական, քրդեր՝ հիսուն հազարից ավելի, լեզգիներ՝ քառասուն հազար։

Վիթխարի յեն Անդրկովկասի բնական հարստությունները։ Դրանցից հիմնականն են.—

Բաքվի նավթը, որն ունի համաշխարհային նշանակություն և կազմում է համաշխարհային պաշարի մի յոթերորդ մասը։ Ճիաթուրի մարգանեցը, որն իր որակով և պաշարի քանակով առաջինն է աշխարհում, Տկվարչելի ու Տկիբուլի քարածուխը Վրաստանում, Դաշքյասանի ու Ջիտախի յերկաթահանքերն Ադրբեջանում, Ալլահվերդու և Զանգեզուրի պղնձահանքերը Հայաստանում և Գետաբեկի պղնձահանքերն Ադրբեջանում։

Բացի դրանից, մի շարք ռայոններում արտադրվում է քարաղ (Նախիջևանի ԽՍՀ), շիբ, կապար (արճիճ), ծծումբ և մանավանդ շինանյութեր՝ պեմզա, մարմարիոն, տուֆ, գիպս և այլն:

ԱԽՍՀ ժողովրդատնտեսության մեջ հացահատիկային մշակույթն ավելի ու ավելի մեծ չափով փոխարինվում է բարձրարժեք տեխնիկական մշակույթներով՝ բամբակ, կունջութ, թեյ, ծխախոտ, ռամի, սոյա: Բացի դրանից, տափաստաններում ու նախալեռնային շերտում զարգացած է այգեգործությունն ու բանջարաբուծությունը: Լեռնային շերտում զարգացած է նաև անասնապահությունը:

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՆ ԱՆՑՅԱԼՈՒՄ ՌՈՒՍԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԳԱՂՈՒԹՆ ԵՐ

Ռուսական կապիտալիզմը, շուկաներ և դեպի այդ շուկաները ճանապարհներ վորոնելով, աստիճանաբար նվաճում եր ծայրագավառների կուլտուրապես հետամնաց ժողովուրդներին: XIX դարի սկզբում Ռուսաստանին զենքի ուժով միացվեց նաև Անդրկովկասը: Հավատարիմ ազգային ճնշման ու ծայրագավառների գաղութային շահագործման իրենց քաղաքականության, ռուսական կալվածատերերն ու բուրժուազիան Անդրկովկասը դարձրին իրենց գաղութը:

Անդրկովկասում կապիտալիզմի առաջացումով, յերկաթուղու անցկացումով, լեռնային-արդյունահանման արդյունաբերության զարգացումով և մանավանդ նավթային արդյունաբերության խիստ զարգացումով աճում եր բանվոր դասակարգը, ուժեղանում եր հեղափոխական պայքարը: Սակայն ազգայնական-բուրժուական կուսակցությունները պառակտում և թուլացնում եյին դասակարգային պայքարի ինտերնացիոնալ միասնական կառույցը, պայքար, վոր մղվում եր բուրժուազիայի ու ցարական միապետության դեմ:

Ցարիզմը վոչ միայն հասկանում եր այդ կուսակցությունների դավաճանական դերը—դաշնակներինը՝ Հայաստանում, մուսավաթինը՝ Ադրբեջանում և վրացական մենշևիկներինը,—այլև նրանց դարձնում եր ազգամիջյան թշնամության համարյա գիտակից զենք:

Հայ-թուրքական կոտորածի պրովակացիայով ցարիզմը մեծ արդելակ հանդիսացավ 1905 թվի հեղափոխական շարժմանը:

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԸ ՄԵՆՇԵՎԻԿՆԵՐԻ, ԴԱՇՆԱԿՆԵՐԻ ՈՒ ՄՈՒՍԱՎԱԹՆԵՐԻ ՈՐՈՔ

Հոկտեմբերյան հեղափոխությունը սարսափի մեջ ձգեց Անդրկովկասի բուրժուազիային: Բուրժուազիան սկսեց շտապ կազմակերպել իր ուժերը հետ մղելու համար հեղափոխական

հարձակումը: Անդրկովկասյան կալվածատերերն ու բուրժուազիան համախմբվեցին հակահեղափոխական արշավի, ընդդեմ բանվորների ու գյուղացիների:

1918 թվի մարտի 9-ին ստեղծվում է Անդրկովկասի սեյմը, վորը հռչակում է Անդրկովկասը Ռուսաստանից անկախ: Մենշևիկները, դաշնակներն ու մուսավաթիստները ժամանակավորապես համաձայնության յեկան պահպանելու համար «կարգը» և իրենց տերերի սեփականությունը: Բայց նրանց այդ դաշինքը կայուն ու յերկարատև չեր. կուսակցություններից ամեն մեկն առանձին գաղտնի պատրաստվում եր պայքարելու իր «դաշնակիցների» դեմ: Մուսավաթը հենվում եր սուլթանական Թյուրքիայի վրա՝ ամրացնելու համար իր դերն Անդրկովկասում, վրացական մենշևիկները կողմնորոշվում եյին գերմանական սվիններով, ստեղծելու համար «ազատ Վրաստան», իսկ դաշնակները յերազում եյին անգլիական իմպերիալիստների ոգնության մասին:

Չնայած այդ կուսակցությունների միջև յեղած բազմաթիվ հակասություններին, նրանք միահամուռ եյին բոլշևիկների դեմ պայքարում: Անդրկովկասյան սեյմը կազմակերպեց Կովկասյան ճակատից վերադարձող հեղափոխականորեն տրամադրված զորամասերի զինաթափումը: Նա Թիֆլիսից դեպի Գյանջա բաց թողեց թյուրքական մասերին՝ պայքարելու համար Բաքվի Կոմունայի դեմ:

Բաքվի պրոլետարիատը 1918 թվի սկզբին հաստատելով Խորհրդային իշխանություն Բաքվում, այն ժամանակ անհավասար պայքար եր մղում Անդրկովկասյան հակահեղափոխության ու միջազգային իմպերիալիզմի դեմ:

Անջատելով իրենց յերկրամասերը, մենշևիկները, դաշնակներն ու մուսավաթիստներն սկսեցին հաստատել բուրժուական «դեմոկրատիա»: Աշխատավոր մասսաների ուշադրությունը հեղափոխական շարժումից շեղելու համար նորից հրահրվեց ազգային թշնամությունը:

Հայաստանում դաշնակ-մաուզերիստների դիկտատուրան վոչնչացրեց ու քայքայեց ամբողջ գյուղեր ու ռայոններ: Քայքայված ու աղքատացած յերկիրը ներքաշվեց ռազմական ավանտյուրաների մեջ: Պատերազմ քեմալական Թյուրքիայի դեմ, մենշևիկյան Վրաստանի դեմ, մուսավաթիստական Ադրբեջանի դեմ—ահա դաշնակների քաղաքականության արդյունքը: Ադրբեջանյան մուսավաթիստները հետ չեյին մնում դաշնակներից, պատասխանելով նույնպիսի արյունալի ռեպրեսիաներով հայկական բնակչության նկատմամբ:

Վրացական մենշևիկները բռնի խմառով ամայացրին Հարավային Ոսեթիան, վտարելով ամբողջ բնակչությանը 1919 թվի ձմրանը Վրաստանի սահմաններից դուրս: Նույն վիճակին յենթարկվեց նաև Աջարստանը:

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԸ ԴԱՐՁԱՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ

Այդ հակահեղափոխական կուսակցությունների գործունեությունը ժամանակավորապես բաժան-բաժան արեց բանվորների և աշխատավոր գյուղացիների ուժերը և չեզոքացրեց նրանց Ռուսաստանի հաղթական պրոլետարիատից: Բայց Անդրկովկասյան բուրժուազիայի քաղաքականությունը, վորը չէր համապատասխանում բանվորների ու գյուղացիների շահերին, հանդիպում եր մասսաների ավելի ու ավելի մեծ դիմադրության:

Յերբ ջախջախվեց Դենիկինը և Կարմիր բանակի զորամասերը մոտեցան Անդրկովկասի սահմաններին, Բաքվի պրոլետարիատը Կոմկուսակցության ղեկավարությամբ կրկին բարձրացնում է ապստամբության դրոշը 11-րդ բանակի օգնությամբ, տապալելով մուսավաթիստների լուծը, 1920 թվի ապրիլի 28-ին հայտարարում է Խորհրդային իշխանություն:

Ադրբեջանից հետո ապստամբում են Հայաստանի աշխատավորները և 1920 թվի նոյեմբերի 29-ին հաստատում են պրոլետարական դիկտատուրա: Իսկ 1921 թվի փետրվարին Վրաստանի բանվորներն ու գյուղացիները տապալում են մենշևիկյան իշխանությունը:

Անդրկովկասյան Ֆեդերացիա ստեղծելու մասին լենինյան միտքն իսկույն ընդունեց Բաքվի պրոլետարիատը, վորի նախաձեռնությամբ այդ հարցը լայն քննության են առնում բանվոր-գյուղացիական մասսաները:

Ջնայած վրացական ազգային-ուկլոնիստների հակազդեցության և Անդրֆեդերացիա ստեղծելու դեմ մղած պայքարին, Անդրկովկասի աշխատավորների ինտերնացիոնալ համախմբման ու միասնության գաղափարը 1922 թվի մարտի 12-ին իրագործվում է:

Անդրկովկասյան Ֆեդերացիայի հիմնական խնդիրներն եյին՝ Անդրկովկասում ամրացնել պրոլետարիատի դիկտատուրան ապահովելու համար սոցիալիզմի շինարարությունը, հետագայում ամրացնել Անդրկովկասի ժողովուրդների ազգամիջյան խաղաղությունն ու յեղբայրական բարեկամությունը, ստեղծելու համար ընդհանուր բազա ժողովրդական տնտեսության վերականգնման ու նրա սոցիալիստական վերակառուցման համար:

ԿՐԱԿ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԹՇՆԱՄԻՆԵՐԻ ԴԵՄ

Սոցիալիզմի կառուցման վիթխարի խնդիրների կատարումը, պրոլետարիատի դիկտատուրայի ամրացումը, ԱԽՖՍՀ-ի ազգամիջյան խաղաղության ե՛լ ավելի ամրացումը, յեղբայրական ինտերնացիոնալ համախմբվածության հետագա ամրացումն ամբողջ Խորհրդային Միության աշխատավորների հետ

կարելի յե լուծել՝ միայն հաստատուն կերպով և անաղարտ ձեվով կիրառելով կուսակցության 16-րդ համագումարի վորոշումները և վճռական պայքար մղելով 2 ճակատի վրա, կուսակցության գլխավոր գծի համար:

Անխնա պայքար գլխավոր վտանգի, կուսակցության մեջ աջ կուլակային ագենտուրայի դեմ. վճռական բոլշևիկյան հակահարված տրոցկիստական «ձախ» օպորտունիստներին: Անխնա մերկացում կուսակցության աջ և «ձախ» անսկզբունք, յերկերեսանի դավաճաններին: Դաժան պայքար մեծապետական շովինիզմի, վորպես գլխավոր վտանգի և տեղական նացիոնալիզմի դեմ, կուսակցության գլխավոր գծից կատարած թեքումների նկատմամբ հաշտվողականության դեմ,— այս բոլորը հիմնական պայմաններ են հանդիսանում հաղթահարելու համար սոցիալիստական շինարարության դժվարությունները և յերկրում վերացնելու համար կուլակային կապիտալիստական տարրերը:

Պայքարը ջախջախիչ պետք է լինի վրացական մենշևիկների, դաշնակների ու մուսավաթիստների մնացորդների դեմ, վորոնք ներկայումս, յերբ նրանց առաջնորդները վտարված են Անդրկովկասի սահմաններից դուրս, ամենաակտիվ ագենտներն են հանդիսանում միջազգային իմպերիալիզմի ԽՍՀՄ դեմ ինտերվենցիա պատրաստելու գործում, վորոնք կուլակության դաշնակիցներն են հանդիսանում Անդրկովկասում սոցիալիստական շինարարության դեմ մղած պայքարում:

Խ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՆԴՈՒՍՏՐԱՑՄԱՆ ՅՈՒՅԱՆԻՇՆԵՐԸ, ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԻ ԼԵՆԻՆՅԱՆ ԼՈՒԾՄԱՆ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՅՈՒՅԱՆԻՇՆ Ե

Խ. Հայաստանում տնտեսական շինարարության բնագավառում ձեռք են բերել մեծագույն նվաճումներ: Հ. Կոմկուսի ղեկավարությամբ դաշնակներից ստացած քայքայված, ավերված յերկրում այսոր կառուցվում է սոցիալիզմի հոյակապ շենքը:

ՀՍԽՀ

ՄԵՐ ՆՎԱՃՈՒՄՆԵՐՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

Իշխանությունը գրավելով՝ Կոմկուսակցության ղեկավարությամբ Հայաստանի պրոլետարիատը ձեռնարկեց դաշնակցական վոհմակները վոչնչացնելու, յերկրի ներսում զարգացման խաղաղ պայմաններ ստեղծելու, ազգամիջյան թշնամանքին վերջ տալու աշխատանքներին, զուգընթացաբար կիրառելով մի շարք կարևորագույն տնտեսական միջոցառումներ: Ամբողջ հողն

ազգայնացվեց և տրվեց աշխատավոր գյուղացիության ոգտագործելու, խլվեցին վանքապատկան և այլ կալվածքները, պետականացվեցին յեղած արդյունաբերական ձեռնարկությունները:

Հայաստանի Խորհրդային իշխանությունը, շնորհիվ Կոմունիստական կուսակցության լենինյան ղեկավարության, շնորհիվ Անդրֆեդերացիայի և ԽՍՀՄ յեղբայրական հզոր և սիստեմատիկ ոժանդակության, կարողացավ կարճ ժամանակամիջոցում վերականգնել յերկրի ծայր աստիճան քայքայված տնտեսությունը, հաղթահարել իր առաջ ծառացած դժվարությունները, հող պատրաստելով յերկրի սոցիալիստական վերակառուցման, կապիտալիստական տարրերի լիկվիդացիայի նախապատրաստման համար:

Շնորհիվ Կոմկուսի լենինյան քաղաքականության, մենք կարողացանք մինչև 27–28 թիվն ստեղծել արդյունաբերություն, վորի պրոդուկցիան 14,4 տոկոսով գերազանցում է նախապատերազմյան շրջանի արդյունաբերությանը:

Ահա խորհրդայնացումից հետո մեր արդյունաբերության վերականգնման դինամիկան ցույց տվող թվերը (1913 և 19—20 թվերի համեմատությամբ).

Թվականը	Ընդհ. պրոդուկցիան 26–27 թ. անփոփոխ գներով.	Տոկոսները 1913 թվի համեմատ.	Ծանոթություն
1913	20.724.000	100	
1919—20	2.072.400	8,10	Այստեղ չի մտնում
1923—24	4.519.000	21,8	էլեկտրիֆիկացիան
1924—25	10.889.000	52,5	
1927—28	23.712.000	114,4	
1929—30	49.147.000	237,1	
1931 թ. (10 ամիս)	97.313.000		

1931 թվին, 1930 թվի համեմատությամբ 88,2 տոկոս մաքուր աճ, տարեկան պլանով նախատեսված է յեղել 102·004·000 ռ.: 1932 թ. նախատեսվում է 324·000 ռ. կամ, 31 թ. նկատմամբ աճում 198,7 տոկոսով:

Բերված աղյուսակը ցույց է տալիս արդյունաբերության այնպիսի զարգացում, վորպիսին վոչ մի կապիտալիստական յերկիր չի տեսել և յերբևիցե չի կարող տեսնել:

ԵԼԵԿՏՐՈՖԻԿԱՑԻԱ

Կատարելով Լենինի պատգամը՝ Խորհրդային իշխանությունը հսկայական թափով ծավալեց յերկրի ելեկտրիֆիկացիան: Մի քանի տարի յե, ինչ գործում է Յերևանի հիդրոկայա-

նը 4560 կիլվ. կարողությամբ, Լենինականինը՝ 5280 կիլվ. և Ալավերդու, Ղափանի հիդրոկայանները, իսկ նոյեմբերի 29-ին, Հայաստանի խորհրդայնացման տարեդարձին՝ գործել է սկսում Ձորագեսը՝ 22·000 կիլվ. կարողությամբ: Շինվում են ավելի խոշոր հսկաներ (Քանաքեռգեսը և այլն):

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Դաշնակների տիրապետության հետևանքով, ցանքի տարածությունը նախապատերազմյան 343·700 հեկտարի փոխարեն 1919 թ. իջել եր 82·700 հեկտարի (նախապատերազմյան շրջանի 24,1 տոկոսը), իսկ տեխնիկական կուլտուրաներ գրեթե բոլորովին չեյին ցանվում: Այս վերջին կուլտուրաների ցանքադաշտերի տարածությունից, վոր նախապատերազմյան շրջանում կազմում եր 20·500 հեկտար, մնացել եր 600 հեկտար, իսկ բամբակացանությունն իսպառ վերացել եր: Յեղած պրիմիտիվ գյուղատնտեսական ինվենտարը, գաղթերի պատճառով, համարյա կատարյալ վոչնչացման եր յենթարկվել:

Նույնպիսի անմխիթար վիճակում եր նաև անասնապահությունը: Նախապատերազմյան շրջանի 983·000 գլուխ խոշոր յեղջյուրավոր անասունի փոխարեն 1919 թ. մնացել եր 229·000 գլուխ կամ՝ 25 տոկոսը, իսկ մանր յեղջյուրավոր 1·564·000 անասունի փոխարեն՝ 470·000 գլուխ կամ՝ 30 տոկոսը:

Ահա այն ամբողջ ժառանգությունը, վոր ստացավ խորհրդային իշխանությունը դաշնակներից՝ 1920 թվին:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ

Յերկրի ինդուստրացման և գյուղատնտեսության մեքենայացման բազայի վրա մեր կուսակցությունը ձեռնարկել է գյուղի սոցիալիստական վերակառուցման գործին:

1928 թվին կոլտնտեսություններում ընդգրկված եր մեր յերկրի բոլոր գյուղացիական տնտեսությունների 0,7 տոկոսը 51 կոլտնտեսությունում: 1929 թ. մենք ունեյինք 181 կոլտնտեսություն 4593 գյուղացիական տնտեսությամբ, վորը կազմում եր ամբողջ գյուղական տնտեսությունների 25 տոկոսը: 1930 թ. մայիսին, «ձախ» շեղումների վերացումից հետո, կոլտնտեսություններում ընդգրկված եր աշխատավոր գյուղացիության 12,5 տոկոսը:

Հայաստանի խորհրդայնացման 11-րդ տարեդարձին մեզ մոտ կոլեկտիվացված եր ամբողջ գյուղացիական տնտեսությունների 40 տոկոսը, իսկ բամբակացան շրջաններում ունենք կոլեկտիվացման ավելի բարձր տոկոս, վոր միանգամայն ապահովում է այդ շրջանների համատարած կոլեկտիվացումը 1932 թվին: Կոլխոզնիկը դարձել է մեր գյուղատնտեսության կենտ-

բռնական դեմքը և խորհրդային իշխանության ամուր հենարանը գյուղում։

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Վարձու բանվորական ուժի քանակը մեր ժողտնտեսության մեջ աճել է հետեվյալ կերպ.—

1923 թ.—14·804 հոգի։

1931 թ.—78·100 հոգի։

Իսկ 1932 թվին ունենալու յենք 110·800 աշխատող։

Հսկայական չափով աճել է կանանց թիվն արդյունաբերության մեջ։ 1923 թ. 3·200 բանվորուհիների փոխարեն՝ մենք 1930 թվին ունեյինք 9·790 բանվորուհի։

Այս 11 տարվա ընթացքում անշեղ կերպով բարձրացել է բանվորների և ծառայողների աշխատավարձը։ Միաժամանակ հսկայական չափերով աճել են բանվորների կենցաղի բարելավման և բնակարանային շինարարության ծախսերը։ 1930 թ. սոցապի և կենցաղի բարելավման գծով ծախսվել է 6·260·000 ռուբլի, 1931 թ. 9·882·000 ռուբլի, իսկ 1932 թ. ծախսվելու յե մոտ 17·000·000 ռուբլի։

Աճում է բանվորական բնակարանների կառուցումը։ Բնակշինարարության վրա 1930 թ. ծախսված է 5·504·000 ռ., 1931 թ.՝ 7·750·000 ռ. իսկ յեկող տարի ծախսվելու յե առնվազն 20·600·000 ռուբլի։

ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

30 թվին մենք ունեցել ենք 46 զանազան տիպի տեխնիկում՝ 5000 ուսանողությամբ. այս տարի ունենք մոտ 53 տեխնիկում՝ մոտ 6000 ուսանողությամբ։ 30 թվի 6 բանֆակի փոխարեն 31 թվին մենք ունենք 8 բանֆակ, 1400 ուսանողով։ 30 թվի 8 բարձրագույն դպրոցների դիմաց մենք այս տարի ունենք 10 բարձրագույն դպրոց 3000–3200 ուսանողությամբ։

Կուսակցության գծի ճիշտ կիրառման հիման վրա, ամրացնելով կոլտնտեսությունները, անխնա պայքար մղելով կոլեկտիվացման բնագավառում կատարվող կուս. գծի խեղաթյուրումների դեմ, մենք կապահովենք համատարած կոլեկտիվացումը և նրա հիման վրա կուլակության լիկվիդացիան ու ամբողջապես կվերակառուցենք մեր գյուղը սոցիալիստական հիմունքներով, վերացնելով գյուղի և քաղաքի տարբերությունը։

ԴՆԵՊՐՈՍՏՐՈՅ

Դնեպրի ափին գտնվում է մի փոքրիկ ու հանգիստ քաղաք Կիչկաս անունով։ Մի անգամ վաղ առավոտյան աշխուժացավ Կիչկասը։ Բանվորներ յեկան։

Դնեպրի ափին սկսվեց շինարարական տենդը։ Յերկաթ, պողպատ, ցեմենտ և այլ շինանյութեր բերում, այստեղ են հավաքում համարյա ամբողջ յերկրից։

Անց են կացնում նոր յերկաթուղային գծեր։ Կառուցում են կամուրջներ։ Խորհրդային ամբողջ Միությունից համարյա 20 հազար բանվոր զբաղված են այստեղ չտեսնված շինարարությամբ։

Դնեպրի վրա կառուցվում է ելեկտրական կայան, Յեվրոպայի ամենից ուժեղ կայանը, ջրային ելեկտրոկայաններից ամենից ուժեղներից մեկն է ամբողջ աշխարհում։

***

Բանվորները պատռում են ափերը։ Լռությունը հաճախ խախտում են սոսկալի պայթյունները։ Խլացուցիչ վորոտով, ծխով պատած, փլչում են վիթխարի ժայռերը։

Խորհրդային Իշխանությունն ստիպեց Դնեպրին աշխատել Մարդու համար, սոցիալիզմի համար։

Հաշվում են, վոր այդ կլինի մոտ 800 հազար ձիու ուժ։ Այդ ուժն է հենց, վոր շարժելու յե մեքենաներ, տալու յե ելեկտրականություն։

Դնեպրոստրոյը նոր սոցիալիստական հիմունքներով կվերակառուցի խորհրդային հարավի ամբողջ ժողովրդական տնտեսությունը։

Կայանի կառուցումը կավարտվի 1932 թվի մայիսի 1–ին։

Դնեպրոստրոյի շուրջը կաճեն վիթխարի գործարաններ։ Նրանք կաշխատեն Դնեպրովյան կայանի աժան ելեկտրական ուժով։ Մի գործարան կտա տարեկան 1 միլիոն տոնն չուգուն, մյուսը՝ 100 հազար տոնն պողպատ, յերրորդը՝ 15 հազար տոնն ալյումին։

Կկառուցվի գործարան, վորը կտա տարեկան հարյուր հազարավոր տոնն պարարտանյութ։ Ցեմենտի գործարանը կտա տարեկան 2 և կես միլիոն տակառ ցեմենտ։

ՎԵՐԱԿԱՌՈՒՑԵԼ ՏՐԱՆՍՊՈՐՏԸ

Տրանսպորտը կարիք է զգում վճռական վերակառուցման։ Հարկավոր են նոր ուժեղ շոգեշարժեր, ջերմաշարժեր, ելեկտրական գնացքներ։ Ամեն տեղ, ուր հնարավոր է, ձեռքի աշխատանքը պետք է փոխարինել մեքենաներով. մտցնել մեքենայական բարձում ու բեռնաթափում, վագոնների կցում։

Տրանսպորտի վերակառուցման մասին այդպիսի վորոշում ընդունել է Համկոմկուսի (բ) Կենտրոնական Կոմիտեյի հունիսյան պլենումը:

Պլենումը վորոշել է մինչև 1933 թվին էլեկտրական քարշի փոխել 3 հազար 690 կիլոմետր յերկաթուղագիծ:

1931 թվին տրանսպորտը կստանա հազար 38 նոր շոգեշարժ, 47 հազար 400 բեռնատար վագոն, հազար 467 մարդատար վագոն, 597 հազար տոնն ռելս և 22 միլիոն շպալ:

ՀՆԳԱՄՅԱԿԸ ՅԵՐԵՔ ՏԱՐՈՒՄ

Հնգամյակի առաջին յերկու տարում մեր պլանները կատարեցինք գերակատարումով: Այդ ապացույց է նրան, վոր իրոք մենք հնգամյակը կկատարենք չորս տարում, իսկ հիմնական արդյունաբերական ճյուղերում յերեք և 2 կես տարում:

Նավթի արդյունաբերության մեջ հնգամյակը մենք կատարեցինք յերկու և կես տարում:

Հնգամյակի նախատեսումով 1933 թվին պետք է արտադրեյինք 2 միլիարդ ռուբլու մեքենաներ, այնինչ՝ 1930 թ. մենք չինել ենք 1 ու կես միլիարդ ռուբլու:

Ուրեմն մեքենաշինարարության գործը, վոր մեր Միության համար ունի հսկայական նշանակություն, հնգամյակը 2 ու կեսից 3 տարում ենք կատարում:

Գյուղատնտեսական մեքենաներ մենք պետք է տայինք 1932–33 թվին 610 միլ. ռուբլու, սակայն 1929–30 թվին արտադրել ենք 400 միլ. ռուբլու մեքենաներ: Ուրեմն գյուղատնտեսական մեքենաների արտադրության գործում ես հնգամյակը կատարում ենք յերեք տարում:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՌՆՈՒՄ Է ԱՄԵՆԱԱՌԱՋԱՎՈՐ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՅԵՐԿԻՐՆ ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Գյուղատնտեսության զարգացման համար կա յերկու ճանապարհ—կապիտալիստական և սոցիալիստական:

Կապիտալիստական ուղու զարգացման լավագույն որինակը կարելի յե բերել աշխարհիս ամենաառաջավոր յերկիր Ամերիկայից: Ամերիկայի գյուղատնտեսությունը համարվում է ամենաառաջավորը, մինչդեռ բանից դուրս է գալիս, վոր վերջին 10 տարիներում ցանքերի տարածությունը միայն 4 միլ. հեկտարով է ավելացել: Գյուղացիության նյութական դրությունը տարեցտարի վատանում է: Գյուղացիական հիմնական մասսաները կա-

պիտալիստական զարգացման ժամանակ քայքայվում են: Որինակ՝ Ամերիկայում միջակ և չքավոր գյուղացին վոչ մի հնարավորություն չունի ոգտվելու տրակտորից: Վերջին 10 տարվա ընթացքում Ամերիկայում ամեն մի 10 հազար գյուղական տնտեսություններից 200–ը քայքայվել են, վաճառել են ունեցած հողերը, իրենք գնացել քաղաք գործ փնտռելու:

Համարյա նույն դրությունը, գուցե ավելի վատ վիճակ է կապիտալիստական մյուս յերկրներում գյուղացիության դրությունը:

Իսկ մեզ մոտ գյուղացիական հիմնական մասսաները միանալով կոլխոզի մեջ, նոր կյանք են կերտում, գնում են դեպի սոցիալիզմ:

Մեր 200 հազար կոլխոզները 1931 թ. գարնանը իրենց մեջ ընդգրկելով 13 միլ. գյուղ. տնտեսություն, ցանել են 59 միլ. հեկտ. հող: Մնացած 12 միլ. անհատ տնտեսությունները 29 միլ. հեկտ. են ցանել: Ամեն մի կոլխոզնիկի ընկնում է 4 ու կես հեկտար, իսկ մենատերին 2 ու կես հեկտար: 1930 թվին մեր կոլխոզները յերեք և կես անգամ ավելի հաց տվին, քան թե կուլակները 1926–27 թ.: Կոլխոզնիկները ժամանակակից միջոցներով հերկելով հողը, ավելի շատ յեկամուտ են ստանում, քան անհատական տնտեսատերերը:

Մեզ մոտ 1931 թ. մեր կոլխոզների և սովխոզների դաշտերում աշխատել են 100 հազար տրակտորից ավելի: Միայն 1931 թ. մեր Միության մեջ կառուցվելու յեն 1040 մեքենատրակտորային կայաններ: Մեր տրակտորային գործարանները ներկայումս տալիս են որեկան մոտավորապես 300 տրակտոր: 1931 թվին գյուղին տրվել է 760 միլ. ռուբլու գյուղատնտեսական մեքենաներ: Անդրկովկասում 1931 թվի վերջերին կար 5 մեքենատրակտորային կայան, վորից Ադրբեջանում 31 հատ, վորը պետք է ընդգրկի հիմնական հացահատիկային և բամբակի ցանքերի 73,6 տոկոսը, Վրաստանում 13 հատ, վորը պիտի հիմնական հացահատիկային շրջանների և տեխնիկական կուլտուրաների ցանքերի 67,9 տոկոսն ընդգրկի: Հայաստանում 7 հատ, վորն ընդգրկելու յե հիմնական հացահատիկային շրջանների (Լենինական, Ախտա, Բասարգեչար և այլն) և բամբակացան շրջանների ցանքերի 73,4 տոկոսը:

Բամբակացան շրջաններն Անդրկովկասում ընդգրկված են 100 տոկոսով:

Հայաստանի հիմնական հացահատիկային շրջանների ցանքերի 60 տոկոսը հերկվելու յե տրակտորով: 1931 թ. Հայաստանում գործել են 300–ից ավելի տրակտորներ: Լենինականի մեքենատրակտորային կայանը—40000 հեկտար ցանելի հողից հերկելու յե 1800–ը, այսինքն՝ 60 տոկոսը վողջ տարածության: Ախտայի մեքենատրակտորային կայանը 27 հազարից 15,000–ն է հերկվելու՝ 60 տոկոսը: Ստեփանավանում 22.000–ից 14.000–ը՝ 65 տոկոս:

Տրակտորը Խ. Միությունում միացնում է աշխատավորական տնտեսությունները, իսկ կապիտալիստական յերկրներում տրակտորը քայքայում է աշխատավոր տնտեսությունը, վատացնում է նրանց նյութական դրությունը:

ԴԻԱԳՐԱՄ ԿՈԼԽՈԶ ՇԱՐԺՄԱՆ ՄԱՍԻՆ

Գյուղացիական տնտեսությունների քանակը կոլխոզում
(հաշված միլիոններով)

1929 թ.—1 միլ. 1930 թ.—6 միլ. 1931 թ.—մարտ 9 միլ. 1931 թ.—հուլ. 14 միլ.
Անդրկովկասում 1931 թ. հոկտեմբեր—43 տոկոսը
Հայաստանում 1931 թ. նոյեմբեր —40 »

ԿՈԼԽՈԶՆԵՐԻ ՑԱՆՔԵՐԻ ԱՃԸ

(միլիոն հեկտար հաշված)

1929 թ.—$6^1/_2$ միլ. 1930 թ.—43 միլ. 1931 թ.—հուլիս 59 միլ.

ՄԵՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մենք 50–100 տարով յետ ենք մնացել առաջավոր յերկրներից: Այս տարածությունը մենք պետք է անցնենք 10 տարում: Կամ կանենք այդ, կամ մեզ կճզմեն:

ԽՍՀՄ-ի բանվոր դասակարգը համաշխարհային բանվոր դասակարգի մի մասն է: Մենք հաղթեցինք վոչ միայն ԽՍՀՄ-ի բանվոր դասակարգի ջանքերով, այլ և համաշխարհային բանվոր դասակարգի օժանդակությամբ: Առանց այդ օժանդակության, վաղուց բզկտած կլինեյին մեզ: Ասում են, թե մեր յերկիրը բոլոր յերկրների պրոլետարիատի հարվածային բրիգադն է:

Առավելն 10 տարվա ընթացքում մենք պետք է կտրենք այն տարածությունը, վորով յետ ենք մնացել կապիտալիզմի առաջավոր յերկրներից: Դրա համար մենք ունենք բոլոր «օբյեկտիվ» հնարավորությունները: Պակասում է միայն այդ հնարավորությունները պատշաճ կերպով ոգտագործելու հմտությունը: Իսկ այդ կախված է մեզանից և միմիայն մեզանից: Ժամանակ է, վոր մենք սովորենք ոգտագործել այդ հնարավորությունները: Ժամանակ է, վոր մենք վերջ տանք արտադրության չմիջամտելու նեխված տեսակետին: Ժամանակ է յուրացնել մի ուրիշ, ներկա շրջանին համապատասխան, նոր դիրքավորում՝ միջամտել ամեն բանի: Յեթե դու գործարանի դիրեկտոր ես,—միջամտիր բոլոր գործերին, թափանցիր նրա բոլոր անկյունները, սովորիր, և դարձյալ սովորիր: Բոլշևիկները պետք է տիրապետեն տեխնիկային: Ժամանակ է, վոր բոլշևիկներն իրենք մասնագետներ դառնան: Վերակառուցման շրջանում տեխնիկան լուծում է ամեն ինչ:

(Ընկ. Ստալինի սոցիալիստական արդյունաբերության աշխատավորների համամիութենական առաջին կոնֆերանսում արտասանած ճառից):

ԻՆՉ Է ԱՍԵԼ ԼԵՆԻՆԸ ԿՈԼԽՈԶՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(ԸՍՏ ՍՏԱԼԻՆԻ)

Լենինն ասել է.—

«Մանր տնտեսությամբ կարիքից ազատվել չի լինի»:

«Յեթե մենք առաջվա պես նստենք մանր տնտեսություններում, թեկուզ և վորպես ազատ քաղաքացիներ ազատ հողի վրա, միևնույն է, մեզ անխուսափելիորեն կորուստ է սպառնում»:

«Միայն ընդհանուր արտելային ընկերավարական աշխատանքի ոգնությամբ կարելի յե դուրս գալ այն փակուղուց, դեպի ուր մեզ հասցրել է իմպերիալիստական պատերազմը»:

Ի՞նչ է այս բոլորը նշանակում:

Այդ նշանակում է, վոր միայն կոլխոզները գյուղացիներին յելք կտան կարիքից ու խավարից:

Խորհրդային իշխանությունը կոլխոզներին արտոնություններ է տալիս. տալիս է հող, մեքենաներ, լավ տեսակի սերմացու և այլն:

Ինչո՞ւ յե Խորհրդային իշխանությունն արտոնություններ տալիս կոլխոզնիկներին:

Վորովհետև կոլխոզները կփրկեն գյուղացիներին չքավորությունից:

Վորովհետև միայն կոլխոզների միջոցով կարելի յե իսկական ոգնություն ցույց տալ չքավորությանն ու միջակներին:

Լենինն ասում է.—

«Խորհրդային իշխանությունն ուղղակի գերադասություն տվեց կոմունաներին և ընկերություններին, դասելով նրանց առաջնակարգ տեղը»:

Կոլխոզն ավելի լավ է միանձնյա տնտեսությունից: Կոլխոզն ավելի շահավետ է միանձնյա տնտեսությունից: Կոլխոզը յելք է տալիս գյուղացուն, չքավորին ու միջակին կարիքից ու աղքատությունից:

Ի. ՍՏԱԼԻՆ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մեր գյուղատնտեսությունն աճում է ու ամրանում: Գյուղատնտեսության մեջ աճել է մի նոր ուժ, դա սովխոզներն ու կոլխոզներն են:

Հենց միայն 1931 թվին աշխատել են սկսել 1040 մեքենա-

տրակտորային կայան, իսկ այս տարվա վերջում ընդամենը կլինի 1400 այդպիսի կայան:

Ավարտված է կոլեկտիվացումը հացահատիկային հիմնական ռայոններում: Հյուսիսային Կովկասում, Ներքին Վոլգայում, Ուկրայինայի ու Կրիմի տափաստանային մասում, Միջին Վոլգայի ձախ ափում:

Մնացած հացահատիկային ռայոններում, ճակնդեղային ու բամբակացան ռայոններում կոլխոզներով ընդգրկված է յեղել 1931 թվի ամռանը գյուղացիական տնտեսությունների 50 տոկոսից ավելին:

1932–33 թվին կոլեկտիվացումը կավարտվի ամբողջ ԽՍՀՄ մեջ:

1930 թվի ամռանը կոլխոզներում յեղել է Խորհրդային Միության բոլոր գյուղացիական տնտեսությունների քառորդից վոչ ավելի: 1931 թվի ոգոստոսի վերջում կոլխոզները միացրել են ԽՍՀՄ բոլոր տնտեսությունների 60 տոկոսը:

Սովխոզների ցանքերը միայն 1931 թվին ավելացել են համեմատած 1930 թվի հետ, ավելի քան յերկու անգամ: Առ 1–ն հուլիսի 1931 թվի սովխոզներին ու կոլխոզներին ընկել է համարյա 68 միլիոն հեկտար գարնանացան, իսկ մենատնտեսներին՝ միայն 29 միլիոն հեկտար: Առ 1–ն հուլիսի 1931 թվի կոլխոզներն ու սովխոզները ցանել են համարյա յերկու անգամ ավելի, քան ցանում էյին կալվածատերերն ու կուլակները պատերազմից առաջ:

Կոլխոզային գյուղացիությունը դառնում է վոչ միայն հացահատիկի հիմնական արտադրողը, այլ և արդյունաբերության համար կարևորագույն հումույթի, այն է՝ բամբակի, ճակնդեղի, կտավատի, արևածաղկի և այլ մշակույթների հիմնական արտադրողը:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԵԼ ՈՒ ԿՈՄՈՒՆԱ

Գյուղատնտեսական արտելը հանդիսանում է ներկայումս կոլխոզային զարգացման հիմնական աստիճանը:

Կուսակցության 16–րդ համագումարն ասաց, վոր չի կարելի միանգամից ցատկել դեպի կոմունա: Կոմունան կոլխոզի բարձրագույն աստիճանն է: Բայց չի կարելի պահանջել, վոր գյուղացիները, կոլխոզ մտնելով, միանգամից հրաժարվեն մենատնտեսների սովորություններից ու շահերից: Չի կարելի արգելել կոլխոզնիկներին համայնականին կից ունենալ անձնական տնտեսություն (կով, վոչխար, թռչուն, բանջարանոց):

ԿՈԼԵԿՏԻՎԱՑՄԱՆ ԱՎԱՐՏՈՒՄԸ

Ի՞նչ է նշանակում հիմնականում ավարտել համատարած կոլեկտիվացումը:

Դրա համար պարտադիր չէ, վոր կոլխոզը 100 տոկոսով ընդգրկի մարզի կամ ռայոնի չքավոր ու միջակ տնտեսությունները:

Դրա համար բավական է.—

1) Կոլխոզներով ընդգրկել առնվազն 68–70 տոկոսով չքավոր–միջակ տնտեսություններին:

2) Ընդգրկել կոլխոզներով գյուղացիական ցանքերի ամենապակասը 75–80 տոկոսը:

Այդպիսի պարզաբանում է տվել Համկոմկուսի(բ) Կենտրոնական Կոմիտեն:

ԱՄՐԱՑՆԵԼ ԿՈԼԽՈԶԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Մի շարք յերկրներ ու մարզեր ավարտել են համատարած կոլեկտիվացումը: Մնացած մարզերը կանգնած են կոլեկտիվացման ավարտման ճանապարհին:

Ի՞նչ է պետք կոլեկտիվացման հետագա հաջողությունների համար:

Հարկավոր է ամենից առաջ ամրացնել կոլխոզների արտելային տնտեսությունը:

Դրա համար հարկավոր է.—

1) Լավ դնել հաշվառման գործը:

2) Ճիշտ կազմակերպել աշխատանքը, կիրառել գործավարձայինը:

3) Ճիշտ բաշխել կոլխոզային յեկամուտները:

ՀԱՇՎԱՌՈՒՄ

Լենինն ասում էր.— «Սոցիալիզմը հաշվառում է»:

Առանց հաշվառման չկա կոլխոզ: Կոլխոզի ամրացման ու աճման համար հարկավոր է լավ կարգավորել հաշվառումը: Հարկավոր է հաշվի առնել կոլխոզնիկների աշխատանքի քանակն ու վորակը: Հարկավոր է հաշվի առնել կոլխոզի ծախսերն ու յեկամուտները, ճիշտ բաշխել յեկամուտները:

ԳՈՐԾԱՎԱՐՁԱՅԻՆ

Աշխատանքի ճիշտ կազմակերպումն ամրացնում է կոլխոզի տնտեսությունը:

Բոլոր կոլխոզները պետք է անցնեն գործավարձայինի: Գործավարձայինի ժամանակ ամեն մի աշխատանք գնահատվում է աշխատանքային որերով: Վորքան ավելի շատ ու լավ աշխատանք է կատարված, այնքան ավելի շատ աշխատանքային որեր են գրում կոլխոզնիկի հաշվին:

Առաջավոր կոլխոզներում գործավարձայինի հիման վրա լայն

ծավալված է սոցիալիստական մրցակցությունն ու հարվածայնությունը:

Գործավարձայինի կիրառման ժամանակ մի քանի կոլխոզներ թույլ են տվել սխալներ. օրինակ՝ աշխատանքային օրերը բրիգադների ներսում հավասար բաժանել են կոլխոզնիկների միջև:

Այդ գործավարձայինի աղավաղում է: Իսկական գործավարձայինի ժամանակ հարկավոր է հաշվի առնել բրիգադի ներսում ամեն մի կոլխոզնիկի աշխատանքի քանակն ու որակը:

ՅԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ

Գործավարձայինը հնարավորություն է տալիս ճիշտ բաշխելու կոլխոզի յեկամուտները: Յեկամուտները պետք է բաշխվեն աշխատանքային օրերով:

Կուլակն ագիտացիա յե մղում հավասարեցման օգտին: Նա կոլխոզնիկներին ասում է. — Բաշխեցեք յեկամուտները շնչի հաշվով, ուտողների թվով:

Յեկամուտների այդպիսի բաշխումը ձեռնտու յե միայն ծույլերին: Աշխատասեր, ժրաջան կոլխոզնիկին կուլակային հավասարեցումը պետք չէ:

Ագիտացիա մղելով հավասարեցման օգտին, կուլակն ուզում է քայքայել կոլխոզի տնտեսությունը:

Յեկամուտը պետք է բաշխվի միայն աշխատանքային օրերով:

Ով շատ և լավ է աշխատում, նա շատ է ստանում:
Ով չի աշխատում, նա ոչինչ չի ստանում:

ԿՈՒԼԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ՎՈՐՊԵՍ ԴԱՍԱԿԱՐԳ ՊԵՏՔ Է ՎԵՐԱՑՎԻ ՀԱՄԱՏԱՐԱԾ ԿՈԼԵԿՏԻՎԱՑՄԱՆ ՀԻՄԱՆ ՎՐԱ
(ԸՍՏ Ի. Վ. ՍՏԱԼԻՆԻ)

Կուլակը Խորհրդային իշխանության թշնամին է: Նրա հետ մենք չենք հաշտվում և չենք էլ կարող հաշտվել: Մեր քաղաքականությունը կուլակության վերաբերմամբ նրա վերացման, այսինքն՝ վորպես դասակարգի վոչնչացման քաղաքականությունն է...

Ահա թե ինչ եր ասում Լենինը կուլակի մասին.—

«Կուլակներն ամենագազանաբարո, ամենավայրագ, ամենակոպիտ շահագործողներն են...

Այդ արյունարբուները հարստացել են ժողովրդական կարիքից պատերազմի ժամանակ: Նրանք դիզել են հազարավոր ու հարյուր հազարավոր դրամ, բարձրացնելով հացի և այլ մթերքների գները:

Այդ սարդերը ճարպակալել են ի հաշիվ պատերազմից քայքայված գյուղացիների, ի հաշիվ քաղցած բանվորների»:

Մենք համբերել ենք այդ արյունարբուներին ու սարդերին, վարելով նրանց շահագործական ձգտումների սահմանափակման քաղաքականություն: Համբերել ենք, վորովհետև վոչինչ չունեյինք կուլակային տնտեսությանը փոխարինելու համար:

Այժմ մենք կարող ենք գերազանցապես փոխարինել նրանց տնտեսությունը մեր կոլխոզների ու սովխոզների տնտեսությամբ:

Հանդուրժել այսուհետև կոլխոզների այդ հրձիգներին, կոլխոզային գործիչների այդ սպանողներին, նշանակում է բանվորների ու գյուղացիների շահերին հակառակ գնալ:

Այդ պատճառով կուլակության, վորպես դասակարգի վերացումը, պետք է կիրառվի ամենայն համառությամբ, վորին ընդունակ են բոլշևիկները:

ԿՈԼԽՈԶԻ ՈԳՏԻ՞Ն, ԹԵ՞ ԿՈԼԽՈԶԻ ԴԵՄ

Կոլխոզները ձեռք են բերել հսկայական հաջողություններ: Մինչև 1931 թվի գարունը կոլխոզներն արդեն միացրել են 13 միլիոն չքավոր ու միջակ տնտեսություններ:

ԽՍՀՄ գյուղացիական տնտեսությունների կեսից ավելին գործով համոզվել են կոլխոզի առավելությունների մեջ ընդդեմ միանձնյա տնտեսությանը: Կոլխոզնիկը դարձել է կուսակցության ու Խորհրդային իշխանության իսկական ու ամուր հենարանը:

Ամեն մի դեռևս տատանվող չքավորի ու միջակի առաջ հարց է բարձրանում, թե ում հետ է նա՝ կուլակի՞ հետ, թե՞ կոլխոզի հետ:

Կուլակը դեռ կատաղի պայքար է մղում կոլխոզների դեմ: Վոչ մի չքավոր ու միջակ չի կարող մի կողմ քաշվել այդ պայքարից: Պայքար է մղվում ամեն մի գյուղում:

Չի կարող բանվոր դասակարգի դաշնակիցը լինել այնպիսի չքավոր ու միջակ մենատնտեսատեր, վորն օգնում է կուլակին պայքարելու կոլխոզի դեմ: Նա գործով կուլակի դաշնակիցն է դառնում:

Այդ չի նշանակում, վոր պետք է թուլացնել կոլխոզ մտնելու կամավորականությունը: Կամավորականությունը կոլխոզային շարժման հիմքն է:

Իրենք մենատնտես չքավորներն ու միջակները հիմա ասում են.

— Մեր առաջ միայն մի ճանապարհ կա. կոլխոզին օգնելու և ապա կոլխոզ մտնելու ճանապարհը: Մի կողմ քաշվել մենք չենք կարող. կամ բանվոր դասակարգի ու կոլխոզային գյուղացիության հետ, կամ կուլակի հետ:

Հիմա գլխավոր խնդիրն է դառնում պայքարը՝ կոլխոզնե-

բում տնտեսության ամրացման համար, աշխատանքի ճիշտ կազմակերպման համար, պայքարը բերքի բարձրացման համար:

Ով այդ չհասկանա, նա չի հասկանա կուսակցության խնդիրները:

ՅԱ. ՅԱԿՈՎԼԵՎ

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԱՐՎԱԾԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ
(ԸՍՏ Ի. Վ. ՍՏԱԼԻՆԻ)

Սոցիալիզմի շինարարության մեր հաջողությունների կարեվորագույն պատճառներից մեկն է սոցիալիստական մրցակցության ու հարվածայնության լայն թափը:

Կուսակցությունը կազմակերպել է սոցիալիստական լայն մրցակցություն և աշխատանքային մասսայական խանդավառություն գործարաններում ու ֆաբրիկներում:

Հարվածային բրիգադներն առաջ են շարժում մրցակցությունը:

Մրցակցությունն ու հարվածայնությունը նվաճված ու ամրացված գործ է:

Սոցիալիստական մրցակցությամբ մեզանում ընդգրկված են միլիոնավոր բանվորներ:

Մրցակցությունը հիմնական հեղաշրջում է կատարում մարդկանց՝ աշխատանքի նկատմամբ ունեցած հայացքներում: Նա աշխատանքը պախարակելի ու ծանր բեռից, ինչպիսին նա համարվել է առաջ, դարձնում է պատվի գործ, փառքի գործ, խիզախության ու հերոսության գործ:

Այդպիսի վոչինչ չկա ու չի կարող լինել կապիտալիստական յերկրներում:

Այնտեղ, նրանց մոտ, կապիտալիստների մոտ, ամենացանկալի գործն է՝ ազատ լինել աշխատանքից: Աշխատանքը համարվում է մի արհամարհելի զբաղմունք:

Մեզանում, ԽՍՀՄ, ընդհակառակը՝ ամենացանկալի գործն է՝ լինել աշխատանքի հերոս, լինել հարվածայնության հերոս, արժանանալ միլիոնավոր բանվորների հարգանքին:

ՀԱՍՆԵԼ ՈՒ ԱՆՑՆԵԼ

Յերբեմն հարցնում են՝ չի՞ կարելի արդյոք փոքր ինչ դանդաղեցնել տեմպերը, կասեցնել շարժումը:

Վո՛չ, չի կարելի, ընկերներ: Չի կարելի իջեցնել տեմպերը:

Ընդհակառակը, ուժերի ու հնարավորությունների ներածին չափ պետք է ավելացնել տեմպերը:

Կասեցնել տեմպերը նշանակում է յետ ընկնել, իսկ յետ ընկնողներին խփում են: Մենք չենք ուզում, վոր մեզ խփեն: Վո՛չ, չենք ուզում:

Անցյալում մենք հայրենիք չունեյինք ու չէյինք էլ կարող ունենալ: Բայց հիմա, յերբ մենք տապալել ենք կապիտալիզմը և իշխանությունը բանվորական է, մենք ունենք հայրենիք: Յեվ մենք պաշտպանելու յենք նրա անկախությունը: Ուզո՞ւմ եք, վոր մեր սոցիալիստական հայրենիքին խփեն, և նա կորցնի իր անկախությունը:

Բայց յեթե դուք այդ չեք ուզում, դուք պետք է ամենակարճ ժամանակամիջոցում վերացնենք նրա հետամնացությունը և նրա տնտեսության զարգացման գործում ծավալեք իսկական բոլշևիկյան տեմպեր: Ուրիշ ճանապարհ չկա:

Ահա թե ինչու Լենինը Հոկտեմբերի ժամանակ ասում եր.—

«Մենք առաջավոր յերկրներից յետ ենք մնացել 50–100 տարով:

Մենք պետք է այդ տարածությունը վազենք, անցնենք տաս տարում: Կա՛մ մենք այդ կանենք, կա՛մ մեզ կջախջախեն...»

Մեր յերկիրը բոլոր յերկրների պրոլետարիատի հարվածային բրիգադ է: Այդ մեզ վրա դնում է ամենալուրջ պարտականություններ...

Մենք պետք է առաջ շարժվենք այնպես, վոր ամբողջ աշխարհի բանվոր դասակարգը, մեզ տեսնելով, կարողանա ասել.

— Ահա նա— իմ առաջավոր ջոկատը: Ահա նա— իմ հարվածային բրիգադը: Ահա նա— իմ բանվորական իշխանությունը: Ահա նա— իմ հայրենիքը: Նրանք անում են իրենց գործը, մեր գործը լավ է:

Ոգնենք նրանց ընդդեմ կապիտալիստների և բորբոքենք համաշխարհային հեղափոխության գործը:

Ի. ՍՏԱԼԻՆ

ԱՇԽԱՏԵԼ ՆՈՐ ՁԵՎՈՎ

Ամենաշատը մի տաս տարում մենք պետք է հասնենք ու անցնենք տեխնիկական տնտեսական տեսակետից կապիտալի առաջավոր յերկրներին:

Ի՞նչ է դրա համար հարկավոր: Մենք պետք է սովորենք արտադրել բարդ մեքենաներ, սովորել աշխատել նրանցով, խնամել նրանց: Մենք պետք է տիրապետենք արտադրության տեխնիկային:

Սոցիալիզմը հաշվառում է: Մենք պետք է աշխատենք պլանով, խստիվ տնտեսական հաշվարկի հիման վրա: Հարկավոր է

Հաշվի առնել և տնտեսել յուրաքանչյուր ռուբլին, յուրաքանչյուր տոնն քարածուխը, նավթը, հումույթը:

ԻՆՉ Է ԴԻՄԱԶՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Դիմազրկությունը վորևէ պատասխանատվության բացակայությունն է հանձնարարած աշխատանքի համար, պատասխանատվության բացակայությունն է մեխանիզմների համար, հաստոցների համար, գործիքների համար:

Հասկանալի յե, վոր դիմազրկության ժամանակ խոսք անգամ լինել չի կարող աշխատանքի արտադրողականության փոքր ի շատե բարձրացման մասին, արտադրանքի վորակի բարելավման մասին, դեպի մեխանիզմները, հաստոցները, գործիքները խնամքով վերաբերմունքի մասին:

Չի կարելի այլևս հանդուրժել դիմազրկությունն արտադրության մեջ:

Այդ չարիքից ազատվելու համար, հարկավոր է նոր ձևով կազմակերպել աշխատանքը, հարկավոր է ուժերը դասավորել այնպես, վոր բանվորների յուրաքանչյուր խմբակ պատասխանատու լինի իր աշխատանքի համար, մեխանիզմների համար, հաստոցների համար, աշխատանքի վորակի համար:

Ի. ՍՏԱԼԻՆ

ՏԻՐԱՊԵՏԵԼ ՏԵԽՆԻԿԱՅԻՆ

Ասում են, վոր տեխնիկային տիրապետելը դժվար է: Ճիշտ չե: Չկան այնպիսի ամրոցներ, վոր գրավել չկարողանան բոլշևիկները:

Մենք լուծել ենք մի շարք դժվարագույն խնդիրներ: Մենք տապալեցինք կապիտալիզմը: Մենք վերցրինք իշխանությունը: Մենք կառուցեցինք խոշորագույն սոցիալիստական ինդուստրիա (արդյունաբերություն): Մենք դարձրինք միջակին դեպի սոցիալիզմի ճանապարհը:

Ամենակարեվորը շինարարության տեսակետից մենք արդեն արել ենք: Մեզ շատ քիչ բան է մնում անելու. ուսումնասիրել տեխնիկան, տիրապետել գիտությանը:

Յեվ յերբ մենք այդ կանենք, մեզանում կդնան այնպիսի տեմպեր, վորոնց մասին մենք հիմա մինչև անգամ յերազել չենք համարձակվում: Յեվ մենք այդ կանենք, յեթե իսկական ձևով մենք այդ կկամենանք:

Ի. ՍՏԱԼԻՆ

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Պաշտպանության ամրացման համար անհրաժեշտ է սոցիալիստական շինարարության արագ զարգացում թե քաղաքում և թե գյուղում: Ամեն մի նոր գործարան, ֆաբրիկ, սովխոզ, կոլխոզ ավելացնում են մեր ռազմական պատրաստությունը:

Ամեն մի ավելորդ տոնն քարածուխ ու չուգուն, ամեն մի նոր տրակտոր ու չոգեշարժ, ամեն մի ավելորդ տոնն հացահատիկ, միս ու հումույթ, ամրացնում են մեր պաշտպանությունը:

Կարմիր բանակում աճում է բանվորների ու կոլխոզնիկների թիվը:

Ամրանում է Կարմիր բանակի դասակարգային համախմբվածությունն ու մարտական կորովը:

ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՆ ՈՒ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳՆ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՐԴՆ Է

Բանվորներն ապրում են վոչ թե ցրված՝ գյուղերում, այլ կուտակված՝ քաղաքներում: Բանվորները մեծ մասսաներով աշխատում են քաղաքներում հսկայական գործարաններում ու ֆաբրիկներում: Բանվոր դասակարգը համախմբված է ի մի յեղբայրական ամուր ընտանիքի: Նա կոփված է ու տոկուն է պայքարում:

Բանվոր դասակարգը համախմբված միասնական ուժ է, վորը կարող է կռվել բուրժուազիայի դեմ և հաղթել նրան:

Միայն բանվոր դասակարգը կարող է լինել բոլոր աշխատավորների ղեկավարը կապիտալիստների դեմ մղած պայքարում:

Հեղափոխական պայքարում գյուղացիությունը կարող է հաղթել միայն դաշն կնքելով բանվոր դասակարգի հետ ու նրա ղեկավարությամբ:

Լենինը սովորեցնում եր.—

«Կա՛մ կալվածատերերի ու կապիտալիստների դիկտատուրա, այսինքն՝ յերկաթե իշխանություն, կա՛մ բանվոր դասակարգի դիկտատուրա: Միջին ճանապարհ չկա»:

Ընկեր Լենինն ասում եր, վոր՝ «միայն արդյունաբերական բանվորները կարող են ղեկավարել աշխատավորների ամբողջ մասսային, կապիտալի ճնշումը տապալելու համար մղած պայքարում»: Միայն բանվորները կարող են ղեկավարել սոցիալիստական շինարարությունը:

Մեր հաղթանակները սոցիալիզմի շինարարության մեջ ձեռք

են բերված այն պատճառով, վոր մեզանում բանվոր դասակարգի դիկտատուրայի պետություն է:

Կապիտալի յերկրներում բուրժուազիայի դիկտատուրա յե: Մեզանում բանվոր դասակարգի դիկտատուրա յե: Կարմիր բանակը պրոլետարական դիկտատուրայի զենքն է:

ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆԸ

(Ն. Կ. ԿՐՈՒՊՍԿԱՅԱՅԻ ՃԱՌԻՑ)

Մենք շատ ենք խոսում բանվորների ու գյուղացիների միջև կապի մասին: Այդ կապը, ընկերներ, տվել է մեզ ինքը պատմությունը: Ռուս բանվորն իր մի վոտքով, մի կողմով բանվոր է, իսկ մյուս կողմով գյուղացի:

Բանվոր դասակարգն աշխատավորների առաջավոր ջոկատն է: Նրա յետևից գնում են աշխատավորների բոլոր մասսաները, ճնշվածների բոլոր մասսաները: Յեվ դրանումն է նրա ուժը: Դրանումն է նրա հաղթանակի յերաշխիքը: Միայն վորպես բոլոր աշխատավորների առաջնորդ բանվոր դասակարգը կարող է հաղթել:

Այդ հասկացավ Վլադիմիր Իլյիչը, յերբ նա աշխատում էր Պիտերի բանվորների մեջ: Յեվ այդ միտքը լուսավորում էր նրա հետագա ամբողջ գործունեությունը, նրա ամեն մի քայլը:

Վլադիմիր Իլյիչը բանվոր դասակարգի համար իշխանություն էր ուզում: Նա հասկանում էր, վոր բանվոր դասակարգին այդ իշխանությունը պետք է վոչ թե նրա համար, վորպեսզի իրեն համար քաղցր ապրուստ ստեղծի ուրիշների հաշվին: Վլադիմիր Իլյիչը հասկանում էր, վոր բանվոր դասակարգի խնդիրն է՝ ազատագրել բոլոր ճնշվածներին, բոլոր աշխատավորներին:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՅԻ ՄԱՐՄԻՆՆԵՐՆ ԵՆ

Հոկտեմբերյան հեղափոխությունը փոշիացրեց կալվածատերերի ու կապիտալիստների իշխանությունը: Բանվոր դասակարգն իշխանությունը վերցրեց իր ձեռքը, հաստատեց իր դիկտատուրան: Խորհուրդները պրոլետարիատի դիկտատուրայի մարմիններն են:

Խորհուրդներն ընտրում են և կարող են ընտրվել 18 տարեկանից վոչ պակաս հասակ ունեցող բոլոր աշխատավորները: Խորհուրդների միջոցով կուսակցությունն ու բանվոր դասակարգը

ղեկավարում են սոցիալիզմի շինարարությունը: Խորհուրդները ճնշում են դասակարգային թշնամիների դիմադրությունը: Խորհուրդները կիրառում են համատարած կոլեկտիվացման հիման վրա կուլակությունը, վորպես դասակարգ վերացնելը: Խորհուրդներն ամրացնում են յերկրի պաշտպանությունը:

Իրենց ամբողջ աշխատանքում խորհուրդները հենվում են քաղաքում՝ հարվածային բանվորի և գյուղում՝ կոլխոզնիկի վրա:

Խորհուրդները հոգ են տանում աշխատավոր մասսաների լուսավորության, քաղաքների ու գյուղերի բարեկեցության, առողջապահության մասին:

Խորհուրդները սովորեցնում են աշխատավորներին ղեկավարել պետությունը: Լենինը մեծ նշանակություն էր տալիս աշխատավոր մասսաների մասնակցությանը յերկրի ղեկավարությանը:

Կապիտալիստների ու կալվածատերերի որոք աշխատավորները զրկված եյին այդ իրավունքից: Կապիտալիստական յերկրներում ամբողջ իշխանությունը գտնվում է մի բուռն շահագործողների ձեռքում:

Կոմունիստական կուսակցությունն ու բանվոր դասակարգը հիմա սոցիալիզմի ծավալուն հարձակում են կատարում ամբողջ ճակատով:

Խորհուրդների դերը հիմա առանձնապես մեծ է:

Կուսակցության ղեկավարությամբ խորհուրդները կկատարեն սոցիալիզմի շինարարության խնդիրները:

ԸՆԿ. ՄՈԼՈՏՈՎԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ընկեր Մոլոտով (Սկրյաբին) Վյաչեսլավ Միխայլովիչը ծնվել է 1890 թ. փետրվարին, ներկայիս Սովետսկ քաղաքում (Վյատկայի նահանգ): ՀամԿ(բ)Կ անդամ է 1906 թվից: Իր կուսակցական աշխատանքն սկսել է Կազանում 1909 թ.: Կազանում ձերբակալվել է յերկու տարով աքսորվել է Վոլոգդայի նահանգը: Աքսորում գտնվելով, նա ակտիվ աշխատանք է կատարել Վոլոգդայում: Աքսորից հետո, նա աշխատել է Պետերբուրգում բարձրագույն դպրոցների բոլշևիկյան ֆրակցիաների կազմակերպության մեջ: 1912 թ. անցել է աշխատելու բոլշևիկյան «Զվեզդա» թերթում, իսկ «Պրավդայի» կազմակերպման ժամանակից անցել է «Պրավդայի» խմբագրության կազմի մեջ. (Հոդվածներ է ստորագրել Միխայլով, Ռյաբին, Զվանով կեղծ անուններով): Մասնակցություն է ունեցել նաև պետական Դումայի բոլշևիկյան ֆրակցիայի աշխատանքներում, ապա ձերբակալվել է և աքսորվել Պետերբուրգից: 1914 թ. աշնանն ընկ. Մոլոտովն աշխատել է Մոսկվայում: 1915 թ. ձերբակալվել է և աքսորվել

Իրկուտսկի նահանգը, վորտեղից 1916 թ. փախել է և նորից անցել անլեգալ կուսակցական աշխատանքի Պետրոգրադում: 1916 թ. վերջին նա կոպտացիայի յե յենթարկվել բալշևիկյան Կենտկոմի Ռուսաստանի բյուրոյի կազմում: Փետրվարյան հեղափոխությունից հետո նա յեղել է բալշևիկների Պետերբուրգի կոմիտեյի աչքի ընկնող աշխատողներից և Պետրոգրադի Խորհրդի Գործադիր Կոմիտեյի անդամներից մեկը և առաջին չրջանում Պետրոգրադի բանվորների զինվորների Խորհրդի բալշևիկյան ղեկավարներից մեկը: Հոկտեմբերյան օրերին, նա վորպես Պետերբուրգի Բալշևիկյան Կոմիտեյի ներկայացուցիչ, Պետերբուրգի Ռազմահեղափոխական Խորհրդի անդամ եր: 1918 թ. նա Հյուսիսային կոմունայի ժողովրդական տնտեսության Խորհրդի նախագահն եր: 1919 թ. Կենտկոմի և Համառուսական Կենտգործկոմի լիազոր՝ Վոլգայի չրջանում: 1920 թ. Նիժնի-Նովգորոդի նահանգական Գործկոմի նախագահ և ապա Դոնի նահանգական կոմիտեյի քարտուղար: 1920 թ. Համաուկրայինական կուսակցական կոնֆերանսում նա ընտրվում է Ուկրայինայի Կ(բ)Կ Կենտկոմի քարտուղար: Կուսակցության համագումարի չրջանից (1921 թ.) նա ընտրվում է ՀամԿ(բ)Կ Կենտկոմի անդամ և քարտուղար: 1928–29 թ. նա ՀամԿ(բ)Կ Մոսկվայի Կոմիտեյի քարտուղարն եր: 1924 թ. նա ՀամԿ(բ) Կ Կենտկոմի Քաղբյուրոյի անդամ է. 1927 թ. նա Համառուսական Կենտգործկոմի նախագահության և 1929 թ. Համամիութենական Կենտգործկոմի նախագահության անդամ է: Նա մի չարք, գլխավորապես կուսակցական չինարարության և գյուղի սոցիալիստական վերակառուցման հարցերին նվիրված աշխատությունների հեղինակն է:

ԱՌԱՆՑ ՑԱՐԻ, ԿԱԼՎԱԾԱՏԵՐԵՐԻ ՈՒ ԿԱՊԻՏԱԼԻՍՏՆԵՐԻ

Հոկտեմբերյան հեղափոխությունն ազատեց ճնշումից ու ստրկությունից բոլոր այն ժողովուրդներին, վորոնք բնակվում եյին ցարական Ռուսաստանում: Այժմ ԽՍՀՄ բոլոր ժողովուրդները յեղբայրական դաշինք կնքած՝ նոր կյանք են կառուցում: Ամեն մի ժողովուրդ ունի իր սոցիալիստական տնտեսությունը, բարձրացնում է իր կուլտուրան:

ԽՍՀՄ տնտեսական ու կուլտուրական աճումը կառուցվում է Խորհրդային Միության բոլոր ժողովուրդների յեղբայրական աշխատակցության հիման վրա:

ԽՍՀՄ բոլոր ժողովուրդների աշխատավորության յեղբայրական մեծ ընտանիքն է:

Ազգային հանրապետություններում ու մարզերում ներկայումս կատարվում է նոր գործարանների, ֆաբրիկների, հանքերի վիթխարի չինարարություն:

Կառուցվում են նոր յերկաթուղիներ: Բուսնում են ամբողջ

քաղաքներ: Կառուցվում են դպրոցներ, ակումբներ, հիվանդանոցներ: Մտցվում է ընդհանուր կրթություն: Վերացվում է անգրագիտությունը: Ազգային լեզուներով հրատարակվում են գրքեր ու թերթեր:

Ջքավոր ու միջակ գյուղացիներն ամեն տեղ միանում են ու կազմում կոլխոզներ: Խորհրդային իշխանությունը տալիս է կոլխոզներին տրակտորներ ու մեքենաներ:

Կուսակցությունը վճռական պայքար է մղում այն թեքումների դեմ, վորոնք ուզում են անտեսել լեզվի, կուլտուրայի ու կենցաղի ազգային տարբերությունները: Այդ թեքումը գլխավոր վտանգն է հանդիսանում:

Կուսակցությունը վճռական պայքար է մղում նույնպես այն թեքումների դեմ, վորոնք ուզում են անջատել մի ազգության աշխատավորներին մյուսից: Այդ թեքումը յետ է քաշում դեպի այն ժողովուրդների կուլտուրական ու տնտեսական հետամնացության ամրացումը, վորոնք ճնշված եյին ցարի, կալվածատերերի ու կապիտալիստների օրոք:

Կուսակցությունն անհաշտ պայքար է մղում ազգային հարցում կուսակցության լենինյան քաղաքականությունից կատարած ամեն տեսակ թեքումների դեմ:

Կարմիր բանակը բոլոր ազգությունների աշխատավորների զինված միությունն է:

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Աշխատանքի շահերը պահանջում են լիակատար վստահություն, ամենասերտ դաշինք բոլոր յերկրների, բոլոր ազգությունների աշխատավորությունների միջեվ:

Կալվածատերերի ու կապիտալիստների, բուրժուազիայի կողմնակիցներն աշխատում են անջատել բանվորներին, ուժեղացնել ազգային յերկպառակությունն ու թշնամությունը, վորպեսզի թուլացնեն բանվորներին, վորպեսզի ամրացնեն կապիտալի իշխանությունը:

Կապիտալը միջազգային ուժ է: Նրան հաղթելու համար հարկավոր է բանվորների միջազգային դաշինք, բանվորների միջազգային յեղբայրություն...

Մենք ձգտում ենք, վորպեսզի աշխարհի բոլոր ազգությունների բանվորներն ու գյուղացիները համախմբվեն, լիովին ձուլվեն ու կազմեն միասնական Համաշխարհային խորհրդային հանրապետություն:

Վ. ԼԵՆԻՆ

ԼԵՆԻՆԸ ՅԵՎ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՄԿՈՄԿՈՒՍԸ (Բ) ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՐԴՆ Է

Լենինը սովորեցնում եր, վոր ցարի ու կապիտալիստների դեմ հաջող պայքարի համար բանվոր դասակարգը պետք է ունենա իր սեփական բանվորական կուսակցությունը:

Բանվորական կուսակցությունը պետք է առաջնորդը լինի վոչ միայն բանվորների, այլ և բոլոր աշխատավորների, բոլոր ճնշվածների:

Լենինը սովորեցնում եր, վոր բանվոր դասակարգն ու նրա կուսակցությունը պետք է լինեն բոլոր աշխատավորների առաջամարտիկն ու առաջնորդը՝ ցարական միապետության, կալվածատերերի ու կապիտալիստների դեմ մղած պայքարում:

Լենինը կոփեց պողպատե պես ամուր բոլշևիկյան կուսակցություն—բանվոր դասակարգի կուսակցություն:

Բոլշևիկների կուսակցությունը ղեկավարել է Հոկտեմբերյան հեղափոխությունը:

Կոմկուսակցության ղեկավարությամբ 1917 թվին բանվոր դասակարգը և չքավոր գյուղացիությունը տապալեցին բուրժուական կառավարությունը:

Կուսակցության ղեկավարությամբ բանվոր դասակարգն ու աշխատավոր գյուղացիությունն ստեղծեցին Կարմիր բանակ:

Կուսակցության ղեկավարությամբ Կարմիր բանակը ջախջախեց ոտարերկրյա կապիտալիստներին ու սպիտակ գվարդիականներին, վորոնք հարձակվել եյին Խորհրդային յերկրի դեմ:

Կուսակցության ղեկավարությամբ բանվորներն ու աշխատավոր գյուղացիները սոցիալիզմ են կառուցում:

Շնորհիվ կուսակցության ճիշտ ղեկավարության, մեր յերկիրը թևակոխել է սոցիալիզմի շրջանը և ավարտում է սոցիալիզմի հիմքի կառուցումը:

Կուսակցությունն առաջնորդում է մեզ դեպի նորանոր հաղթանակներ կապիտալիզմի դեմ ունենալիք բոլոր մարտերում:

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՌԱՋ

1917 թվի աշունն եր: Ժամանակավոր կառավարությունում նստած եյին եսերներն ու մենշևիկները: Նրանք իրենց ձևացնում եյին բանվոր դասակարգի ու գյուղացիության բարեկամները: Իսկ իրականում նրանք ուղարկում եյին պատժիչ ջոկատներ այն գյուղացիների դեմ, վորոնք խլել եյին կալվածատերերի հո-

ղերը: Նրանք պաշտպանում եյին կալվածատերերի ու կապիտալիստների շահերը:

Բանվոր դասակարգը հասկացավ այդ: Մասսաները գնում եյին բոլշևիկների յետևից:

Բոլշևիկյան կուսակցությունը Լենինի գլխավորությամբ վորոշեց սկսել ապստամբությունը:

ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՂԹԵՑ

Հոկտեմբերի 25-ի (նոր տոմարով նոյեմբերի 7-ի) առավոտից Լենինգրադում սկսվեց ապստամբությունը: Ապստամբությունը ղեկավարում եր բոլշևիկյան Ռազմա-հեղափոխական կոմիտեն:

Ապստամբած զինվորները և Կարմիր գվարդիականները գրավեցին կայարանները, հեռագրատունը, փոստը, բանկը, ռազմական շտաբը և այլ պետական շենքեր:

Կերենսկու կապիտալիստական կառավարությունը թաքնվել եր Ձմեռային պալատում: Ինքը Կերենսկին փախել եր: Պալատը պաշտպանում եյին յունկերները (ռազմական դպրոցի ուսանողները):

Նևա գետի վրա պալատի դիմաց կանգնեց բոլշևիկյան «Ավրորա» հածանավը:

Գիշերով բոլշևիկները կիպ մոտեցան պալատին: Յունկերներին դուրս քշեցին: Բոլշևիկները ներխուժեցին պալատը: Կերենսկու կառավարության անդամները ձերբակալվեցին:

Նույն որը յերեկոյան Սմոլնում հավաքվեց Խորհուրդների Համառուսական Համագումարը: Յերկրորդ որը Լենինի առաջարկով համագումարն ընդունեց յերկու դեկրետ. մեկը՝ հաշտության, մյուսը՝ հողի մասին:

Ամբողջ յերկրում դղրդաց Մեծ Հոկտեմբերի հուժկու վորոտը.—

Ամբողջ իշխանությունը խորհուրդներին: Ամբողջ հողն աշխատավոր ժողովրդին: Վերջ ցարական պատերազմին: Կեցցե պրոլետարական հեղափոխությունը:

ԻԼՅԻՉԻ ԿՅԱՆՔԻ ՈՒՂԻՆ

ՅԵՐԻՏԱՍԱՐԴ ՏԱՐԻՆԵՐԸ

Վլադիմիր Իլյիչ Լենինը ծնվել է 1870 թվի ապրիլի 22-ին Սիմբիրսկում (այժմ Ուլյանովսկ):

Նրա հայրը՝ Իլյա Նիկոլայեվիչ Ուլյանովը ծագումով գյուղացի յեր: Նա նախկին Սիմբիրսկի նահանգի ժողովրդական դպրոցների տեսուչ եր: Դեռ. դպրոցում, ընկերական ժողովներում

Լենինը խոսում էր բանվորների ու գյուղացիների ծանր դրության մասին։

1887 թվին Պիտերում կախաղան էր հանված Վլադիմիր Իլյիչի մեծ յեղբայր՝ Ալեքսանդրը,—Ալեքսանդր III ցարի դեմ մահափորձ կատարելու համար։

Յեղբոր մահապատժի լուրը սաստիկ հուզեց Լենինին։ Սակայն այդ չսասանեց նրա հեղափոխական համոզմունքները։ Այդ միայն ամրացրեց նրա մեջ պայքարի վճռականությունը։

1887 թվին Վլադիմիր Իլյիչն ավարտեց միջնակարգ դպրոցը և ընդունվեց Կազանի բարձրագույն դպրոցը։ Բայց հազիվ էր նա ուսանող դարձել, նրան վոստիկանությունը հեղափոխական աշխատանքի համար աքսորեց Կոկուշկինո գյուղը։

Աքսորից վերադառնալուց հետո 1900 թվին կուսակցական ընկերների համաձայնությամբ Լենինը մեկնեց արտասահման, վորպեսզի այնտեղ հիմնի ռուսական բանվորական թերթ։ «Իսկրա» թերթը չափազանց շատ բան արավ բանվոր դասակարգի կուսակցության՝ ապագա բոլշևիկների համախմբման համար։

1905 ՅԵՎ 1917 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1905 թվին բռնկվեց առաջին ռուսական հեղափոխությունը։ Լենինը չէր կարող նստել արտասահմանում։ Վոստիկանությունից ծածուկ նա յեկավ Ռուսաստան և սկսեց ղեկավարել հեղափոխական շարժումը։

Բայց հեղափոխությունը ճնշվեց։ Լենինը գիտեր, վոր այդ

պարտությունը ժամանակավոր է։ Նա աշխատում էր պահպանել բանվոր դասակարգի և բոլշևիկյան կուսակցության մարտական ուժերը։

1907 թվին Լենինն ստիպված էր կրկին արտասահման մեկնել։ Այնտեղ նա շարունակում էր ամրացնել բոլշևիզմը, անհաշտ պայքար մղելով մենշևիկների, Տրոցկու և բանվոր դասակարգի այլ դավաճանների դեմ։

1917 թվի փետրվարյան հեղափոխությունից հետո Լենինը արտասահմանից Ռուսաստան վերադարձավ։ Նա ղեկավարեց Հոկտեմբերյան ապստամբությունը, վորը վերջացավ հեղափոխության հաղթանակով։

Հոկտեմբերի առաջին իսկ օրերից Վլադիմիր Իլյիչն ընտրվեց Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի նախագահ։ Գլխավորելով կոմկուսակցությունն ու Խորհրդային իշխանությունը՝ Լենինը ղեկավարեց Կարմիր բանակի պայքարն ընդդեմ սպիտակ գվարդիականների, ղեկավարեց պրոլետարական պետության շինարարությունը։

1918 թվի օգոստոսի 30-ին եսեր Կապլանը կրակեց Լենինի վրա և ծանր վիրավորեց նրան։

Հազիվ առողջացած վիրավորվելուց հետո, Լենինը կրկին աշխատանքի անցավ։

Բայց եսեր Կապլանի գնդակը և լարված աշխատանքը քայքայեցին նրա առողջությունը։ 1922 թվին Լենինը ծանր հիվանդացավ։ 1924 թվի հունվարի 21-ին Լենինը վախճանվեց։

ԼԵՆԻՆԸ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՐՆ ՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆ Է

Առաջին բոլշևիկ Վլադիմիր Իլյիչ Լենինը Համկոմկուսի (բ) հիմնադիրն ու կազմակերպիչն է։ Նա կազմակերպեց կուսակցությունը, սովորեցրեց նրան, կոփեց նրան՝ բանվոր դասակարգի դավաճանների դեմ մղած պայքարում։

Լենինը ղեկավարել է մեր կուսակցության բոլոր մարտերը ցարական հասարակակարգի դեմ, կալվածատերերի ու կապիտալիստների դեմ։

Լենինի ղեկավարությամբ կուսակցությունը հաղթանակեց 1917 թվի Հոկտեմբերին։

Լենինը Կարմիր բանակի կազմակերպիչն է, նրա ղեկավարությամբ Կարմիր բանակը յետ մղեց օտարերկրյա կապիտալիստների հարձակումը քաղաքացիական պատերազմում և ջախջախեց սպիտակ գվարդիականներին։

Լենինի ղեկավարությամբ կուսակցությունն սկսեց սոցիալիզմ կառուցել մեր յերկրում։

Լենինն անհաշտ պայքար է մղել մենշևիկների և Տրոցկու

դեմ։ Լենինն անխնա պայքար է մղել ամեն տեսակի թեքումների դեմ։

Լենինը սովորեցրեց ամրացնել կուսակցության շարքերի միասնությունը։ Հավատարիմ Լենինի ավանդներին, կուսակցությունը շարունակում է անհաշտ պայքարը՝ Լենինի ուսմունքից, կուսակցության լենինյան քաղաքականությունից կատարած ամեն տեսակի շեղումների դեմ։

Լենինը Կոմունիստական Ինտերնացիոնալի,—համաշխարհային կոմունիստական կուսակցության,—կազմակերպիչն ու առաջնորդն եր։

ՀԱՄԿՈՄԿՈՒՍԻ (Բ) ԿԵՆՏԿՈՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ի. Վ. ՍՏԱԼԻՆ

Իոսիֆ Վիսարիոնովիչ Ստալինը ծնվել է 1879 թվին Վրաստանում, Թիֆլիսից վոչ հեռու։ Նրա իսկական ազգանունը Ջուգաշվիլի յե, Ստալին—նրա հեղափոխական մականունն է։

Նրա հայրը բանվոր եր կոշկեղենի գործարանում և գյուղացիական ծագում ուներ։

Դեռ աշակերտական նստարանից Թիֆլիսում ընկեր Ստալինը գլխավորում եր գաղտնի հեղափոխական խմբակ։

1898 թվից նա արդեն կուսակցության անդամ եր։ 1898 թվին նա հեղափոխական աշխատանք եր տանում Թիֆլիսի գործարանային բանվորների ու յերկաթուղայինների մեջ։ Դպրոցական վարչությունն իմացավ Ստալինի հեղափոխական աշխատանքի մասին և հեռացրեց նրան դպրոցից։

Այդ ժամանակվանից ցարական վոստիկանությունը և ժանդարմերիան սկսում են հալածել Ստալինին։ 1901 թվին վոստիկանությունը ջախջախեց կուսակցության Թիֆլիսի կոմիտեն։

Ստալինն եր կոմիտեյի գլուխ կանգնած։ Հրաման եր տրված Ստալինի ձերբակալության մասին։ Բայց նրան հաջողվեց թաքնվել։

Նա անցավ Բաթում և այնտեղ հիմնադրեց Բաթումի կուսակցության կոմիտեն։ 1902 թվի մարտին նրան ձերբակալեցին։ Մինչև 1903 թվի վերջը Ստալինին պահեցին բանտում և ապա յերեք տարով աքսորեցին Արևելյան Սիբիր։ Աքսորավայրը հասնելուց մի ամիս անց, Ստալինը փախչում է և գաղտնի գալիս Թիֆլիս։ Նա գլխավորում է Անդրկովկասյան բոլշևիկների կուսակցական կազմակերպության աշխատանքը։

1905 թվին նա արտասահմանում հանդիպում է Լենինին և դառնում է նրա ամենամոտ աշակերտը։

Ստալինի հեղափոխական աշխատանքը կատարվում է փոխեփոխ բանտարկելության ու աքսորի հետ մինչև փետրվարյան

հեղափոխությունը։ Մի քանի անգամ նրան աքսորել են նախկին Վոլոգդայի նահանգը, 1912 թվին՝ Նարիմի շրջանը։ Մի քանի անգամ նրան հաջողվել է փախչել աքսորից, և նա շարունակել է հեղափոխական աշխատանքը մերթ Կովկասում, մերթ Լենինգրադում։

Ստալինը մասնակցել է կուսակցության արտասահմանյան համագումարներին։ Արտասահմանում նա հանդիպել է Լենինին։ 1912 թվից Ստալինը բոլշևիկների կուսակցության կենտրոնական կոմիտեյի անդամ է։

1913 թվին վոստիկանությունը Ստալինին աքսորեց Տուրուխանի յերկիրը։ Այդ աքսորում նա մնաց մինչև 1917 թիվը։

Փետրվարյան հեղափոխությունից հետո նա Լենինի հետ միասին աշխատանք եր տանում պատրաստելու Հոկտեմբերյան ապստամբությունը։

Հոկտեմբերից հետո կուսակցությունը նշանակեց Ստալինին ամենապատասխանատու պաշտոնների։ Ամբողջ քաղաքացիական պատերազմը նա անցկացրեց ճակատներում։ Ստալինը ղեկավարեց կարմիր բանակի ամենապատասխանատու ոպերացիաները։ Մարտական արժանիքների համար նա ունի Կարմիր Դրոշի յերկու շքանշան։

1922 թվին Ստալինն ընտրվեց կուսակցության Կենտկոմի քարտուղար։ Ներկայումս նա Համկոմկուսի (բ) Կենտկոմի գլխավոր քարտուղարն է։

Ստալինը Լենինի լավագույն աշակերտն է ու նրա գործի շարունակողը։ Հավատարիմ Լենինի ավանդներին, Ստալինը կուսակցությանն առաջնորդում է լենինյան ճիշտ ուղիով։

Ստալինը Համկոմկուսի (բ) առաջնորդն է։

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՋԵՐԻ ՈՒ «ՁԱԽԵՐԻ» ԴԵՄ ՄՂԱԾ ՊԱՅՔԱՐՈՒՄ

(ՀԱՄԿՈՄԿՈՒՍԻ (Բ) 16–ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ ԸՆԿ. ՍՏԱԼԻՆԻ ԱՐԱԾ ԶԵԿՈՒՑՈՒՄԻՑ)

Յերբեք կուսակցությունն այնչափ համախմբված չեր լենինյան Կենտրոնական Կոմիտեյի շուրջը, վորչափ այժմ։

Կուսակցությունն աճել է ու ամրացել, պայքարելով Լենինի ուսմունքից յեղած ամեն տեսակ թեքումների դեմ։

ԻՆՉ ԵՅԻՆ ՈՒԶՈՒՄ ՏՐՈՑԿԻՆ ՈՒ «ՁԱԽԵՐԸ»

Տրոցկին դուրս եր յեկել կուսակցության դեմ։ Նա գտնում եր, վոր ԽՍՀՄ–ում մեր յերկրի բանվորների ու գյուղացիների ուժով չի կարելի սոցիալիզմ կառուցել։

Ինչ ե այդ նշանակում:

Այդ նշանակում ե, վոր յեթե մոտ ժամանակներում ոգնության չհասնի հաղթական համաշխարհային հեղափոխությունը, մենք պետք ե անձնատուր լինենք կապիտալիստներին:

Տրոցկու բերանով խոսում եր բուրժուազիան և վոչ թե բանվոր դասակարգը: Մեր բանվոր դասակարգը գործել ե յերեք հեղափոխություն: 1905 թվին, փետրվարյան ու Հոկտեմբերյան հեղափոխությունները: Նա ծավալել ե սոցիալիստական մրցակցություն ու մասսայական հարվածայնություն: Նա վճռական հարձակում ե սկսել Խորհրդային Միության մեջ կապիտալիզմի բոլոր մնացորդների դեմ:

Տրոցկին ու նրա կողմնակիցները գտնում եյին, վոր գյուղացիության հիմնական մասսաները չեն կարող լինել սոցիալիզմի շինարարության մեջ բանվոր դասակարգի դաշնակիցները: Տրոցկու կարծիքով գյուղացիները սոցիալիզմի թշնամիներն են:

Իսկ իրոք, դուրս յեկավ, վոր չքավոր-միջակային մասսաները կարող են կառուցել սոցիալիզմ և կառուցում են սոցիալիզմ: Չքավորի յետևից միջակը կամավոր մտավ կոլխոզի մեջ: Կոլխոզնիկը դարձավ կուսակցության ու բանվոր դասակարգի հիմնական և ամուր հենարանը: Կոլխոզնիկը դարձավ հողագործության կենտրոնական դեմքը: Չքավորներն ու միջակները դուրս յեկան կուլակի դեմ: Կուլակությունը համատարած կոլեկտիվացման հիման վրա վոչնչացվում ե վորպես դասակարգ: Չքավոր-միջակային մասսաներն արմատախիլ են անում կապիտալիզմը գյուղում, կառուցում են սոցիալիստական նոր տնտեսություն:

Տրոցկին մի ժամանակ իրեն ձևացնում եր յերկրի ինդուստրացման արագ զարգացման վճռական կողմնակից: Տրոցկին փորձում եր մեղադրել կուսակցությանն այն բանի համար, վոր նա դանդաղեցնում ե յերկրի ինդուստրացումը:

Կյանքը շուտով ցույց տվեց, վոր Տրոցկին զբաղվում ե ինդուստրացման մասին շատախոսությամբ: Իսկ գործով նա դեմ ե ինդուստրացման: Յերբ կուսակցությունը կարողացավ անցնել ամբողջ ժողովրդական տնտեսության սոցիալիստական վճռական վերակառուցման, Տրոցկին դուրս յեկավ յերկրի ինդուստրացման արագ ժամկետների դեմ: Նա դուրս յեկավ կոլխոզների դեմ: Նա սկսեց պաշտպանել կուլակին:

Վերջապես՝ Տրոցկին դուրս յեկավ կուսակցության յերկաթե կարգապահության դեմ: Նրա կողմնակիցները հասան այն աստիճանին, վոր սկսեցին ազատություն պահանջել ուրիշ, մինչև անգամ բուրժուական կուսակցությունների համար:

Պրոլետարիատի դիկտատուրայի յերկրում չի կարող վոչ մի

այլ կուսակցություն լինել, բացի բոլշևիկների միասնական, ամրակուռ լենինյան կուսակցությունից: Ազատություն տալ ուրիշ կուսակցություններին, նշանակում ե ազատություն տալ բանվոր դասակարգի ու սոցիալիզմի թշնամիներին, նշանակում ե բաց թողնել հակահեղափոխության ուժերին:

«ՁԱԽԵՐԸ» ՏՐՈՑԿՈՒ ՃԱՆԱՊԱՐՀՆ ԵՆ ԲՌՆԵԼ

1930 թվին «ձախ» խոտորումնավորները թույլ տվեցին ամենակոպիտ սխալներ կոլխոզային շինարարության մեջ: Նրանք բռնեցին Տրոցկու ճանապարհը: Նրանք սպառնալիքներով եյին գյուղացիներին կոլխոզները քշել:

Կուսակցության Կենտրոնական Կոմիտեն ժամանակին զսպեց «ձախերին» և շտկեց նրանց սխալները:

Յեթե չհաղթահարեյինք «ձախ» խոտորումները, մենք չեյինք կարող կոլխոզային շինարարության մեջ ունենալ այն հաջողությունները, ինչ ունենք այժմ:

ՈՎՔԵՐ ԵՆ ԱՋԵՐԸ

Աջերը չեն ուզում ընդունել, վոր արդյունաբերության վճռական զարգացումը հանդիսանում ե ամբողջ ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման բանալին:

Նրանք չեյին ուզում ընդունել դասակարգային անհաշտ պայքարը կուլակի ու նեպմանի դեմ:

Աջերը դուրս յեկան՝ կապիտալիզմի դեմ գործած ծավալուն հարձակման դեմ:

Աջերը կարծում եյին, վոր սոցիալիզմը կարելի յե կառուցել սուս ու փուս, ինքնահոսով, առանց դասակարգային պայքարի, առանց մեր յերկրում հարձակվելու կապիտալիզմի մնացորդների դեմ:

Նրանք կարծում եյին, վոր կապիտալիզմի մնացորդներն իրենք իրենց կվոչնչանան: Նրանք ասում եյին, վոր կուլակը կներաճի սոցիալիզմի մեջ:

Սովխոզներն ու կոլխոզները սոցիալիզմ տանող լայն ճանապարհն ե: Աջերն այդ չեյին ընդունում:

ԻՆՉՈՒ ԱՋ ԹԵՔՈՒՄԸ ՆԵՐԿԱՅՈՒՄՍ ԳԼԽԱՎՈՐ ՎՏԱՆԳ Ե ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Աջերի բերանով խոսում ե կուլակը: Աջերի ճանապարհը տանում ե դեպի կապիտալիզմ: Աջերը խանգարում են կուլակի դեմ մղած պայքարին:

Ընկեր Լենինն ասում եր, վոր կուլակը նույնպիսի ատելի թշնամի յե, վորպես և կալվածատերը և կապիտալիստը: Յեթե

չջախջախվի այդ թշնամին, անխուսափելի յե վերադարձը դեպի կապիտալիզմը:

Այդ պատճառով աջ թեքումը գլխավոր վտանգն է կուսակցության մեջ:

Ահա թե ինչու կուսակցությունը վճռական ու անհաշտ պայքար է մղում աջ թեքման դեմ:

Կուսակցության 16-րդ համագումարն ասել է.—«Ով կրում է աջերի տեսակետը, նա չի կարող լինել կուսակցության անդամ»:

ՅԵՐԿԵՐԵՍԱՆԻՆԵՐԻ ՈՒ ՀԱՇՏՎՈՂԱԿԱՆՆԵՐԻ ԴԵՄ

Կուսակցության 16-րդ համագումարը մատնանշեց, վոր ջախջախված ոպորտունիստները գործադրում են մի նոր մանյովր: Խոսքով նրանք ընդունում են կուսակցության գլխավոր գծի ճըշտությունը, իսկ գործով նրանք գաղտնի պայքար են մղում կուսակցության դեմ:

Փաստերը ցույց տվեցին, վոր 16-րդ համագումարը միանգամայն ճիշտ ու ժամանակին նշեց ոպորտունիստների յերկերեսանիությունը:

Կուսակցությունը ջախջախեց յերկերեսանիներին:

Կուսակցությունը շարունակում է վճռական պայքարն աջ ոպորտունիստների, վորպես գլխավոր վտանգի դեմ: Կուսակցությունն անհաշտ պայքար է մղում «ձախ» ոպորտունիստների, ինչպես նաև դեպի ամեն տեսակ թեքումները ցույց տվող հաշտվողականների ու յերկերեսանիների դեմ:

ՄԵՐ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԸ ԹՇՆԱՄԻՆԵՐԻ ԲԱՆԱԿՈՒՄ

ԿԱՊԻՏԱԼԻԶՄԸ ԴԵՊԻ ԽՈՐՏԱԿՈՒՄ Է ԳՆՈՒՄ

ՄԵԶ ՄՈՏ ՈՒ ՆՐԱՆՑ ՄՈՏ

ԽՍՀՄ բուռն թափով աճում է սոցիալիստական տնտեսությունը: Աճում է արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը:

Կապիտալիստների մոտ աճում է քայքայումը (ճգնաժամ) և անկումը, թե՛ արդյունաբերության և թե՛ գյուղատնտեսության մեջ:

Անկումն ու ճգնաժամը տարածվել է կապիտալի բոլոր յերկրներում:

Գյուղատնտեսության և արդյունաբերության ճգնաժամը կապիտալիստական յերկրներում բարդանում է դրամական ճըգնաժամով: Դրամն ընկնում է, անարժեք է դառնում: Կենսական թանկությունն աճում է:

Բանվորն ու գյուղացին սովում են: Նրանք փող չունեն անհրաժեշտ հագուստեղենը գնելու, մինչդեռ խանութներում ու պահեստներում չափազանց շատ ապրանք կա:

Կապիտալիզմն անխուսափելիորեն դեպի խորտակում է գընում:

ՄԻԼԻՈՆԱՎՈՐ ԳՈՐԾԱԶՈՒՐԿՆԵՐ

Ճգնաժամը կապիտալիստական յերկրներում ուժեղանում է որեցոր: Ավելի շատ ապրանք է պատրաստված, քան կարող են գընել բանվորն ու գյուղացին: Բարձր գները պահելու համար, կապիտալիստները քչացնում են արտադրանքը: Ֆաբրիկներն ու գործարանները փակվում են: Աճում է գործազրկությունը: Հենց միայն Ամերիկայի Միացյալ Նահանգներում 1931 թվին կար 12 միլիոն գործազուրկ:

Ճգնաժամը տարածվել է վոչ միայն արդյունաբերության, այլ և գյուղատնտեսության մեջ: Քայքայվում են նյութապես միլիոնավոր աշխատավոր գյուղացիներ:

ԱՃՈՒՄ Է ՆՈՐ ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎՏԱՆԳԸ

Կապիտալիստների տնտեսության անկումն ուժեղացնում է նրանց մեջ մղվող պայքարը: Ուժեղանում է պայքարն ապրանքների ծախման շուկաների համար, հումույթի համար, կապիտալի արտահանման համար:

Կապիտալիստները ձգտում են նորից բաժանելու գաղութները (կապիտալիստների ձեռքով սարկացած յերկրները) և կախյալ յերկրները:

Ճգնաժամն ընդգրկել է կապիտալի յերկրների ամբողջ արդյունաբերությունը: Նա միայն չի տարածվել ռազմական արդյունաբերության վրա:

Այդ արդյունաբերությունն ամբողջ ժամանակ աճում է:

Բուրժուական պետությունները կատաղորեն սպառազինվում են:

Խաղաղության մասին խոսակցություններով կապիտալիստներն ուզում են թաքցնել նոր պատերազմների պատրաստությունները:

ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԿԱՊԻՏԱԼԻ ՅԵՐԿՐՆԵՐՈՒՄ ՈՒ ԳԱՂՈՒԹՆԵՐՈՒՄ

Տնտեսության քայքայումը սրել է դասակարգային պայքարը կապիտալի յերկրներում ու գաղութներում: Բանվորների վրա գործած ճնշումը և մասսայական գործազրկությունը դրդում են բանվորներին նոր մարտերի ընդդեմ կապիտալիստների:

Կապիտալիստական յերկրներում աճում է գործադուլների և վոստիկանության դեմ փողոցային ընդհարումների թիվը:

Մայիսի 1-ին, ոգոստոսի 1-ին, նոյեմբերի 7-ին միլիոնավոր բանվորներ, գործադուրկներ ու ճնշված գյուղացիներ փողոց են դուրս գալիս կոմունիստական կուսակցության դրոշներով:

Հեղափոխական պայքարն առանձնապես սրվում է Գերմանիայում, Ավստրիայում և Լեհաստանում:

Կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ իսպանական բանվորները դաշնակցած աշխատավոր գյուղացիության հետ շարունակում են պայքարն իսպանական խորհրդային հանրապետության համար:

Բանվորներն ավելի առավել յեն հեռանում սոցիալ-դավաճաններից ու գնում են կոմունիստների յետևից: Որինակ՝ Գերմանական պարլամենտի (բարձրագույն պետական հիմնարկ) ընտրություններում կոմունիստներին ձայն են տվել 1928 թվին 3 միլիոն 260 հազար հոգի, իսկ 1930 թվին 4 միլիոն 700 հազար հոգի:

Բուռն չափով աճում է հեղափոխական վերելքը գաղութներում: Հնդկաստանում աճում է հեղափոխական շարժումն անգլիական իմպերիալիզմի դեմ: Հնդկական պրոլետարիատը կոմկուսակցության ղեկավարությամբ ավելի ու ավելի մեծ չափով է դառնում հնդկական գյուղացիության բազմամիլիոն ճնշված մասսաների հեղափոխական առաջնորդը:

Հեղափոխական շարժումը ծավալվում է Հնդկա-Չինում, Աֆրիկայում և կապիտալիստների ձեռքով ճնշված այլ յերկրներում:

Աճում և խորանում է չինական հեղափոխությունը, Չինաստանի մի շարք ռայոնների բանվորներին և աշխատավոր գյուղացիներին հաջողվել է տապալել կալվածատերերի ու բուրժուազիայի իշխանությունը, ստեղծել Խորհրդային իշխանություն և կազմակերպել Կարմիր բանակ: Անհաջող անցան չինական բուրժուազիայի բոլոր փորձերը՝ ջախջախելու չինական Կարմիր բանակին:

ԽՍՀՄ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՀԱՐՎԱԾԱՅԻՆ ԲՐԻԳԱԴՆ Է

ԽՍՀՄ բանվոր դասակարգը համաշխարհային բանվոր դասակարգի մի մասն է: Մենք հաղթեցինք վոչ միայն ԽՍՀՄ բանվոր դասակարգի ջանքերի շնորհիվ, այլ և շնորհիվ համաշխարհային բանվոր դասակարգի աջակցության: Առանց այդ աջակցության մեզ վաղուց ջախջախած կլինեյին:

Մեր յերկիրը բոլոր յերկրների պրոլետարիատի հարվածային բրիգադն է:

Ինչո՞ւ յե ոգնել մեզ միջազգային պրոլետարիատը: Ինչո՞վ արժանացանք մենք այդ ոգնության...

Նրանով, վոր մենք ամենից առաջ մարտի նետվեցինք կապիտալիզմի դեմ: Մենք ամենից առաջ հայտարարեցինք բանվորական իշխանություն: Մենք ամենից առաջ սկսեցինք կառուցել սոցիալիզմ.:.

Մենք այնպիսի մի գործ ենք կատարում, վորը հաջողության դեպքում շուռ կտա ամբողջ աշխարհը և կազատագրի ամբողջ բանվոր դասակարգին:

Ի. ՍՏԱԼԻՆ

ԿՈՐՉԵՆ ԿԱՊԻՏԱԼԻՍՏՆԵՐՆ ՈՒ ՍՈՑԻԱԼ—ՖԱՇԻՍՏՆԵՐԸ, ՎՈՐՈՆՔ ԱՐՅՈՒՆԱԼԻ ՍՊԱՆԴ ԵՆ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ: ԿԵՑՑԵ ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀԻ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ:

ԿՈՄԻՆՏԵՐՆԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆՈՐԴՆ Է

Վոչ մի բանակ պատերազմում չի կարող կառավարվել առանց շտաբի: Փորձառու շտաբը բանակին առաջնորդում է դեպի հաղթանակ:

Միջազգային պրոլետարիատը նույնպես չի կարող կառավարվել առանց այդպիսի շտաբի:

Լենինյան շտաբը,—բոլշևիկյան կուսակցությունը,—պրոլետարիատին հասցրեց Հոկտեմբերյան հաղթանակին: Կոմկուսակցության ղեկավարությամբ ջախջախվեցին սպիտակ գվարդիականները, կուլակները և օտարերկրյա հափշտակիչները:

Կոմկուսակցության ղեկավարությամբ աճում և ամրանում է խորհրդային Միությունը—սոցիալիզմի առաջին յերկիրը:

Կապիտալի դեմ հաջող պայքար մղելու համար հարկավոր է ուժեղ հեղափոխական կուսակցություն: Միայն Կոմկուսակցությունը կարող է ապահովել պրոլետարական հեղափոխության հաղթանակն ամբողջ աշխարհում:

Աշխարհի բոլոր կոմկուսակցությունները միացված են ու կազմում են ամուր հեղափոխական կուսակցություն՝ Կոմունիստական Ինտերնացիոնալ:

Կոմինտերնը համաշխարհային հեղափոխության Լենինյան շտաբն է: Նա կազմակերպվել է 1919 թվին Վ. Ի. Լենինի ղեկավարությամբ:

Կոմինտերնը միասնական համաշխարհային Կոմունիստական կուսակցությունն է:

Կոմինտերնը պայքար է մղում բանվոր դասակարգի համար: Կոմինտերնը նպատակ է դնում իրեն—խլելու հետամնաց բանվորներին սոցիալ-դավաճանական 2-րդ Ինտերնացիոնալի ազդեցության տակից: Սոցիալ-դավաճանները, սոցիալ-ֆաշիստները,—բանվորական շարժման, պրոլետարական հեղափոխության ու Խորհրդային Միության ամենավոխերիմ թշնամիներն են: Կոմինտերնն անխնա պայքար է մղում սոցիալ-ֆաշիստների ու նրանց միության՝ 2-րդ Ինտերնացիոնալի դեմ:

Կոմինտերնը պայքարում է.—Պրոլետարիատի համաշխարհային դիկտատուրայի համար. Համաշխարհային Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության համար: Սոցիալիզմի համար: Դասակարգերի լիակատար վոչնչացման համար:

Կոմինտերնը պայքարում է պատերազմի վտանգի դեմ: Կոմինտերնը կոչ է անում բոլոր յերկրների բանվորներին միասնական ճակատով դուրս գալ պատերազմի դեմ, կապիտալիստների կողմից ԽՍՀՄ վրա զինված հարձակման սպառնալիքի դեմ:

ԽՍՀՄ համաշխարհային պրոլետարիատի հարվածային բրիգադն է:

Կարմիր Բանակը համաշխարհային հեղափոխության բանակն է:

ԿՈՄԻՆՏԵՐՆԻ ՈՒԺԵՐԸ

1928 *թվին, Կոմինտերնի* 6-*րդ կոնգրեսի (համագումարի) ժամանակ Կոմինտերնի կազմի մեջ մտնում եյին աշխարհի զանազան յերկրների* 64 *կոմունիստական կուսակցություն:* 1931 *թվին Կոմինտերնի սեկցիաների (բաժինների) թիվը հասավ* 67-*ի:*

Միայն 1929 *թվին համաշխարհային Կոմկուսակցության շարքերն են մտել* 550 *հազար նոր անդամ: Առանձնապես ուժեղ չափով աճում է Համամիութենական Կոմունիստական (բոլշևիկների) կուսակցությունն ու Կոմկուսակցությունը Գերմանիայում:* 1927 *թվին Գերմանիայում յեղել է* 150 *հազար կոմունիստ,* 1931 *թվին՝* 270 *հազար կոմունիստ:*

Աճում են նույնպես Յերիտասարդական Կոմունիստական Ինտերնացիոնալի ուժերը:

ԿՈՄԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ԿՈՄՍՈՄՈԼԻ ԹԻՎԸ ԱՄԵՆԱԳԼԽԱՎՈՐ ՅԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Առ 1-ն ապրիլի 1931 թ.

	Կոմկուս.	*Կոմսոմոլ*
ԽՍՀՄ	2.258.000	5.000.000
Գերմանիա	270.000	60.000
Չինաստան	130.000	100.000

ԻՐԵՆՑ ՍՈՑԻԱԼԻՍՏ ԱՆՎԱՆԵԼՈՎ, ՄԵՆՇԵՎԻԿՆԵՐԸ, ԵՍԵՐՆԵՐԸ ԳՈՐԾՈՎ ՍՊԻՏԱԿՆԵՐԻ ՈԳՆԱԿԱՆՆԵՐՆ ԵՆ, ԿԱԼՎԱԾԱՏԵՐԵՐԻ, ԿԱՊԻՏԱԼԻՍՏՆԵՐԻ ՈԳՆԱԿԱՆՆԵՐՆ ԵՆ:

ԼԵՆԻՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ ԽՍՀՄ ԴԵՄ

ՉՄՈՌԱՆԱԼ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎՏԱՆԳԻ ՄԱՍԻՆ

(ԿՈՄՍՈՄՈԼԻ 9-րդ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ Կ. ՅԵ. ՎՈՐՈՇԻԼՈՎԻ ԱՐՏԱՍԱՆԱԾ ՃԱՌԻՑ)

Մենք վիթխարի խնդիր ենք հանձն առել—ավերել հին աշխարհը և մաքրած տեղում կառուցել նոր մարդկային հասարակություն:

Մենք արդեն վերջացնում ենք այդ նոր հասարակության հիմքը:

Մենք ստիպված ենք աշխատելու պատերազմի մշտական սպառնալիքի տակ: Կապիտալիստների հարձակման սպառնալիքն ավելի ու ավելի յե կախվում մեզ վրա:

Համաշխարհային բուրժուազիան արշավ է պատրաստում Խորհրդային Սոցիալիստական Միության դեմ:

Սոցիալիզմի կառուցման վիթխարի աշխատանքներում մենք վոչ մի րոպե չպետք է աչքաթող անենք դրսից մեզ սպառնացող վտանգը:

ԱՃՈՒՄ Է ԿԱՊԻՏԱԼԻՍՏՆԵՐԻ ԱՏԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԴԵՊԻ ԽՍՀՄ

Խորհուրդների յերկիրը համաշխարհային հեղափոխության ամրոցն է: Մեր հաջողությունները ուժեղացնում են հեղափոխական վերելքը կապիտալի յերկրներում ու գաղութներում: Սոցիալիստական շինարարության աճումը ԽՍՀՄ-ում խարխլում է կապիտալիզմի հիմքերը:

Այդ ուժեղացնում է կապիտալիստների ատելությունը դեպի ԽՍՀՄ:

1929 թվի ամռանը կապիտալիստները հարձակվեցին մեզ վրա չինական սահմանում: Կարմիր բանակը յետ մղեց այդ հարձակումը:

1930 թվի ձմրանն ամբողջ աշխարհի կապիտալիստներն ու տերտերները Հռոմի պապի գլխավորությամբ փորձեցին ԽՍՀՄ դեմ արշավ կազմակերպել:

Այս բոլորը վկայում են այն մասին, վոր աճում է կապիտալիստների ատելությունը ԽՍՀՄ դեմ: Մենք պետք է պատրաստ լինենք հակահարված տալու:

ՄԵՐ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ Է

Մենք պատերազմ չենք ուզում: Մենք ուժեղացնում ենք առևտուրն այլ յերկրների հետ: Չնայած պատերազմի հրձիգների մարտականչերին, մեզ հաջողվել է խաղաղություն պահպանել: Մենք չթողեցինք, վոր թշնամիները մեզ պատերազմի մեջ քաշեն:

Խաղաղության այդ քաղաքականությունը մենք վարելու յենք և հետագայում բոլոր ուժերով, բոլոր միջոցներով:

Ուրիշի հողից վոչ մի թիզ մենք չենք ուզում: Բայց և մեր հողից վոչ մի վերշոկ մենք չենք տա ուրիշին:

ԽՍՀՄ ԴԵՄ ԶԻՆՎԱԾ ՀԱՐՁԱԿՈՒՄՆ ԱՅԺՄ ՎՏԱՆԳ Է ՀԱՆԴԻՍԱՆՈՒՄ ՆՐԱՆՑ ՀԱՄԱՐ, ՈՎՔԵՐ ԿՀԱՄԱՐՁԱԿՎԵՆ ԽԱԽՏԵԼ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՀԱՐՁԱԿՎԵԼ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՎՐԱ:

ԽՍՀՄ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ VI ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՎՈՐՈՇՈՒՄԻՑ

ԼԵՀԱՍՏԱՆԸ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ Է ԽՍՀՄ ԴԵՄ ՊԱՏԵՐԱԶՄԻ

Իմպերիալիստները նոր հարձակում են պատրաստում Խորհրդային Միության դեմ: Ֆրանսիայի և Անգլիայի կապիտալիստները հրահրում են մեր արևմտյան հարևաններին ԽՍՀՄ դեմ պատերազմի:

Լեհաստանը, Ռումինիան, Ֆինլանդիան, Եստոնիան ու Լատվիան միմյանց հետ ռազմական դաշինք են կնքել: Պատերազմի դեպքում նրանք միասին դուրս կգան Խորհրդային Միության

Լեհաստանն ու Ռումինիան ամենախոշոր պետություններն են մեր արևմտյան սահմանի վրա: Մեր սահմանը Լեհաստանի հետ 1400 կիլոմետր յերկարություն ունի: Լեհաստանում կա 30 միլիոն բնակիչ:

Իշխանությունը Լեհաստանում գտնվում է կալվածատերերի ու կապիտալիստների ձեռքում: Նրանք ատում են Խորհրդային Միությունը: Նրանց իշխանության գլուխ է կանգնել ԽՍՀՄ ամենավոխերիմ թշնամին՝ Պիլսուդսկին:

Նրանք հսկայական փող են ծախսում սպառազինության վրա և ուժեղ կերպով նոր հարձակում են պատրաստում Խորհրդային Միության դեմ:

Լեհաստանի բանակն ունի մոտ 303 հազար մարդ: Լեհաստանում 100 հոգի բնակչության ընկնում է մեկ զինվոր: ԽՍՀՄ մի կարմիր բանակայինն ընկնում է բնակչության 300 հոգուն:

Բանվոր դասակարգն ու ճնշված գյուղացիությունը հեղափոխական պայքար են մղում կալվածատերերի ու կապիտալիստների դեմ: Առանձնապես հաճախակի յեն գյուղացիների ապստամբությունները Արևմտյան Բելոռուսիայում և Արևմտյան Ուկրայինայում:

Բանվորների ու գյուղացիների հեղափոխական պայքարը ղեկավարում է Լեհաստանի Կոմկուսակցությունը:

Լեհական պաների դաժանությունները չեն կարող կասեցնել հեղափոխական շարժումը: Այդ շարժումն աճում է և ամրանում:

ՌՈՒՄԻՆԻԱՆ ՈՒ ՌՈՒՄԻՆԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ

Ռումինիան մեր յերկրորդ խոշոր հարևանն է արևմուտքում: Ռումինիայում ապրում է 18 միլիոն մարդ:

Իշխանությունը գտնվում է կալվածատերերի—բոյարների և կապիտալիստների ձեռքում: Իշխանության գլուխ է կանգնած թագավորը՝ Ֆրանսիայի վարձկանը:

Ռումինական բոյարներն ատում են ԽՍՀՄ: 1918 թվին նրանք օգտվեցին մեր դժվարություններից և գրավեցին Խորհրդային Բեսարաբիան: Ռումինական բոյարները դաժանորեն կեղեքում են Բեսարաբիայի աշխատավոր բնակչությանը: Կապիտալի խոշորագույն յերկրների հրահնգով Ռումինիան ուժեղ հարձակման է պատրաստվում ԽՍՀՄ դեմ:

Ռումինական բանակում կա մոտ 208 հազար հոգի: Բնակչության 86 հոգուն ընկնում է մեկ զինվոր:

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՄԱՐՏԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՅՈՒՄ

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆԸ ՄԱՐՏՈՒՄ

Ժամանակակից մարտում մասնակցում են զորքի բոլոր տեսակները, հետևակը, հրետանին, տանկերը, սավառնակները, սապյորները, հեծելազորը:

Առաջ կռվում էյին հոծ մասսաներով: Այժմ պատերազմի տեխնիկան այլ է: Ամեն մի ջոկ շարժվում է իրարից հեռու:

Մարտում այդպիսի դասավորությունը զորամասն ավելի պակաս խոցելի յէ դարձնում թշնամու գնդակներից ու ռումբերից:

Մեծ դեր է խաղում նույնպես քողարկումը, թշնամուց ծածկվելու, նրան խաբելու հմտությունը:

***

Անհատ մարտիկի նշանակությունը ժամանակակից մարտում չափազանց մեծ է:

Ամեն մի մարտիկ պետք է հայտաբերի ինքնագործունեություն, ճարտարամտություն, վճռականություն:

Պետք է ճանաչել վոչ միայն իր զենքը, այլ և իր դասակի զենքը: Հրաձիգը պետք է կարողանա փոխարինել շարքից դուրս յեկած հրամատարին:

Ամեն մի մարտիկ պետք է լինի գերազանց հրաձիգ: Պետք է կարողանալ վորոնել նշաններ ու հարվածել նրանց:

Ամեն մի մարտիկ պետք է հասկանա իր մարտական խնդիրը, իր ջոկի, իր դասակի խնդիրը:

Պետք է միշտ պատրաստ լինել փոխարինելու շարքից դուրս յեկած հրամատարին:

Դասակարգային գիտակցությունն ու քաջությունը Կարմիր բանակայինի անհրաժեշտ հատկություններն են մարտում:

Ժամանակակից մարտում հսկայական նշանակություն ունի տեխնիկան. հրետանին, տանկերը, քիմիական կռվի միջոցները: Ամեն մի Կարմիր բանակային լավ ճանաչի իր տեխնիկան: Պետք է կարողանալ համագործակցություն ստեղծել նրա հետ:

Ամեն մի Կարմիր բանակային պետք է կարողանա կռվել հակառակորդի տեխնիկայի դեմ:

ՏՈԿՈՒՆ ՅԵՂԻՐ ՄԻՆՉԵՎ ՎԵՐՋ

Կարմիր բանակի հաղթանակն իմպերիալիստների դեմ մղած մարտերում կախված կլինի ամեն մի մարտիկի քաջությունից ու տոկունությունից:

Հակառակորդը մարտում գործի կդնի բոլոր միջոցները: Նա գործելու յէ և՛ օդից, և՛ գետնից, և՛ ճակատից, և՛ թիկունքից: Նա կտարածի սուտ լուրեր, կեղծ թռուցիկներ: Նա կփորձի ահ տալ մեզ:

Կարմիր բանակայինը պետք է տոկուն լինի մինչև վերջը: Վախկոտները տեղ չունեն Կարմիր բանակում: Վախկոտները գործում են դասակարգային թշնամիների օգտին: Վախկոտների բաժինն է ընդհանուրի արհամարանքը:

Կարմիր բանակայինը չպետք է յենթարկվի վախի: Նա պետք է սիրտ տա փոքրոգի ընկերներին: Չփոթվի վոչ մի պարագայում: Չհավատա վորևէ լուրերին ու թշնամու վտանգություններին: Հաստատապես հավատա Կարմիր բանակի հաղթությանը:

Զերծվի մարտական խուճապներից: Կարմիր բանակայինները պետք է վճռական հարվածով տապալեն ու վոչնչացնեն թշնամուն:

Այդպիսին են յուրաքանչյուր կարմիր բանակայինի խնդիրները մարտում:

ՊԱՀԻՐ ՌԱԶՄԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔԸ

Հակառակորդը պատերազմում կծավալի լրտեսական մեծ գործունեություն: Լրտեսը կարող է հայտնվել ամեն տեղ և ամեն տեսակ հագուստով:

Լրտեսը կարող է հագնել Կարմիր բանակայինի հագուստ, կարող է ձևանա գյուղացի կամ բանվոր: Լրտես կարող է լինել և՛ տղամարդը և՛ կինը:

Զգուշացիր լրտեսներից: Ոչ մի խոսք Կարմիր բանակի մասին յերկաթուղիներում, զորամասի տեղավորման վայրում, քաղաքացիական մարդկանց կամ անծանոթ զինվորականների հետ:

Խիստ պահիր ռազմական գաղտնիքը:

ԿԱՏԱՐԻՐ ՀՐԱՄԱՏԱՐԻ ՀՐԱՄԱՆԸ

Մարտի հաջողությունը կախված է զորամասի կարգապահությունից: Ամեն մի կարմիր բանակային պետք է լավ պահի կարգապահությունը:

Հրամատարի հրամանը պետք է կատարել: Հրամատարը զորամասի ղեկավարն է: Նա պատասխանատու յէ մարտի հաջողության համար: Նա կարմիր բանակայինի ավագ ընկերն է ու դասակարգային յեղբայրը:

Կարմիր բանակայինը պետք է ամենից առաջ կատարի իր ամենամոտ պետի՝ ջոկի հրամատարի հրամանները:

Մեծ է ջոկի հրամատարի նշանակությունը մարտում: Նա

հաճախ լուծելու չէ մարտական բարդ խնդիր: Կարմիր բանակայինը պետք է ամենից առաջ լսի իր ջոկի հրամանատարի պատվերները:

Վճռական, համարձակ, քաջ, իր դասակարգին նվիրված հրամանատարն առաջնորդում է իր զորամասին դեպի հաղթանակ:

Կարգապահության ամեն մի խախտում կարող է մեծ կորուստների պատճառ դառնալ: Այդ պատճառով դեռ խաղաղ ժամանակ պետք է վարժվել արագ և ճիշտ կատարել հրամանատարի հրամաններն ու պատվերները:

ՅԵՂԻՐ ՈՐԻՆԱԿԵԼԻ ՅԵՎ ԳԻՏԱԿԻՑ ՄԱՐՏԻԿ

Քաղաքի ու գյուղի աշխատավոր բնակչությունը կօգնի Կարմիր բանակին դասակարգային թշնամիների դեմ մղած պայքարում:

Ամեն մի Կարմիր բանակային իր կողմից պետք է հեղափոխական որինակության ու կարգի որինակ ծառայի:

Պետք է ուշադիր և հոգատար վերաբերմունք ցույց տալ ճակատամերձ բնակչությանը: Պետք է պահպանել քաղաքացիների գույքը: Չպետք է թույլ տալ, վոր փչացվեն բանջարանոցները, այգիները, արտերը, յեթե այդ չի պահանջում մարտական խնդրի կատարումը:

Կարմիր բանակը կռվելու չէ վոչ միայն մեր հողի վրա, այլ և հակառակ կողմի յերկրում: Այնտեղ Կարմիր բանակայինը պետք է ցուցաբերի հատուկ գիտակցություն:

Մենք պետք է գործն այնպես կառուցենք, վոր առաջիկա պատերազմում հաղթանակի հասնենք «քիչ արյունով»: Մենք պետք է այդ պատերազմն անցկացնենք այն յերկրի հողի վրա, վորը թուր կբարձրացնի մեր դեմ:

ՎՈՐՈՇԻԼՈՎ.

ԿԱՐՄԻՐ ՅԵՐԴՈՒՄ

ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԽՈՍՏՈՒՄ ԲԱՆՎՈՐԱ-ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ ՄՏՆԵԼԻՍ

1. Յես, աշխատավոր ժողովրդի զավակս, Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության քաղաքացիս, ընդունում եմ բանվորական և գյուղացիական բանակի զինվորի կոչումը:

2. Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների

Միության և ամբողջ աշխարհի աշխատավորության առաջ յես պարտավորվում եմ պատվով կրել կարմիր զինվորի կոչումը, ուսումնասիրել ռազմական գործը և աչքիս լույսի պես պահպանել ժողովրդական և ռազմական գույքը փչացնելուց և հափշտակումից:

3. Յես պարտավորվում եմ խստիվ և անշեղ պահպանել հեղափոխական կարգապահությունը և առանց առարկության կատարել բանվորական և գյուղացիական կառավարության իշխանությամբ նշանակված հրամանատարների բոլոր հրամանները:

4. Յես պարտավորվում եմ հեռու մնալ և հեռու պահել ընկերներիս այն բոլոր արարքներից, վորոնք վարկաբեկում են Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության քաղաքացու արժանապատվությունը, և իմ բոլոր գործողություններն ու մտքերն ուղղել բոլոր աշխատավորների ազատագրման մեծ նպատակին:

5. Յես պարտավորվում եմ բանվորական և գյուղացիական կառավարության առաջին իսկ կոչին դուրս գալ պաշտպանելու Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունն ամեն տեսակ վտանգներից և նրա բոլոր թշնամիների վոտնձգություններից, ինչպես և Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության ժողովուրդների յեղբայրության և սոցիալիզմի գործի համար մղած պայքարում չխնայել իմ ուժերը և նույնիսկ կյանքս:

6. Յեվ յեթե յես չար մտադրությամբ հրաժարվելու լինեմ իմ այս հանդիսավոր խոստումից, թող ինձ վիճակվի ընդհանուրի ահամարանքը, և թո՛ղ պատժե՛ ինձ հեղափոխական որենքի անողոք ձեռքը:

ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ

Յելիր, ում կյանքն անիծել է,
Ով ճորտ է, մերկ է և ստրուկ:
Արդեն վառվում են մեր սրտերը,
Արդեն կռվի յենք մենք ձգտում:
Այս հին աշխարհը կը փորենք մենք
Մինչև հիմքերը և հետո
Մեր նոր աշխարհը կշինենք մենք,
Ուր վոչ ստրուկ կա, վոչ դժգոհ:
Սա յե վերջին կռիվը
Յեվ պայքարը մեր մեծ:
Ինտերնացիոնալը
Աշխարհը կը փրկե:

Կարմիր բանակ. այբբենարան—10

2270

Վոչ վոք չի տա մեր փրկությունը,
Վոչ խենթ հերոսը, վոչ արքան.
Մենք պետք ե մեր ազատությունը
Կռենք ձեռքով մեր սեփական:
Վորպեսզի շուտ փշրենք մեր լուծը
Ցեվ յետ խլենք վողջ հողը մեր—
Խփենք մուրճերը, տանք մերուժը,
Քանի յերկաթը տաք ե դեռ:

Սա յե վերջին կռիվը
Ցեվ պայքարը մեր մեծ:
Ինտերնացիոնալը
Աշխարհը կը փրկե:

Լոկ մենք, ճորտեր ու բանվորներս
Ունենք անխախտ մի իրավունք՝
Ասել, վոր հողը մե՛րն ե, մերն ե,
Կորչի հարուստը և տզրուկ:
Ցեվ յերբ պայթի մեծ փոթորիկը,
Ցեվ կուշտ շները չքանան,
Նորից յերկիրը և յերկինքը
Մերն են ու մերը կմնան:

Սա յե վերջին կռիվը
Ցեվ պայքարը մեր մեծ:
Ինտերնացիոնալը
Աշխարհը կը փրկե:

ՊԵՏ. ՀԱՆՐ. ... Гос. Публ. ... ՀԱՅԱՍՏԱՆԻ ... ПРА ... им. А. М... Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0249351

Գինը 1 ռուբ.

КРАСНОАРМЕЕЦ
Букварь и первая книга для кр-цев
и допризывников

Госиздат ССР Армении
Эривань—1932